

ՀԱՅԻ ՀՈՒՅԱՆԱԿ

ՀԱՅ ՀՐԵ ԴԱՄԱՆ
ԵՎ ԵՐԱ
ՊԱՅՄԱՆԱՉԵՐԸ

ՀԱՅԻ ՀՈՒՅԱՆԱԿ ՊԱՅՄԱՆԱՉԵՐԸ

3x200

է պարերգական դրամայի տիպաբանությունը, և դա մեզ ստիպում է չական նշանակություն տալ առաջին հայացքից երկրորդական թվացող մոտիվների ու խորհրդանիշների։ Դրանք անուղղակի հիշեցումներ են, նշաններ, որ մզում են հետագարձ անդրադարձումների։

Ահա այդ «Հիշեցումներից» մեկը

የኢትዮጵያ ቤቶች በዚህ የ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԵՐԸ

Հին և միջնադարյան թատրոնը հիմնականում ուսումնակրվել է որպես անհետացած երևույթ: Իրավիճակն սկզբունքորեն այդպես է: Հեթանոսական ժամանակներից միջնադար հասած աշխարհիկ մշակույթի այս գրսնորումը զանացել ենք ըմբռնել լեզվական փաստերի և մատենագրական նեգատիվ վկայությունների միջոցով: Բայց թատրոնը նաև կենդանի ավանդություն է, իր հետքերը թողնում է ժողովրդական կենցաղում և տալիս արձագանքներ, խամրող արձագանքներ, որոնք կարող են շրնկալվել: Հասարակական շփման ձևերի փոփոխությունը բնականորեն դուրս է վանում Հին ծեսերն ու խաղերը, և դրա հետ միաժամանակ խամրում ու չեզոքանում են ժողովրդական դրամայի հետքերը: Այնուամենայնիվ, կան դիտված փաստեր, որոնք լույս են սփռում միջնադարյան գրավոր վկայությունների վրա, ստիպում վերընթեռնել կարծես թե հայտնի ու վերծանված փաստերը, գտնել անտեսանելի առնչություններ: Պարզվում է (այդպես էլ պետք է լինի), որ Հին թատրոնի ամենակենսունակ գիծը ժողովրդականն է, և այն, ինչ տեսնում ենք ծիսային պայմանաձևերում, քանա՞յուսական հիմքեր ունի, արտահայտվում է նաև որպես խաղալին պայմանաձև:

Նոր ժամանակները շատ բան են փոխել ժողովրդական խաղերում՝ թեմաներ, ձևեր, մոտիվներ, խոսքեր: Բայց էականը տիպաբանությունն է, սիմվոլիկան, խաղային համակարգը՝ բաներ, որ իսկապես հին են և չէին կարող հորինվել նոր ժամանակներում: Կա ժողովրդական խաղերի մի տեսակ, որ կրում

«ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱԶ»

Բարեկենդանի տոնին երգվող աշխարհիկ և ժողովրդական երգերի շարքում իմ ուշադրությունը գրավեց Վ. Տերլան և Արմեն Մինասյանի գրառած համբերդի ժողովրդական մի երգ. Մինասյանի գրառած համբերդի ժողովրդական մի երգ.

Գեշ չպանի մեր էծուն,
Մեռնիմ ևս քը մեր էծուն.
Ու մի ունի ճարտպառն,
Գրկեմ տանիմ ժամի տուն,
Մատաղ անհմ աստծուն,
Բա՛ ու բրիչս վերի տուն,
Կաշ զավազան իմ զլուուն:


Թվում է, շատ միամիտ ու պարզունակ երգ է, ինչպես և
Բարեկենդանի խրախճանքներում տնից տուն շրջող այժմա-
մարդու պատկերը (նկ. 10): Բայց արդեն համոզվել ենք, որ
բանահյուսության մեջ պատահական նշաններ չկան: Այժի
թեման և այժմամարդը հին խորհրդանիշեր են և ամենասերտ
առնչություններ ունեն հին դրամայի հետ: Այժի խորհրդա-
նիշը շրջանառում է համաշխարհային բանահյուսության
մեջ: Եթե շխուսափենք հապճեպ եղրակացություններից, պետք
է ասենք, որ մեր առջև խամրած մի հիշողություն է հին «նո-
խագերգությունից»: Այս բարին դիմում ենք պայմանաբար
առայժմ որոշ զուգորդումների մղելու նպատակով, թեպետ
խնդիրն ալդքան էլ պարզ չէ: Գրականությունից հայտնի է
նոխազյան գոհարերության կապը հին հունական դրամայի
հետ: Բայց շշտապենք ամեն ինչ բխեցնել հայտնի իրավի-
ճակներից, շփնտրենք ուղիղ կապեր: Նոխազը, որպես պաշ-

վ. Յովյան, Հայ ժողովրդական խաղեր, Տ. 1, էջ 136:

տամութքային խորհրդանիշ, հայոց հին հավատալիքներում անորոշ է և լավ չի ուսումնասիրված: Ալիշանը այս խորհրդանիշին ոչ մի նշանակություն չի տալիս, թեպետ հիմքեր կան նշանակություն տալու: Ստիպված ենք որոշ շափով զուրս



Նկ. 10 Այծեմարդը ժողովրդական խաղերում ըստ Հ. Քաջակյանի:



Նկ. 11 Այծեմարդը «Դեմքա» խաղում ըստ Վ. Խոջաբենյանի:

գալ հայ բանահյուսության ու բանագիտության կոնտեքստից²:

Հին հունական դրամայի պատմության շարադրանքներում մոտավոր կերպով նկարագրված է ատտիկյան ողբերգության ծիսային նախերգանքը՝ խորեստիսների երգով և նոխազի զոհաբերությամբ: Դա մեռնող ու հարություն առնող հին թրակիական աստվածության՝ Դիոնիսոսի (Բաքոս) պատարագն է: Տաճարից հրապարակ է բերվում կուռքը, մորթվում է նոխազը, զոհի արլունը հեղվում է կուռքին, հանգում է նոխազը, մի մասը ցողվում է այդ արյունով, այսինքն հաղորդվում է, և սկսվում է նոխազերգությունը: Դրամայի ծիսային հիմքերի հետազոտումը նիկոլայ Եվրեինովին բերել է այն մտքին, թե այծակերպ ոգու պաշտամունքը Բալկանյան թերակղզի է մտել Հրեաների բիբլիական նախականյան թերակղզից՝ Պաղեստինից: Վկայակոչվում են Հրեական Կայությունում՝ Եվրեինովի պնդումը, որ նոխազյան զոհակարությունն սկիզբ է առնում անպայման Հրեական աշխարհից, ինդրի պակաս էական կողմն է: Բայց նա ճշտում է երկու հասկացություն՝ քավություն և քողովրյուն՝ զոհաբերվող և ազատ արձակվող նոխազ. մեկը տրվում է ԵՀովային, մյուսը անապատի ոգուն՝ Ազագելին: Դրանով հատկանը վում է ոչ միայն հին Հրեաների կրօնական գիտակցության երկվությունը, այլև նոխազի, որպես ծիսական խորհրդանիշի հակասականությունը: Այս երկվության հետքերը երևում են հին կտակարանի Աւտական գրքում և Եփրեմ Ասորու մեկնությունում³: Եվրեինովը պարզում է նաև իր հիմնամյուս դուրս, բայց մեզ համար էական մի կետ՝ նոկան խողոից դուրս, բայց մեզ համար էական մի կետ՝ նոխովի զոհաբերության անմիջական կապը հին դրամայի հետ: Դրան կանդրագառնանք իր տեղում: Առայժմ պետք է հետ: Դրան կանդրագառնանք իր տեղում: Առայժմ պետք է հետ: Դրան կանդրագառնանք իր տեղում: Առայժմ պետք է հետ:

2 Այս խնդրին մանրամասնորեն անդրադարձել եմ «Թատրոնը միշնադարյան Հայաստանում» աշխատությունում (էջ 144—181), բայց կարիք է զգացվում վերանայել որոշ կետեր և Հարցը կոնկրետացնել:

3 Հ. Եթրենօս, Ազալ և Ճնեն, աշխատանք 1924, էջ 222—223:

4 Ա. Եփրեմի Մատենագրութիւնք, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 222—223:

մողթն է, խճճված է միջագետյան ու փոքրասիական ժողովուրդների ծեսերի ու հավատալիքների լարիրինթոսում⁵ և մինչև Բալկաններ հասնելը անցնում է Հայկական բարձրավանդակով:

Այժի ոճավորված պատկերը հայտնի է Գեղամա լեռների վաղ բրոնզեդարյան ժայռապատկերներից, ուրարտական մշակույթի փաստերից: Ինչպես նկատել է Արքոնցը, ուրարտական որոշ արձանագրություններում շեշտված է այժի գոհաբերության փաստը խալդյան տաճարներում՝ գինով գոհաբերության կողքին: Ի դեպ, խաղողի խորհրդանշիցն էլ մերձ է Մուսասիրի տաճարին: Այս էլ միանգամայն տրամաբանական է: Մուսասիրի տաճարը հեռու չէր նոյն նահապետի այցիներից: Եվ կա մի բառ՝ ուրսիւ, որ նշանակում է «այծեր գոհաբերել»⁶: Մեզ ավելի մոտ ու հասկանալի է Արքաթանդեղոսի վկայությունը, այն է՝ Հայաստանի ութ մեջյաններում մատուցվող սրբադան զոհերից մեկը եղել է պահտակ նոխազը⁷: Քրիստոնեական շրջանում հեթանոսական բոլոր զոհերը մոռացվել են, ավելի ճիշտ՝ մերժվել, և մնացել է մեկը՝ խոյը, որպես նոր աստվածության միակ կենդանակերպ խորհրդանշից: Բայց հայտնի չէ, թե ինչ պատահականությամբ աստծո որդու տան մոտակայքում հայտնվել է նաև նոխազը՝ հեթանոսական պաշտամունքային խորհրդանշիշերից գուցե ամենահինը: Քրիստոնեական պաշտոնական ծիսակարգում նոխազը ոչ մի դեր չունի, և գուցե այդ պատճառով էլ հայ բանագիտության մեջ այս խորհրդանշին նշնչին նշանակություն է տրվում: Նոխազի գոհաբերությունը, թվում է, քրիստոնեական իմաստ է ստացել անպաշտուն ճանապարհով, գուցե մի հին ավանդության ուժով, որպես ժողովրդական կրոնասիրության որոնելում:

Հայ ժողովրդական հավատալիքներում այժմ երկիմաստ ու հակասական էակ է։ Անանիա Շիրակացու՝ կենդանակերպերի մեկնությունում կարդում ենք, թե Այժմեղյուրի տակ

⁵ *Легенды и мифы древнего Двуречия*, изд. «Наука», М., 1965, с. 103—104.

⁶ Ե. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 229:

⁷ Ազարանգեղոս, նշվ. Հրատ., էջ 18:

ծնվողը «խոհեմ, գոռող և դաւաճան լինի»⁸: Ժողովրդական ավանդությունն ասում է, որ այժին ստեղծել է սատանան, բայց նրան հոգի է տվել աստված, և այժը սատանային չի ենթարկվում, ինթարկվում է աստծուն⁹: Այժը նույնանում է երբեմն ձախության ու հակառակվելու գաղափարին: Ղազար Փարագեցու «Պատմությունում» այսպիսի տողեր կան. «այլք ընդ դասակա այծեաց ձախակողմեան հալորդեալք՝ գնային անդարձութեամբ լի խաւարն արտաքին»¹⁰: Բոլոր տվյալներով այժը հակասական ու երկիմաստ խորհրդանիշ է՝ կրում է բարին ու շարը, աստծուն և սատանային, խոհեմությունն ու դավաճանությունը: Սակավակյաց կենդանու մորթին, որով «պճնվել» է միջնադարյան անապատականների մի խավը, նշանակել է հեզնանք և ինքնազրկում, և այստեղ էամա թե ակամա ընթերցվում է դիտնիսոսյան արարողության այծազգեստ պարավորների՝ սատիրների կամ սատիրական խորի մետամորֆովը: Այս բոլոր դեպքերում այժակերպությունը հանդես է գալիս որպես լքելու, դավաճանելու, հեռանալու, հակադրվելու նշան: Անապատականը հեռավոր մի աղերս ունի Դիտնիսոսի շքախմբի Պան աստծո հետ, որ ծնվել էր այժի ստքերով ու եղջյուրներով և հեռացել էր Օլիմպոսից, գնացել անտառներն ու լեռները՝ նվագելու իր սրինգը բնության ազատ էակների համար: Սա նույն Սատիրն է, Ֆավնը, Սիլվանուսը, որին հին հայերն անվանել են Պայչ¹¹: Սա նույնպես հակասական խորհրդանիշ է: Ժողովրդական հավատալիքներում հոգեառ հերշտակը ներկայանում է նոխազոտն ու նոխազաղեմ: Բայց այդ նույն կերպարան-քը հեքիաթներում երևում է այլ նշանակությամբ: Այժը հայքական հեքիաթում մարդկանցից թաքնված բարության ոգին է, որ կերպարում է անտառում թողնված մանուկներին, որոնք հետո դառնում են հերոսներ կամ արդար թագավորներ: Խոկ առակներում այժը քմահաճության ու հակառակու-

Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տռմար, Երևան, 1940,

Հմմտ. Ա. Ղանալանյան, Ավանդապատռա, Երևան, 1908, էջ 280:

Օ Ղազարայ Փարպեցայ Պատմովին Հայոց, Թիֆլիս, 1908, էջ հա-

11 Եզերիկ Կողբացի, նշվ. Հրատ., էջ 69։ Նաև Ա. Օլշաս, Հրատ.

թյան ոգին է: Գետակի նեղիկ կամրջի վրա դեմ դիմաց հանդիպող երկու այժերի հինավորց առակը խորիմաստ է: Դրամատիկական իրադրության ամենապարզ ու ճշգրիտ պայմանաձևն է սա: Հայտնի են «այժերը բերել» (բարկացնել), «այժերը քշել» (բարկությունը մեղմել), «այժերով մարդ» (բժա՞ած մարդ) արտահայտությունները, որոնք նաև համաելքոպական տարածում ունեն:

Թվում է, այնուամենայնիվ, որ այժի, որպես հակառակության ոգու, խորհրդանիշն ամենից ավելի տարածված է հայ բանահյուսության մեջ: Փակստոս Բուզանդի «Պատմության» մեջ բերված է մի գրուց (գուցե և պատմական փաստ), որտեղ կոկնվում է վերը հիշված առակի իրադրությունը: «Ապա եղեւ դէպ օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեց զնա, և ոչ ինչ շուրս զնէր նմա. այլ և անարդանս ևս զնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն ւեզու՝ թէ «Այժից Հայոց արքայ, եկ նիստ ի խրձան խոտոյ ի վերայ»: Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղուցն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ»¹²; Ենթադրություն կա, որ այստեղ ակնարկվում է Հայերի այժապաշտությունը¹³, Բայց ավանդությունն ուրիշ շերտ էլ ունի: Ախոռապետը այժի անուն տալով, ըստ ժողովրդական հավատալիքի, կանչել է հակառակության ողոնմ՝ բացահայտել Արշակի դիրքը Շապուհի պալատում: Եվ բախումը, որ պետք է տեղի ունենար Շապուհի ու Արշակի միջև ինչուրքի սրահում, սկսվում է այստեղ «այժից պատարագով»: Եթե նույն տրամաբանությամբ մեկնենք զրուցի շարունակու-

¹² Փակստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, Երևան, 1987 (4. ԺԶ), էջ 196.

¹³ Վ. Թրայան, Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ:

թյունը, կտեսնենք, որ Շապուհը հասկանում է «պատարագի» իմաստը և, պարզեաւրելով վասակին, ոչ այնքան նրա այրասիրությունն է գովում, որքան հասկացնում է Արշակին, թե իրենց հակառակությունը լուծված է: Ախոռապետը դարձել էր իսկապես բավության նոխազ:

Վիպական այս հատվածը հուշում է, որ վաղ միջնադարի կենցաղի ու բանահյուսության մեջ այժի խորհրդանիշը պահպանել էր իմաստը: Բայց ի՞նչ գործ ուներ այձր եկեղեցու գոների մոտ: Դրա պատասխանը տալիս է կուսավորչի տեսիլքը. «Եւ տեսի հօտս անթիւս այծեաց ի գոյն սկսութեան, որք անցեալը ընդ զուրն՝ յօդիս դարձան. և զգոյնս իւրեանց ի կերպարանս սպիտակութեամ շրջեցին, և լուսակիզն ասրն փայլէր առ հասարակ, մինչև ճառագայթ, հատանէին ի նոցանէն»¹⁴: Բացատրվում է նաև այս կերպարանափոխության իմաստը. «Եղիսեսէ աղբիւր մկրտութեան. ի թողութիւն քաւութեան բազում մեղաւորաց»¹⁵: Ամեն ինչ պարզ է. նոխազը Քրիստոսի կենդանակերպ խորհրդանիշի՝ պառան սախատիպն է, որ նշանակում է, թե զառը մըկրտված նոխազ է: Հասկանալի է, թե որտեղից կարող էր ծագել «այժից պատարագ» հասկացությունը¹⁶: Իսկ Հովհաննես Քրիստոնակերտցու երկում կարում ենք նոխազ զուրաբերողի աղոթքը. «Յիսոսս Քրիստոս, յոյս իմ, ուխտաւոր գուլով իմ յայսմէիկ տօնի մեծի նահատակին Գէորգայ՝ նոխազ պատարագ և վասն անուան քո»¹⁷: Աղոթքի շարունակությունը սովորական ու ծանոթ է, նոր երանդ շի/ավելացնում մեր պատկերացմանը: Բայց ոչ մի կամկած, որ սուրբ Գևորգի թիկունքին կանգնած է Հեթանոսական բարձրակարգ մի աստվածություն: Ենթադրվում է, որ զա վիշապաքաղ վահագն է: Գուցե պատմահական չէ արևի ճառագայթները հաշագն է: Այստեղ, եթե ուշադիր կարդանք տեսմիքի մեկնությունը,

¹⁴ Աղաքանգեղոս, նշվ. հրատ., էջ 385:

¹⁵ Նույն տեղում, էջ 391:

¹⁶ Գրիգորի Արշակունյաց քորհպիսկոպոսի Մեկնութիւն ընթեցուածոց, Վենետիկ, 1864, էջ:

¹⁷ Հովհաննես կաթողիկոսի Պատմութիւն, Երևանակամ, 1867, էջ 157:

կարծես թուլ մի ակնարկ կա, ավելի ճիշտ ենթատեքստում ընթերցվող մի գաղափար՝ հեթանոս աստվածության փոխակերպումը քրիստոնեական սրբի: Այժերի փոխակերպումը լուսագեղմ ոչխարների դարձի սիմվոլիկան է, լուսակեզ գեղմը փրկության նշանը: Ապոլոն Հռոդոսացու «Արգոնավտիկայից» հայտնի է ոսկե գեղմը, որպես Հերմես աստծո շնորհը և փրկության խորհրդանիշ:

Ինչպես տեսնում ենք, սիմվոլիկան զուտ քրիստոնեական չէ, արմատները հին են: Ուրեմն, Տրդատի զոհաբերած սպիտակ նոխազը, որ ակնարկում է Ազաթանգեղոսը, հեռուն է տանում և կարող է մոտենալ արևի ու կայծակի պաշտամունքին: Հնարավոր է, որ այստեղ ուրիշ գաղափար էլ լինի¹⁸: Մինչև օրս էլ ժողովրդի մեջ պահպանվել է ննչեցյալի առաջին «սուրբ Խաչին» նրա ընտանիքին ճերմակ ու նվիրելու սովորությունը: Ուշը նվիրվում է զոհաբերության համար, և այդ ժեսն ստացել է ուղոց կամ ուղնոց անունը¹⁹: Մորթում են սպիտակ ուղը ու եփում թոնրում: Զոհաբերության այս ձևն էլ ասում է, որ այստեղ մի մոռացված աստվածություն կա, մի շատ հին գաղափար: Թոնրի խորհրդանիշը, որին մասսամբ ծանոթ ենք, հեռուն է տանում, մոտեցնում թերևս այն ժամանակներին, երբ վրիժառության, պատժի ու զոհաբերության գաղափարները տարանջատված չեն: Մեզ արդեն ծանոթ են շղթայվածի այրը, Լուսավորչի բանալ, նաև... թափորապետի գերեզմանը: Բայց կարդանք ժողովրդական մի այլ ավանդություն:

«Կոսապաշտ թագավոր Բելը մեծ զորքով կոփէ է եկել Հայոց թագավորի վրա: Սա սպանել է Բելին, հանել նեմրութ սարի գագաթը և այնտեղ թոնրի շինելով մեջը կախել, վառել է: Աստծու հրամանով կրակը զուր է դարձել, մոխիրը

¹⁸ Տեսակետ կա, որ նոխազը զոհաբերվել է անդրերկրայքի աստվածությանը (Վ. Բդոյան, Սրբ. Լիսիցյան): Այս տեսակետը, որ իր տրամաբանությունը ունի, փորձել եմ հիմնավորել («Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 162—166): Նոր ենթադրությամբ կամ հիմնավորումով նախկինը չի բացառվում, քանի որ նույն կենդանին կարող էր զոհաբերվել մի քանի աստվածությունների:

¹⁹ Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, էջ 177:

իշեցրել հողի տակը, որ քամին փոշին շտանի²⁰: Գիշաբանական պատկերացումների մի բարդ կապակցություն կա այստեղ: Երեք հազար տարվա մոխիր է նստած այս թոնրի հատակին: Բելը, որ միջագետյան հնագույն աստվածություններից մեկի՝ օդի աստծո՝ Էնլիլի (ըստ Շումերական վերսիայի, համաշխարհային ջրհեղեղի հեղինակի) մետամորֆոզն է և բարելացիների համար դարձել է երկրի ընընդունություն աստված²¹, այստեղ, որպես շար ուժ, այրվում է քաշության փոսի մեջ, այնպիս, որ միախառնվի իր երկրային տարերքին (կրակ, հող, ջուր), որպեսզի բնության շորորորդ տարրը՝ օդը նրան նորից ծնունդ չտա: Այստեղ միատեղ են հանդես գալիս վրիժառության, պատժի, զոհաբերության ու ջավալության գաղափարները: Պատժվողը չի ունշացվում, այլ միախառնվում է իր մայր ընդերքին, հեռացվում իրեն ծնունդ տվող հորից՝ օդից: Պատիճը գանում է քավություն, որ արտահայտված է կրակը ջրի փոխարկվելու խորհրդապատկերով: Լուսավորչի վարդապետության մեջ կա նման մի պատկեր. «առեալ զկենդանի հուր պատարագացն տարեալ քահանայիցն արելին ի զրոյորն, և հուրն ի չուր դարձավ. և յետ ամացն եօթանասնից ի դարձին երթեալ առին զջուրն և բերին արկին զողակիզօքն, իբրև շինեցաւ տաճարն՝ և չուրն դարձաւ ի բնութիւն հրոյ»²²: Այս խորհրդապատկերը ժողովարձաւ ի ամոթանականից է ամոթահար իրիցկինն ընկնում է թոնիրը, թոնրի կրակը փոխարկվում է ջրի, իսկ կինը դառնում է ձուկ²³: Թողության գաղափարն է գործում: Պատշաճություն է ձուկ²⁴: Թողության ավագանի գաղափարները մերձենում են նաև Դանատեի «Դժոխքի» ութերորդ պարունակում: Այն կրակի փոսերը, ուր գլխիվայր այրվում են մեղավորները. Դանատեն համեմատում է (անհիմն չի կարող լինել այս հայության մեջ ամենալավագան պատկերը).

²⁰ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 73:

²¹ Դ. Բեծեր, նշվ. աշխ., էջ 15, 17, 98, 118:

²² Ա. Արանգելյան, նշվ. Քրատ. (544), էջ 273:

²³ Գր. Ղափանցյան, Արա Գևորգիի պաշտամունքը, էջ 14—15: Նահ:

Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 95:

մեմատությունը) «Սուրբ Հովհաննես» եկեղեցու մկրտության ավազանների հետ²⁴:

Մեր ավանդության մեջ թոնը խորհրդանիշը համատեղվում է լեռան գագաթի հետ: Մոտենո՞ւմ ենք շղթայվածի առասպելին, դժվար է ասել: Բայց լեռան գագաթը այն խորհրդավոր վայրն է, իսքիլեսի ասած «սրբազան անապատը», ուր պատիժ կամ քավություն են կրում ըմբոստացած ուժերը, «քավության նոխազները»: Մենք արդեն ծանոթ ենք նրանց: Հին հրեաների առասպելախառն պատմության մեջ էլ լեռան գագաթը սրբազան քավության վայր է: «Առ զու զորդիդ քո սիրելի գոր սիրեցեր՝ զիսահակ, — ասում է Աստված Աքրածին, — եւ զնա զու յերկիր բարձր, եւ հանցես զդա անդ յողակեզ ի վերայ միոյ լեռանց...» (Ծնունդ, Խթ, 2)²⁵: Զոհի և քավության այս պատկերացումը կրկնվում է Նոր կտակարանում՝ Քրիստոսի Գողգոթա բարձրանալով («Ելանքը ի տեղին որ անունեալ էր Գագաթան, եւ կոչէր երրայեցերէն Գողգոթա»— Յովին., ԺԹ, 17): Այս խորհրդանիշի հին տարբերակներից մեկն է երուսաղեմից տասներկու մղոն հեռու գտնվող Յոկ լեռան գագաթը, որտեղից հին հրեաները անդունդն են նետել անապատի ոգուն՝ Ազագելին զոհաբերվող նոխազը²⁶:

Լեռան բարձունքի և երկրի խորքում կրակի ջրի փոխարկվելու խորհրդապատկերում միատեղվում են պատժի ու քավության գաղափարները: Դրանք երբեմն երեսում են մեկը մյուսի շարունակություն, թեպետ անցումը բարդ ու երկար էր Բարոյական գիտակցությունը մութ ու մոլոր ուղիներ էր անցնելու, նախքան հանգեր արդար զոհի գաղափարին: Այսպիսով, «քավության նոխազի» գաղափարը հանդում է Հունա-

24 Դանսե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն, նշվ. Հրատ., էջ 102—103:

25 Գիրք ծննդոց, քննական բնագիր, աշխ. Ա. Զելթունյանի, Երևան, 1985, էջ 238:

26 Հ. Եօրեսիոս, նշվ. աշխ., էջ 46:

կան նոխազերգությանը (չքչշաճէց)²⁷ : Հունական ողբերգության բոլոր հերոսները «մեր առջև հանդես են գալիս որպես պոետականացված-իդեալականացված «քավության նոխազներ»²⁸: Այս է Եվրեինովի ամենածշմարիտ եպրակացությունը, որին հրեական բանահյուսությունը գրեթե նյութ չի տվել: Եթե նկատի շառնենք Արքահամի զոհաբերությունը՝ Հին կտակարանից, որ էպիկական ավանդություն է: Ենիկով քավության գաղափարի ծիսային ակունքներից, Եվրեինովի տեսակետին նոր գույն է տալիս 0. Արանովսկայան: «Ժամանակակին, — գրում է նա, — հունական ողբերգությունն ընդունված էր անվանել ճակատազրի ողբերգություն: Մենք զա կանվական վեցական գաղափարի ողբերգություն»²⁹: Նուրբ և խոր դիտողություն է այս: Վերջնականապես համոզվում ենք, որ դրամայի ամենաստույգ պայմանաձեր դատն է, իր ծիսային և ժողովողական-խաղային դրսերումներով, և դրամատիկական զգացմունքի հյուկեն (ատոմը) պետք է որոնել տարբերակն ապացուածի հիշտ՝ արցունահեղության, որը ուն զոհաբերության, ապելի հիշտ՝ արցունահեղության, որպէս պատժի թեկուզ իմաստափոխված վեպիս անխողության ու պատժի թեկուզ իմաստափոխված վերապրուկներում: Որպեսզի զոհաբերությունը դրամատիկական իմաստ ստանա, պետք է հանցանքի, պատասխանատրվության ու պատժի իրավիճակ լինի: Զոհաբերության հնագույն ձևերում զա եղել է: Հունաստանում Զեսի տաճարում գույն ձևերու արարողությունը ներկայացրել է դատ՝ երեք ցուլ զոհաբերելու արարողությունը մարդու արարողությունը՝ ներկայացրել է դատիքային փուլերով: Ցուլին զոհասեղանի վրա մորթողը արարողության մասնակիցների ներկայացրել է ներկայացրել արարողության մասնակիցների սուրյեկտու» Հակե պայմանական դատի, և ի վերջո «Հանցանքի սուրյեկտու» Հակե պայմանական դատի, պատժի ժամանակը ենթարկվել է պատժի՝ ժայռի բարձունքից նաշված դանակը ենթարկվել է պատժի՝ ժայռի բարձունքից

27 Նոխազերգութիւն բարը վկայված է 5-րդ դարից՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» թարգմանությունում և ունի գուտ գրքային ձագություն: Հունարեն դրայն ու բարի իմաստային-կառուցվածքային պատճենումն է (Հմմտ. «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 52—53):

28 Հ. Եօրեսիոս, նշվ. աշխ., էջ 92:

29 Օ. Արանովսկայ, О фольклорных источах понятия «катарсис», сб. «Фольклор и этнография», изд. «Наука», М., 1975, с. 65. Հեղինակը չի նշում իր եպրակացության աղբյուրը՝ Եվրեինովի աշխատությունը:

նետվել է ծովը³⁰: Շատ նման է նոխաղի հին հրեական գուհաբեռությանը:

«Քավության նոխաղի» գաղափարն այնքան հին է Հայաստանում, որ հիմքեր ունենք դա համարելու շատ ծեսերի ու դրամատիկական խաղերի աշխարհայցքային ակունքը Ամեն մի զոհաբերություն ինքնին դրամատիկական պահ է՝ կրում է երկյուղի ու կարեկցության գաղափարը: Զոհաբերության փաստում ամենաակներն սարսափի խորհրդանիշն է՝ կենդանի արյունը, որի հեղումով մարդիկ կանինել են աստվածների գայրույթը և քավել իրենց երկյուղը անխուսափելի՝ մահվան հանդեպ: Այս արարողության և առարկայական տպավորությունը, և խորհրդապաշտական իմաստը կազմում են կաարսիս հասկացության բարդ կոմպլեքսը, իր ծիսական-բանահյուսական ավանդների բազմաշերտ նստվածքով:

Հեթանոսական Հայաստանի մեջաններում անխորհուրդ արյուն չէր հեղվում: Եղել են աղոթքներ ու երգեր, որ մեզ չեն հասել: Բայց դրանց խամրած հիշողությունը կա: Դրանով սկսեցինք: Նոխաղի զոհաբերությունը հեռավոր մի աղերս ունի Վահագնի պաշտամունքի հետ: Իսկ ի՞նչ կենդանի էր զոհաբերվում Շիդարի «առասպել տօնում», եթե այդտեղ կար (և չէր կարող վիճել) դատաքննական պահ: Դժվար է անմիշապես պատասխանել այս հարցին: Բայց Շիդարը «քավության նոխաղի» բոլոր գծերն ունի: Մենք էլ հիմքեր ունենք ժողովրդական դրամայի հիմքում տիսնելու նախ և առաջ դատի գաղափարը:

ՊԱՐԵՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Պարերդական դրամայի առաջին ակներն հիշատակումը հայոց լեզվով գտնում ենք Հակոբ Մծբնացու անունով ավանդված «Զգոն» կոչող գրքում, որի հեղինակն է ասորի Աֆրահատը: Ակնարկվում է եղիպտական կամ միջագետյան

հնագույն մի ծես՝ շրջանակենտրոն պար երինչի գլուխ պատկերող կուռքի շուրջը՝ «մեծախոսմբ ժողովօք խաղացին, վերտեցին և շահս արարին առաջի որթազլիսոյն»³¹: Նկարագրվող երեսույթն օտար աշխարհից է, բայց մեղ հետաքրքրում է լեզվական պատկերը: «Զգոնը» ձեռքից չենք, գրքից զրիշ անցած գրական հուշարձան է, առեղջվածներով լի, ինչպես բոլոր վաղ քրիստոնեական գրքերը: Համենայն դեպս, գրված է IV դարում, թարգմանված է հայերեն V դարում: Անգլիացի ասորագետ Վ. Բայտը պարզել է շատ հանգամանքները³², Երվանդ Տեր-Մինասյանը վերջնականապես ճշտել է իրավիճակը³³, լեզվական համարժեքները ստուգված են³⁴, և կարող ենք դատել մեղ հետաքրքրող առարկայի շուրջը:

Հայտնի է, որ հայոց հին թարգմանություններում միշտ չէ, որ բառերը վերաբաղրվել են ըստ կառուցվածքի: ոչ սակավ գտնվել են նրանց տեղական առարկայական արժեքները: Աստվածաշնչի թարգմանության մեջ դա ակները է: Եվ այստեղ էլ, քանի որ գործ ունենք հին թարգմանության հետ, բառերի տակ փնտրում ենք բնաշխարհիկ երևույթներ: Եղիպտական «որթազլիքը» երինջազլուխ կուռքը կարող է մեջ շնչառաքրել, բայց «խաղացին, վերտեցին» բառերում պարզ երևում է շրջանակենտրոն գործողությունը: Խաղալ բառի հին հայերեն իմաստը, որ նույն է և ժողովրդական բառապաշտում, հայտնի է. նշանակում է երգել և պարել: Հետաքրքրիցը վերաբարում է, որ նշանակում է «ոլորեալ, նիւտեալ, քըրքիրը վերաբարում է, որ նշանակում է «ոլորեալ, նիւտեալ, շըրամանեալ, շըրայագործ»³⁵: Հազվագյուտ բառերի սիրաշարամանեալ, շըրայագործ»³⁵: Հազվագյուտ բառերու մեղ հետաքրքրող առարկան ազար Գրիգոր Մագիստրոսը մեղ հետաքրքրող առարկան ազ-

31 Գրքը որ կոչի Զգոն, արարեալ Ս. Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մծբին քաղաքի, Կ. Պոլիս, 1824, էջ 241:

32 Բ. Բայտ, Կրաtkий очерк сирийской литературы, СПб., 1902.

33 Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ,

Երեան, 1921, էջ 411—424:

34 Հ. Անապյան, Հայերեն արձատական բառարան, Հ. 3, էջ 482, Հ. 4,

էջ 332—333:

35 Նոր բառով հայկակեան լեզուի, Հ. 2, էջ 817: Աւշագրություն դարձնենք ուսուերեն վերտել բառերին. նմանությունը սոսկ արտաքին չէ, իմաստն է նույնը:

գային հողի վրա է դնում. «զի շոնչան խելապատակին վերտ առեալ զեղսեսցին այսր անդր ոտնառութեամբ³⁶: Հին վկացության այս մեկնությունը մեղ մոտեցնում է ասորական հաելա-ին և հունական շօքօց -ին³⁷: Առավել հետաքրքիր է «շահս արարին» դարձվածը, որ նշանակում է խաղ ներկայացնել, տոն կատարել³⁸: Շահ բառը (պարսկերենում՝ ջախ) նշանակում է խաղ, շարժում: Ուրեմն, հին հնդկական շատուրանգայի պարսկերեն անվանումը՝ ջախմատը կարող է նշանակել ոչ միայն մահ արքային, այլև խաղ և մահ, խաղով մահ: Կարծես անհավանական է երևում այս բացատրությունը, բայց հները սիրել են խորհրդավոր բառերը, գաղտնաբանություններ ու երկիմաստությունները: Շահ բառին մենք հանդիպելու ենք ուշ շրջանում դիտված ժողովրդական դատական խաղերում: Բասի հին վկայությունն ասում է, որ խոսքը կարող էր լինել ոչ միայն պարսից արքայի մասին, և գուցե հնում շրջանակենտրոն խաղի բովանդակությունն այլ է եղել: Հավանաբար, հետաքայում է «շահ առնեմ» դարձվածը հանդիպել պարսից շահի ժողովրդական-կատակերգական դիմակին, և «Շահ-շահի» կոչվող խաղը կարող է այլ բացատրություն ևս ունենալ:

Այսպիսով, պարերգական դրամայի հնագույն հետքերը երեսում են, և հիմքեր ունենք հին աշխարհում որոնելու ժողովրդական դրաման, որի ծիսային պայմանաձևերին արդեն ծանոթ ենք այս գրքի նախորդ գլխից:

Հայկական վաղ միջնադարյան պարերգական դրամայի մասին գրքել է Խորենացու հիշատակած «Երգք ցցոց և պարուց» բանահյուսական երկութի մեկնաբանության հիման վրա³⁹: Սա ևս ժողովրդական դրամայի հիշատակում է: Բայց առնշություններ կան, որ ժամանակին չենք նկատել, և Երվական ու մատենագրական վկայություններ, որ Հարլստացնում են մեր առարկայի պատկերը: Դիոնիսիոս Թրակացու հատկապես վաղ մեկնություններում ժողովրդական

³⁶ Նույն տեղում:

³⁷ Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 117—119:

³⁸ Հ. Անայան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 333:

³⁹ Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 106—143:

դրամայի պատկերն առավել տեսանելի է: Վաղ միջնադարյան դրական տեսակների սահմանումներում կամ բնութագրումներում երկու շերտ կա: Դրանք են դպրոցական ճարտասանական նյութի բացատրությունը և, որ մեզ համար այս դեպքում ավելի կարեոր է, համեմատության օբյեկտը: Դա քըննել ենք, չնկատելով սակայն հին պարերգական դրամայի բունքը, չնկատելով սակայն հին պարերգական դրամայի բառուն նկարագրությունը: Այսպես, վաղ մեկնիշներից Մովսես Քերոբյանը, դիմելով հագներգութիւն (Հուն. թօվածիա) բառի բացատրությանը, համեմատության օբյեկտ է ընտրում վաղ միջնադար հասած ժողովրդական դրաման, «զոր երաժշտականաւն նուագին ի ատակ պարանցիկ երգոցն ըստ հաճ եւ դիւրալուր բանիցն, զորս ձայնիւր (եւ կողմնաւորաւոր) իրաքանչիւրոցն սովորեալ էին մեծաշանապէս յարմարել ձայնս իբր փողարական գոշմամբ առ լսելեացն հեշտութիւն⁴⁰: Տաղ բառը, ինչպես նկատել ենք, համապատասխանում է հունարեն ՚եպօց ՚ին⁴¹: Սա միջնադարյան տաղը չէ, որ նշանակում է երգ, քնարական-էպիկական բանաստեղծություն: Թվում է, խոսքը շափածո վիխասանության մասին է և ավանդման պարերգական եղանակի՝ վեպ խորային երգերով: Ուշագրություն դարձնենք Աղոնցի ավելեացրած կողմնաւորք բառի վրա, որ զալիս է տարընթերցումներից և մեզ համար այս դեպքում շատ թանկ է: Այստեղ ակնհայտ է պարերգական տրամախոսությունը՝ դիխարեան, դիմախոսության մեջ մըտնող հանդիպակաց կողմերը, որոնք պատմում են երգելով, փոխնիփոխ, շարունակելով մեկը մյուսին, հարմարեցնելով ձայներն ու հանգերը՝ «առ լսելեացն հեշտութիւն»: Այս դիխարեայի ներդաշնակությունը տեսնում ենք պատարագում, հակադրությունը՝ «Աբեղաթողում»: Պարերգական գործողության այս եղանակը հիշատակվում է նաև ուշ շրջանի մեկնություններում: Հովհաննես Երզնկացի-Սործորեցին (XIII—XIV դդ.) մեկնելով Մովսես Քերոբյանի սահմանումը, կրկնում է «ի տաղս պարանցիկ երգոցն» բառերը, բայց նրա երկի

⁴⁰ Հ. Ածոնց, Դիոնիսийский фракийский и армянские толкователи, ПТГ., 1915, с. 16.

⁴¹ Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 115, 137, 142:

ուշ շրջանի ձեռագրական մի տարբերակում (1635) կարդում ենք «նուագէին խալս պարանցիկ երգոցն»⁴²; Պատահական վրիպում չէ սա: XVII դարում տաղը այլ բան էր նշանակում, և կար պարանցիկ երգերի խաղ՝ ժողովրդական պարերգական դրամա: Մենք կտեսնենք դա: Ինչպես Հայտնի է, թրակացու Հայ մեկնություններում հագներգործիւն և կատակերգութիւն հասկացությունները նույնացված են, մի հանգամանք, որ հույն-բյուզանդական մեկնություններում⁴³ չենք նկատում: Նույն երգնկացու մեկնության մեջ տրված է կատակերգության բնութագրումը՝ «Երկակի դիմօք արարեալ՝ բարի կենաց յաւթարութիւն և վատուց յանդիմանութիւն»⁴⁴: Մեզ Հայտնի էր «առասպեկ դիմօք» բառակապակցությունը երգնկացու ժամանակից ոչ շատ հետու գրական փաստաթրղթում: Զգայթակղվելով այս նմանությամբ (որ գուցե պատահական չէ), նկատենք, որ այստեղ բացահայտվում է «կորմնաւորք» հասկացության իմաստը: Տրամախոսության մասին է խոսքը, և «երկակի դիմօք արարեալ» դարձվածը կարող ենք թարգմանել՝ «երկու դեմքերով հորինված»: Հետևելով թրակացու բոլոր Հայտնի մեկնիչներին (Դավիթ, Անանոս, Մովսես, Համամ Սրբելցի, Ստեփանոս Սյունեցի Գրիգոր Մագիստրոս, Երգնկացիներ, Վարդան Արմելցի, Առաքել Սյունեցի, Եսայի Նշեցի, Դավիթ Զելյունցի)⁴⁵ V—XVII դդ., բախվում ենք ժողովրդական դրամայի տարբեր և նման, գրքային՝ նախորդներից արտագրված և դիտված պատկերներին: Մեզ հետաքրքրում են հնից եկող տիպարանական հատկանիշները, որոնցից ամենաէականը պարերգական բնույթն է և այդ համակարգում դրսեռգովով դատական բովանդակությունը: Վերցինս պարզ երևում է Դավիթի մեկնությունում՝ «ոմանց յան-

⁴² Մատենադարան, ձեռ. 2380, էջ 258ա:

⁴³ A. Hilgard, Scholia in Dionysii Tracis artem grammaticam, Lipsiae, 1901.

⁴⁴ Մատենադարան, ձեռ. 2380, էջ 33բ (ընդգծումն իմն է—Հ. Հ.) Զեռագրի այս հատվածն ընդունել եմ որպես Հովհաննես Երգնկացի-Պլուզի մեկնություն (Թատրոնը միջնադարյան Հայուստանում, էջ 84), բայց իրականում դա Սործորեցուն է (Յովհաննես Սործորեցի, Համառոտ տեսաթիւն քրիստոնի, աշխ. և. Խաչերյանի, Լուս Անճելիս, 1984, էջ 140):

դիմանութիւն և [ոմանց] յաւթարութիւն»⁴⁵: Նույն է ասում Դրիգոր Մագիստրոսը՝ «ոմանց յանդիմանութիւն վատ կենցաղավարութեան եւ ոմանց յաւթարութիւն ի բարի կենցաղավարութեան»⁴⁶: Երգնկացի-Պլուզի ասածն էլ նույն է՝ «զշարսն եպերէին և զբարին գովէին»⁴⁷: Այս ամբողջը ժողովրդը կան է՝ մի կողմից «զնախնեաց պատմութիւն»⁴⁸, մյուս կողմից «զկտականաց նուագել խաւաս եւ զհեգնական ասացեալ ճառս ըստ ուամիկ աշխարհականացն ձայնիվ ձևացուցանել, որպէս նոցայն սովոր են առնել»⁴⁹:

Ի Հայտ են գալիս ժողովրդական դրամայի երկու տեսակ՝ պատմական-ավանդաբանական և ժամանակակից-կենցաղային: Խալացին Համակարգը կամ օպսիսը կարծես թե պարզ է՝ պատմություն պարանցիկ երգերով, երկկողմանի խոսք, բամբեր: Հին գրամայի այս պատկերն ունենալով մեր աշքի առջև, կարող ենք բացել Խորենացու «Հայոց պատմության» առաջին մասի Զ(VI) գլուխը, ուր բերվում է ավանդական պատմության համառուս շղթան՝ ազգերի ու տեղանունների առաջացման մասին, ըստ Ոլիմպիոդորոսի Հաղորդած անգիր զբուցների և իր լսած ժողովրդական ավանդությունների: Խորենացին բերում է Հետշրջեղելյան ավանդությունների խիստ համառուս ուրվագիծը և ձայնը տալիս ժողովրդական դրամայի ավանդապահներին. «Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեաց ի ճուազս փանդուան և յերգս ցցոց և պարուց գայսոսիկ ասեն լիշատակաւ»⁵⁰: Մեր ընդգծած բառերում ունենք հնագույն բանահյուսական մի երկուլիթի անվանական վկայությունը, առանց կոնկրետ օրինակի: Նորություն հատնած շենք լինի, եթե մեկ առ մեկ շարադրենք այդ վկայության մեկնությունները՝ սկսած Մկրտիչինից ու Գաթրճյանից մինչև Ալեքսանդր Վեսելովսկի, Նիկողայոս Մատ և Սբելցան, նաև տողերիս Հեղինակի մոտ

⁴⁵ Բան: Եր մատենադարանի, Յ, Երևան, 1956, էջ 243:

⁴⁶ H. Ածոնկ, նշվ. աշխ., էջ 229:

⁴⁷ Մատենադարան, ձեռ. 1100, էջ 206բ:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Յովհաննես Սործորեցի, նշվ. աշխ., էջ 143:

⁵⁰ Խորենացի, նշվ. գրատ., էջ 27:

քառասուն էջ կազմող պատմա-Համեմատական ակնարկը, ուր բերված են գրեթե բոլոր ենթադրություններն ու վճիռները, Բոլոր մեկնություններում «երգը ցցոց և պարուց» կոչվածը պատեհրացմում է դրամատիկական խաղի տեսքով: Վերջին և նախորդ բացատրությունների տարրերով նախառութեա ստուգաբանության մեջ է, ապա՝ հնագույն դրամատիկական համակարգի պատեհրացման, որին մոտեցել է (իհարկե շխորանալով) էմինը պար և շրջան բառերի համանակությունը վկայաբերելով և հեռացել է «պարուց երգը» համարելով վիպական շարք⁵¹: Իմ ուշադրությունից վրիտել է մի մեկնություն՝ տրված Գողթան երգերի առիթով. «Գողթան երգեր ըսկածներն ինչ էին, բայց եթե ժողովրդական պարերգը, զոր յոյնք շօթէ կը կոչեին և կերպեին ի պատիկ դիւցազանց»⁵²: Ահա այս շօթն մից է բացվում հանգույցը: Վաղ միջնադարյան բնագրերում, թարգմանական, թե ինքնուրուցն, հունաբան, թե հայկաբան, պար բառը ստուգապես համապատասխանում է շօթն և շօթեա բառելին: Լուսավորումն օրինակը Աստվածաշունչն է: որտեղ չկա տարակտսանքի ասիթ տվող կետ: Պար և շօթն բառերը համապատասխունում են երրացերեն հեծել և ասորերեն իսելի բառերին, որոնց նշանակությունն է խումբ, երամ, շարք, պարան: Այս չորս բառերը հանգում են շրջան, շարք, խումբ, ամբախ նշանակություններին: Այս կոնֆիգուրացիան նման է այն քառանիստ բյուրեղին, որի հայելիները միմյանց նկատմամբ նույն թերությունն ունեն և նույն պատեհեն են առանձանում:

Ժողովրդական կամ ծիսական-պաշտամունքային պարերը, անկախ նրանից, Հանգել է պարերգական զրամայի, թե ոչ (մեզ Հայտնի է Հունականը, որպես ավարտված ձև), դրամատիկական խաղի հիմքն է և առջային առանձնահատուկ արվեստ չէ: Նրա շրջագոտին բավական լայն է. Եղիպատոս, առաջավորասիրական երկրներ, Բարեկաններ (Հունատան, Թրակիա), արևելյան եվրոպա, Բուսաստաճ: Ամենաշեշտագործ այստեղ շրջանակներուն աշխարհի կամ տիկի-

51. Ա. Էմին, Վէպը Հնոյն Հայոստանի, Մոսկվա, 1850, էջ 96—97:

⁵² Բիբրանցի, Թատրոն, «Բազմավեպ», 1897, փետրվար, էջ 86:

զերքի (ըրանք նույնն են Հագարի պատկերացումներում) գաղափարն է, միշտ գետյան քաղաքակրթությունից եկող պարզունակ ժողովրդապետության (պրիմիտիվ դեմոկրատիա) փիլիսոփայությունը⁵³, որ գրված է պլատոնյան կոսմոսի, այն է՝ տիեզերական կարգի ու հասարակական կամքի ներդաշնակության հիմքում⁵⁴; Խորենացին պատահաբար չի դիմում ազգերի ու տեղանունների առաջացման մասին Ոլիմպիոդորոսի բերած զրույցների ցիկլին, որը մի, այսպես կոչված, իմանենակումու է՝ ոլորտացին (սփերիկ) ներփակ ավարտվածությունը⁵⁵: Անցյալն ու ներկան այստեղ իմաստավորվում են որպես պատումների ներկապակցված, ամբողջական շղթա՝ պարուց երգ, որը Մ. Էմինի ասած կիկլոս էպիկոսն է: Պարը, ինչպես տեսնում ենք, նշանակում է ոչ թե կաքաւ (շարժում, մեխանիզմ) կամ կայթ (թռչկոտում), այլ նախ և առաջ խմբվածություն, խմբերգ, շրջան: Այստեղից է՝ պար աստեղաց, պար երեշտակաց, պար բահաճայից, վերջապես՝ լեռնաշղթա՝ Հայկական պար:

Պարի շրջանաձևությունը և նրանով պայմանավորված շրջանաձև խաղահրապարակներ, որը հին Հունաստանում հանդից օրինաբարային (հին հայերենում՝ կահաւարան) և թատերական օրինակութիւն-շրջանակենտրոն համակարգին, ունի կոսմոլոգիական հիմք, և այդ հիմքը միջագետյան ու առաջավորապես աշխահում է: Պարուց երգի, իր ցիկլային բնույթով և արտաքին տևաքով տիեզերքի ու պատմության գետերմինանտն է, և շրջանաձև խաղահրապարակը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները (Շմիգտ, Զեմբերս, Ա. Մառ), պայմանավորվում է հին պարերգական գրամացի ուսիմնասիրողի: Անցյալը, ներկան ու ապագան պատկերացվում են որպես շավարտվող, շրջանաձև ընթացքի կետեր պիխանցվող ու կրկնվող, ինչպես տիեզերական լուսատուների

⁵³ *Лит. Г. Франкфорт, Г. А. Франкфорт, Дж. Уилсон, Т. Якобсон*, В преддверии философии, изд. «Наука», М., 1984, с. 125.

⁵⁴ *Латон. Платон. Сочинения*, т. 3, ч. 2, изд. «Мысль», М., 1972, с. 116—120.

⁵⁵ *Леген. С. Аверинцев, Поэтика раннеизаветийской литературы*, изд. «Наука», М., 1977, с. 84—90, О. Фрейденберг, *Миф и литература древности*, М., 1978, с. 81.

շարժումը, օղակների փոխկապակցվող շղթա, կրկնվող տարիներ: Հիշենք նավասարդյան խորհուրդը և Շիդարի շղթան: Կյանքի ու տիեզերքի այս համապարփակ կարգավորվածության մեջ անհատական կամքը հանդես է գալիս որպես օրյեկտիվ կամ աստվածային (Զին ու միջնադարյան հայացքով՝ աստվածայինը անհրաժեշտությունն ու օրինաշափությունն է) կամքին հակադրված ուժ և բերում է իր հետ մեղքի, պատժի ու զոհաբերության գաղափարները: Պարերգական արարողության կենտրոնում են պաշտվող կամ մերժվող գաղափարներն իրենց նյութական ու կենդանակերպ խորհրդանիշերով՝ կրակ, երկաթ, կենաց ծառ, նոխազ, ցուզ, որթագլուխ, խոյ: Քրիստոնեությունը հաստատում է տիեզերքի ու պատմության այլ պատկերացում: Կտրում է շրջանագիծը և մարդկության ճանապարհը դարձնում ուղղաձիգ, դեպի վեր, դեպի աջեղ դատաստան, վերջնական վճիռ, հավերժական վիճակ: Պլատոնյան կարգին հակադրվում է կարգի նոր ըմբռնում, որի սահմանումն ամբողջացնում են Օրիգինն ու Ավետոստինը⁵⁶: Շրջանակենտրոն ընթացքին հակադրվում է ուղիղ ու վերջավոր ընթացքը խաչելության խորհրդանիշով: Վերադարձող ու նորոգլող ժամանակը դառնում է անվերադարձ, և զոհը՝ միակ: Եթե պատմությունը վերադառնուր եամ էրկներ իրեն, Քրիստոսը չեր լինի միակ: Այս է օրիգին-ավգուստինյան հայացքի էռությունը՝ ի հակադրություն անաքսագոր-պլատոնյան հայացքի: Դատաստանի շրջանակենտրոն պարունակները Դանտեի «Կրմեդիայում» ոլորտապույտ փոխանցումներ են, բայց շրջանագծերի կենտրոնով անցնում է ուղիղ գիծ, որի մի ծայրը կիմբռում է՝ հիմքանու արդարների հանգստարանում, մյուսը՝ Քավարանի լիուան գաղաթից հասնում է տասներորդ երկինք՝ էմպիրիյ, որ ավարտն է ամեն ինչի:

Հեթանոսական պարուց երգը գրամա է դառնում, երբառի է հակուստյաց բեկորը՝ երկրորդ պարը կամ անհատա-

⁵⁶ И. Д. Рожанский, Развитие естествознания в эпоху античности, изд. «Мысль» М., 1979, с. 53, 143, 152—153; Նահ. Г. Г. Մայօրօվ, Формирование средневековой философии, изд. «Мысль», М., 1979, с. 299.

կան հործողությունը որպես պատասխանող կողմ: «Աբեղաթողությում» շափից ավելի ընդգծված է այդ, պատարագում ձեւվականորեն է անշատված պարից: Խորենացու ակնարկած ժողովրդական զրամացում դա արտահայտված է ցուցի բառով՝ Հոգնակիհերպ, բայց եզակի իմաստով: Զաբեաք է շինթել ցոյցի բառի հետ: Այս բառերը թվում են համանշանակ, ձեռագրերում էլ երբեմն այդպես են ներկայանում, բայց հոլովման մեջ տարբերությունը երևում է. ցոյցի-ցուցից, ցուցի-ցցոց: Նրանցից մեկը գրքային է, մյուսը խոսակցական-ժողովրդական, և այս վերջինն է, որ կապ ունի դրամացի ու թատերախաղի հետ. նշանակում է ներկայացում, թատրոն, նաև ցուցամոլ, կատակարան, խեղկատակ: Խաղային տեսակի և կատարողի անունների նույնությունը նոր բան չէ: Այսպես, Զին Հնդկական միմոդրամայի մի տեսակ կոչվել է կաթհակ, նույն կերպ է կոչվել գերասանը: Ուշ անտիկ շբքանից հայտնի է միմս ժանրը, և նույն կերպ է կոչվել գերասանը: Հայոց միջնադարում թատերախաղը կոչվել է կատակ, խաղացողը նույնպես: Նույնն է բառը բառը. նշանակում է խաղավայր և խաղացող: Ցուցիր պահպանվել է հայերենի մի շարք բարբառներում, որոց գեպքերում ազավագալը ցուցուվ (երդում), ցուցումք, ցուցանք (Շիրակ), ցուցիկ, ցիցարկա (Լոռի) և այլն: Տարածված է «ցուցիր մեկը» հերզորջամբ (Սեանի ավագան), որ նշանակում է ձեռացող, ժամբածում⁵⁷:

Այսպեսով, պարէ և ցուցի բառերի հարադրումը մեկ ընդհանուր, մէավորող հատկանիշի՝ երգի հիման վրա (Երգը նաև զրուցի ու պատմության իմաստ ունի) տվել է երգի ցցոց և պարուց ինքնատիպ անվանումը, որ վկայված է միայն նորենացու երկում: Դա այլ բան չի կարող նշանակել, եթե ոչ մոռովրդական պարերգական զրամա, իր խորհրդապաշտական հիմքով և քրիստոնեական շրջանում աշխարհիկ բովանդակությամբ ու դերով: Այս երեւութիւ քիչ թե շատ ավարտված տիպաբանական հատկանիշներն ակնհայտ

⁵⁷ Ժամանակակից հայերենի խոսակցական ձեռքում երբեմն կարելի է լսել «ցիրկ մարդ», «ցիրկի մեկը»: Բայց հայերեն չէ նոր է մտել ժողովրդական լաւագաշար, բայց արտահայտության ձեր չին է:

ևն «Աբեղաթողի հանդեսում»; Բայց մեզ հայտնի փաստը նոր է դիտված և գույց աղավաղված է: Հինը պետք է փնտրել «տաղթ պարանցիկ երգոցն» կոչված երկույթում, որի օրինակը չունենք, և՝ թրակացու մեկնիւների ժլատ բնութագումներում: Բայց ունենալով դատական խաղի և հին պարերգի պատկերացումը, կարող ենք կանգ առնել միջնադարյան մեկ-երկու վկայության վրա:

Հովհան Մամիկոնյանի «Պատմովիւն Տարօնոյ» երկում (VIII դ.) բերված է կատակերգական պարուց երգի մի հատված: «Ընդ առաջ երես պարաւորքն և երգ առեալ բազում ինչ իրաց գովիչին, որ յետոյ ի հոտել դիականցն շէր հանհալ ասէին»⁵⁸: Գովասանական կամ դիֆիրամբային հատվածը չկա. պատմիչը բերում է միայն կատակերգական պարերգը:

Կերան զազանք զմարմին դիականցն և դիրացան,
Կուզ կերեալ ուռեալ իբրև զարչ.
Եւ ազուս հպարտ աղե քան զառիւծ.
Դայլ քանդի շատակեր էր՝ պայթեաց,
Եւ արջ, զի զոր ուռեն՝
Զմեա առ ինքն ի սովոյ մեռաւ,
Անգեղք, զի ազա՞ էին, նստան
Եւ ալ ոչ կաբացին վերանալ.
Մկոնք զի շատ տանէին ի ծակս իւրեանց,
Մաշեցան ոտք նոցանց⁵⁹:

Միջնադարի քերական-մեկնիւները կատակերգուրիւն և հազմերգուրիւն ասելով, նկատի ունեն այս կարգի ծաղրական-այլաբանական երգերը: Սա ճողովրդական «կոմոսի» երգ է, որով «զշարսն եպերէին և զբարիսն գովիչին ձայնիւ հեղնական»: Մեղ հայտնի է նման բնույթի մի երգ ևս, որի վրա ուշադրություն է հրավիրել Դարեգին Լեռնյանը: Բայց սա այլաբանական չէ և մասամբ հիշեցնում է «Աբեղաթողի հանդեսի» երգերը: Այս երգը, որ թվում է դարձյալ խմբական,

58 Յովհան Մամիկոնեան, Պատմովիւն Տարօնոյ, աշխ. և առաջաբան Ա. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 246:

59 Նույն տեղում, էջ 246—247: Նէր նշանակում է ճողովրդական երգ, չուտ Հ. Աճառյանի, սեմական հին փոխառություն է (Արմատական բառարան, Հ. Յ. էջ 515):

կատակային պատասխանն է Քրիստոնի «գուք էք աղ երկրի» խոսքի:

Աղ էր ւատանայ պայծառութեամբ յերկինս,
Եւ հպարտութեամբ անմահացաւ
Եւ եղե աղը կոփան մարդկան:
Աղ էր Ադրամ ի գրախտին,
Մինչ յեր անցեալ զօրինօքն,
Բայց յետոյ եղե աղը անպիտան:
Աղ էր Կային, բայց յորժամ եղե եղբայրասպան,
Իբրև զբուհեալ եղե աղը անպիտան:
Աղ էր Քամ սրդի նոցի,
Բայց յորժամ ծիծաբէցաւ ի վերայ հօրն,
Եղե յորժամ հորժամ եղե անպիտան:
Աղ էր Ետուա, բայց յորժամ
Զանդրանկութիւնն վաճառեաց,
Եղե որպէս զաղը անպիտան:
Աղ էր Ցուռա, բայց յորժամ մատնեաց
ԶՏէրն, եղե աղը հառեալ և զարչ,
Հոտովն ելից զաշխարհ ամհնայն:
Աղ էին զին քանանցըն ու յորժամ
ԶՏէրն ի խալ հանին,
Եղեն ամենալի աղգաց ատելի:
Աղ էին հայրապէտքն,
Բայց ոմանք Ցերձուած խօսկով
Եղեն իբրև զաղը անպիտան,
Աղ էին վարդապէտք և քանանցը
Եւ յորժամ ծուլանան ի ոործս իւրեանց,
Կընք որպէս զաղը անպիտան⁶⁰:

Մոտիվներն իսկապես հիշեցնում են «Աբեղաթողը»: Դժվար է այս խմբերգի ժամանակը որոշելը, բայց հերձվածողներին ուղղված ակներգը մտածել է տալիս, թե կարող է միջնադարյան լինել, եթի ոչ վար, ապա թերեւս պավլիկյան ևամ թինըբակյան շարժումների շրջանից: Խոսքի կառուցման հղանակով, բնդշանուր ոճով սա նման է Հովհան Մամիկոնյանի բերած հատվածին, այն է՝ ունի ժողովրդական կոմոսի գծեր:

Միջնադարյան Հիղինակների ակնարկներում ժողովրդական զրամացի հին խորհրդապաշտական հետքերը գրեթե

60 «Հայերգ», Հրատ. Ա. Տեհանց, Թիֆլիս, էջ 182—183:

շեն երեսում: Նրանցում տեսնում ենք ձևի ընդհանուր նշան-ներ և զգում ենք աշխարհիկ շունչը, նկատում ավելի կատա-կիրակական, քան «ահաւոր» (վեհ, հերոսական)՝ մթնոլորտ: Մեզ հայտնի տվյալներից բացառություն է կազմում Գրիգոր Մաղիստոսի պատահական ակնարկը, որտեղ տաղի պա-րանցիկ երգոցն երևում է պատմահերոսական բովանդակու-թյամբ. «և երբեմն ի նոսա արի երենալ և հրաշից հիացման արժանի և ի վեր քան զմտածութիւն. որ և նոցա իսկ զրոյդ հանդիսի մրցութեան տաղս և սոինչ յօրինեալ անպատկա-նաբար աղատագունդն պարէին և ի հրապարակս գոհջից և րազարաց իրրո զդիւցազնցն երգէին»⁶¹: Թարգմանենք. «...քո մրցության հանգեսներում տաղեր ու երգեր չորինելով պարում էին պատառեն, նաև՝ քաղաքների ամբոխային հրա-պարակներում, երբ պատմում էին ոյուցազունների մասին»: Սա հերոսական հագներությունն է՝ «զնախնեաց պատմու-թիւն» աշխարհիկ հղանակով, ոռովն պարուց երգ, շրջանա-կինտրոն խաղ: Հայտնի չեւ և գմվար է որոշել՝ Գրիգոր Մա-ղիստոսը ի՞ր ժամանակից է խոսում, թէ՞ անցյալից, տե-սա՞ծն է վերաբռնադրում, թէ՞ կարգացածք: Գա ի՞նարկէ պա-կաս էական է: Ամենակարեռը, որ այստեղ տեսնում ենք, Մովսես Քերպովի հիշատակած «պարանցիկ երգերի տաղն»:

Պարերդական մեկ այլ միջնադարյան պատկեր զտնում ենք Դամբիթ Զեյթունցու քերականական զասագորում.

Սափս հարկանելով
Կաքաւն լոլով.
Եւ ման առնեն ուար դուռով,
Եւ ճօճեն ճեմելով,
Եւ տափս հարկանեն ծնծղայքով,
Եւ խաղս խաղան թատերով...⁶²

Այս հատվածը Ալիշանը վկայաբերել է որպես ուամկա-կան բանաստեղծություն (անկասկած այդպիսին է) «Ետին դարերու քերականի մեկնիշից»⁶³: Թատերագիտական ուսում-

61 Զբարացու Մագիստրոսի թւերը, թ. ԺԱ, էջ 40:

62 Գափք Զեյթունցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1981, էջ 77:

63 Գ. Ալիշան, Յուղիկք հայրենիաց հայոց, Հ. Բ., Վենետիկ, 1921, էջ



Կ. 7. «Քրիստոսի ծանակումը», մատենադարան, ձև. N 7651



նկ. 8. Կատակերգակներ, Մատենադարան, ձև. № 6420

նասիրություններում էլ բերված է այս փաստը⁶⁴: Այնուա-
մենայնիվ, նկարագրվող երեսութի ժամանակը մեզ համար
մնում է անորոշ: Սա ժողովրդական «կոմուսի» կատարելա-
պես միջնադարյան պատկերն է. ամբոխը զնում է փողոցով՝
թմրուկով, ծնծղաներով, երգով ու պարով, և ներկայացվում
է ինչ-որ մի թատերախաղ: Վկայողը՝ Դավիթ Զեյթունցին
XVI—XVII դարերի հեղինակ է, ապրել է Լվովում, եղել է քա-
հանա և ուսուցիչ Հայոց եկեղեցուն կից դպրոցում: Դավիթ
քահանան ուսուցանել է «արուեստ քերականութեան»՝ մեկ-
նողական հարց ու պատասխանի եղանակով, սովորեցրել,
այսպես կոչված, դպրոցական «քեմբասացութիւն» միջնա-
դարյան զրոյցների կամ խրատական առակների ճարտա-
սանական-տրամախոսական վերարտագրություն: Նա մեզ
հայտնի վերջին միջնադարյան քերականն է, որ ենում է
Դիոնիսիոս Թրակացուց՝ միջնորդաբար կամ անմիջակա-
նորեն: Ե՞րբ է նա տեսել, որտե՞ղ է տեսել միջնադարյան
«պարոց երգը», կամ ո՞մից է լսել դրա չափածո, ուամկա-
բան նկարագրությունը, որ անվանում է քատր: Գուցե նկա-
րագրվող փաստը սլավոնական աշխարհից է, և միայն նկա-
րագրությունն է հայերեն: Գուցե բանագոր ճանապարհով
ավանդված մի անուղղակի հիշողություն է սա կամ քաղված
է որևէ գրական աղբյուրից: Որոշ չափով նման է Գրիգոր Մա-
գիստորոսի ներկայացրած պատկերին: Համենայն գեպս, այս
չափածո հատվածից, ինչպիսին էլ լինի նկարագրվող երե-
վույթը՝ սլավոնական, թե հայկական, թունդ միջնադար է
բուրում և իշարկե՝ ժողովրդականություն: Լվովի հայերը,
որ անեցիների շառավիզներն էին, կարող էին պահած լինել
բնաշխարհիկ բարեկրը, նաև ժողովրդական պարերգական
դրաման:

XVII դարը մեզ տալիս է ժողովրդական դատական իսա-
ղութ մի վկայություն, որի ծայրը վաղ միջնադարում է՝ նշմար-
վում է «Տարօնող պատմության» մեր բերած հատվածում,
նաև քերական-մեկնիշների խոսքերում: Խաղի ընդհանուր

64 Գ. Անանյան, նշվ, աշխ., էջ 129—130: Նահ՝ Թատրոնը միջնադար-
յան Հայաստանում, էջ 103—104:

պատկեր՝ թափորապետ-դատավորի դիրքով ու զերով, «կոմսուհի» վարքագծով հիշեցնում է «Աբեղաթողի հանդեսը»:

Այս խաղի ոչ լիակատար պատկերն անուղղակիորեն՝ պատահական առիթով վկայված է Զաքարիա Քանաքեցու «Պատմագրութեան» երկրորդ գրքում։ Պատմվում է ջրի շուրջ ծագած մի կոփ, որ տեղի է ունեցել Եղվարդ ու Ղարայորան գյուղերի միջև։ սովորական մի պատմություն անսովոր լուծումով։ Զաքարիան, որ եղել է այդ ժամանակ Հովհաննավանքի սարկավագ, դեպքի ժամանակակիցն է կամ ականատեսը։

Այսպես, Ղարայորան գյուղի տանուտեր Հապուշ-Ղասիմը փակում է Եղվարդի արտերը շրող առուն։ Եղվարդիները ճարահատյալ դիմում են Երևանի խանին։ Սրան էլ առիթ է պետք մարդկանց իրար զեմ հանելու Եղվարդիները, խանի խորհուրդ ու խրատով և իրենց տանուտերի գլխավորությամբ արշավում են ղարայորանցի Հապուշ-Ղասիմի վրա և իրենց արշավանքին տալիս դատական խաղի տեսք։ Ընտրում են «Ավելագլուխ իշով թագավոր»՝ Հավանաբար ժամանակին տարածված ամբոխային մի խաղ՝ միջոց «զշարսն եպերելոյ»։ «Եւ ահա գրո՞ տուեալ ժողովեցան ի մի, — պատմում է Զաքարիա Սարկավագը, — և ոմն երիտասարդ զգեցուցին ի հանդերձից իրենանց, և եղին ի զլուխ նորա աւել, և նստեցուցին ի փերայ իշոյ, և անուանեցին զնա՝ Աւելագլուխ իշով թագաւոր. և ելին ամբոխիւ ամեններեան զուռնայով և դահովով շափոք և պարուք, խաղալով և խնդալով, ամենայն արք մինչև կանայք ևս երգելով։ Եւ յորժամ մերձ եղեն Ղարայօրան գեղջին, առնուտեր աւագն խրատ ետ նոցա՝ և ասէ, մի գուցէ արին Հեղուք՝ և լինիք պարտապան արեան, այլ հարեալ ծեծաք՝ կիսամահ արարէք և թողէք, այն բաւական է նոցա մահ»⁶⁵։ Դատական խաղը տեղի է ունենում բոլոր կանոններով։ Եվ, ինչպես «Աբեղաթողի հանդեսում», խաղը ծառայում էր կյանքի հարցեր լուծելուն, այսուղ ևս խաղը ծառայեցվում է դատի, որտեղ իրականության ու պայմանականության սահմանները մերձեցվում են, սկսվում է կոփ, բայց առանց

արյունահեղության։ Կատարյալ ամբոխային հոգերանություն. եթե կոփի մեջ սպանություն չի լինում, կոփը կոփվ չէ, խաղ է։ «Եւ ահա եկեալ հասին ամբոխին. և Հրամայեաց Աւելագլուխն, հարէք՝ ասէ, և սպանէք զշունդ զայդ։ Յայնժամ կալեալ զնա՝ արկեալ յերկիր առաթուր, և հարկանէին անողորմ աքացի և բոնցի, փայտիւ և քարիւ»⁶⁶։ Հակառակորդ կողմը գործում է նույն խաղի օրենքով. տապալում է Աւելագլուխն և ոտքի տակ առնում։ Հայտնի չէ, որքան ժամանակ է նա մնում «կիսամահ արարեալ», բայց Զաքարիա Սարկավագը նրան ոտքի է կանգնեցնում ոչ ինչպես «զշարուո՞ չորեքօրեալ մեռեալ», այլ... «Յետ երից աւուրց ապա ողջացաւ, և Եկեալ կորեաւ»⁶⁷։ Զաքարիան վերարտադրում է ժողովրդական դատական կատակերգության և իրական կենցաղային փաստի մի խառնուրդ և չի կարողանում մոռանալ հարության երեօրյա ժամկետը։

Խաղի պատկերն այն է, ինչ տեսանք «Աբեղաթողի հանդեսում» և տեսնելու ենք XIX զարում գրաված փաստերում։ «Թագավոր» և «դատավոր»՝ ավանակին նստած (Մաղկագարդի շարականն է պակասում), շրջապատված պարերգակ ամբոխով, «շափօք և պարուք», ինչպես Սարկոս Կրասոսի նմանակը՝ շրջապատված Սելմկիայի պոռնիկներով, ինչպես Հաղթակամարի տակով անցնող Կեսարը, ինչպես «Աբեղաթողի» թափորապետը՝ շաթալ-թագով ու թրքոտ գավազանով։ Դատական խաղի պատկերները տարրեր տեղերից ենք քաղում, բայց որքան նման են իրենց բնույթով ու տիպարանությամբ՝ մի տեսակ համարդություն խնջուքքի, պատարագի, շքերթի՝ հասարակական գիտակցության ունիվերսալ ցուցը, իրականի ու պայմանականի, պաշտոնականի ու ժողովրդականի, ծաղրի ու մեծարման կարծես թե շփոթ, բայց հենց այդ շփոթն է բուն դրամատիկական վիճակը, այդ հակասականությունն է իմաստ տալիս խաղին։

Միջնադարյան ժողովրդական դրաման, հատկապես կատակերգությունը ոչ միայն դատ է, այլև կոնկրետ անձնավորությունների դատ։ Ժողովրդական կատակերգում կամ խո-

⁶⁶ Նույն տեղում, էջ 119.

⁶⁷ Նույն տեղում։

սում է առակով ու այլաբանությամբ կամ որոշակի հասցեագրումներով։ Ծաղրվող կամ դատի տրվող երկույթը միջնադարյան խաղում կոնկրետացվում է, ուղղվում որևէ անձնավորության։ Այսուղ պործում է ոչ այնքան ընդհանրացման, որքան «փաստարկման» օրենքը. առակը տեղափոխվում է անձնավորության վրա, և խաղը դառնում է ամբաստանության մի եղանակ։ Հովհան Մայրագոմեցու «Վասն թատերաց դիւականաց» ճառում ասված է այդ մասին. «մանաւանդ զկատակսն մտակորոյն՝ որ ի մեջ լիտի բազմականացն իբրև զայսահարս յափրին, ծոփն, զելուն, աքսոտեն, դամինեսեան աղտով բերանւոյն զագրացուցանեն. զոմանս հայցոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ և զոմանս ձազէ խեղութեամբ, ամոթով կուրացուցանէ, ոմանց ստէ և յարգանօք մնափառեցուցանէ, իբրև զշուն կատաղեալ զամենեսան առ հասարակ խածանէ»⁶⁸: Նման տեղեկություն է տալիս Սիմեոն Եպիսկոպոսը. «Եւ դուք անառակիք եւ արբենայք, եւ լկտիք եւ պոռնիկք անյայք եւ դառնայք ի քահանայքն եւ բամբասէք եւ ոչ ձեզ նման կացուցանէք, ապա այլ վատթար տիսանէլ զքահանայքն, <...> զի ո՞վ ես դու որ զաստուածային սպասաւորն բամբասես, խաւսիս առ նա զ՞ա[յ]-հոլյյութին <...> զի՞ տեսանես զշիւլ յական եղբաւր քո ականը զդերան ոչ տեսանես»⁶⁹: Հին էտակերգությունից է դալիս այս երեսով Հայտնի է, որ Արիստոֆանը Սոկրատին է ծալըրել «Ամպերում»: Բայց զա առավելապես ժողովրդական ծագությունից է նույնական ծերը՝ պահպանված աֆրիկյան ժողովուրդների մեջ: Միջնադարը հնադարյան խաղային բանահյուսության ժառանգորդն է և անհատական ծաղրի սովորութը հասցնում է նոր ժամանակներ: Ժողովուրդն ասում է «խաղք հդանք», «խաղք ու խայտառակ եղանք», «առականք եղանք»: Իսկ առակ նշանակել է օրինակ, հասարակության աշքի առաջ ի ցույց դրված կենդանի փաստ: Միջնադարյան հայցքը կյանքը դիտում է ծայրահեղ կետերից՝ մի կողմից առարկա-

68 Տ. Յովհաննու Մանդակունայ ձառք, Վենետիկ, 1860, էջ 134:
69 Վենետիկի Միթթարյան մատենադարան, ձեռ. 633, էջ 38ր—39աւ:

յական կոնկրետություն, անձի շոշափում, մյուս կողմից այլաբանություն և սիմվոլիկա: Զաքարիա Քանաքեցու պատմածում, որն իրական դեպք է, խաղի վախճանը այլաբանական է: Պարագլուխը ողջանում է երեքորյա կիսամեռ վիճակից հետո և անհետանում, իսկ կաղմակերպող՝ «երէց գեղջն Յոհան անունն փախեալ անկաւ ի խոր ձոր անդր, և եմուտ մի աղութսում՝ և զերծաւ»⁷⁰: Մարդն ինչպիս պետք է տեղավորվեր աղվեսի որդում: Փախուստն իրական է, թաքուստն այլաբանական: Համեմատությունը զալիս է խաղի պայմանականությունից, իսկ իրական վախճանը խաղի արդյունքից: Շատ բնութագրական է զատական խաղերի ժողովրդական անվանումներից մեկը՝ «զատ-բեղադ», որ նշանակում է փորձություն ու փորձանք: «Գատ-բեղադը» դարձել է նույնիսկ հատուկ անուն խաղի գլխավոր պերսոնաժի համար⁷¹:

Դատապարտվող օրիեկտի կոնկրետությունը միայն հայժողովրդական դրամայի առանձնահատկությունը չէ: Դա հատուկ է առհասարակ միջնադարյան աշխարհիկ թատրոնին: Եվրոպական միջնադարում էլ կա այդ երեսով Ամենապերճախոս վելայությունը տեսանում ենք Շեքսպիրի «Համլետում»: Պալատ եկող կոնկրիանաներին Դանիայի արքայազնը բնութագրում է հետեւյալ խոսքերով. «Արանք ժամանակի խտացումը և համառոտ տարեգրությունն են. ավելի լավ է մահից հետո վատ տապանագիր ունենաք, քան թե կինդանության ժամանակ սրանց կողմից վատ հիշատակում»⁷²: Համլետի կողմանակ կողմից վատ հիշատակումը, որ կոչվում է «մկան թակարդ», բերում է ոչ թե հեղինակի ժամանակի ստացիոնար թատրոնի, այլ ժողովրդական «զատ-բեղադի» պատկերը:

Կատակերգությունը իր սոցիալ-հասարակական դերով միջնադարում նույնացվում է դատի ու դատաստանի գաղափարների հետ: Դրա պատմական հիմքերը խորն են: Միջնադարում թատրոնը կոչվել է նաև կատակերգութիւն, Արե-

70 Զաքարիա Սարկասագ, նշվ. աշխ., էջ 119:

71 Վ. Բղոյան, Հայ ժողովրդական խաղեր, Հ. 1, էջ 129—130:

72 Վ. Նեխապիր, Էնտիկ երկեր, Հ. 1, էջ 45:

մուտքում հիմնականում այդպես՝ կոմեդիա, և դրա պատմական հիմքերն էլ հայտնի են: Դանտեն «Կոմեդիա» է անվանել իր անդրաշխարհային ուղևորությունն ու տեսիլքը: Ընդունված է կարծել, որ սխալ չէ, որ պատճառը լեզուն է ժամանակի խոսակցական իտալերենը: Սա պատճառներից մեկն է: Դանտեի պատկերացրած անդրաշխարհը մի մեծ, շրջանակենտրոն ատյան է՝ դիկաստերիոն, «հանդիսաբան իրաւանց ժամադրութեանց»⁷³, ուր գատաստանի են կանչված ուներեած պատմական անձինք, ոչ թե «քավության նոխազներ», այլ դարի մեղավորները և հեղինակի անձնական ախոյանները: «Կոմեդիան» շատ խոր մտածված վերնագիր է՝ Հիշենք, թե ինչ էր տեղի ունենում հոռմեական թատրոններում քրիստոնեության արշալույսին:

«ԴԱՏ ԲԵՇԱՐ» ԵՎ «ԽԱՂՔ ԱԻ ԽԱՅՏԱՄԱԿ»

Զաքարիա Քանաքեռցու վկայությունից հետո մինչև XIX դարը գրականության մեջ չենք հանդիպում դատական խաղի նկարագրության: «Աբեղաթողի հանդեսը» բացառիկ մի փաստ է նրանով, որ մինչեղով ժողովրդական, ունի ժողովրդական խաղի տրամաբանություն: Բնդունեղով այս ծիսախաղը որպես միջնադարյան, նկատի ունենք նրա՝ վանական միջավայրում պահպանված լինելը: Եկեղեցին ամենապահպանողական հաստատությունն է և մեզ տվել է միջնադարյան պարերգական դրամայի համեմատաբար ամբողջական պատկերը: Ուստի, այս կատակերգական միստերիան ընդունում ենք որպես հիմնական կողմնորոշչի, ուղեցուց պատեր, տիպարանական օրինակ և նրա լույսով դիտում ժողովրդական խաղային բանահյուսության այն փաստերը, որոնցում առկա են պարերգական դրամայի գծերը: Ժողովրդական խաղային բանահյուսության ոլորտը շափականց լայն է ու բազմաշերտ: Ուսումնասիրության առանձին բնագավառ է սա, անսպառ, առեղծվածներով լի: Եվ ի՞նչ է այս-

⁷³ Նարեկացու այս խոսքը (նշվ. աշխ. և հրատ., էջ 247) ամենաբնուրագուական է, որպես երկնացին դասաստանի հիշեցում:

առեղ «Աբեղաթող» կատակերգական միստերիան, եթե ոչ հինգամայի գոլորշիացումներից առաջացած թեթև մի ամպ, որից թափվող կաթիլները զտված են միջնադարի մաղով: Եվ գնում ենք այդ ամպի ետեից, քանզի մեր փնտրած երեւությի որոշակի հետքն այդ է:

Սկսած անցյալ դարի 70-ական թվականներից մինչև մեր օրերը կուտակվել է խաղային բանահյուսության հսկայական նյութ: Գրողները, բանահավաքները, բանասերները, բանագետներն ու ազգագրագետները (Խ. Աբովյան, Պ. Պողյան, Բաֆֆի, Գ. Արվանդյան, Ս. Հայկունի, Ե. Տեկանց, Վ. Տեր-Մինասյան, Տ. Նավասարդյան, Ե. Լալայան, Գ. Տեր-Աղեքսանդրյան, Հ. Մալխասյան, Ստ. Լիսիցյան, Վ. Բղոյան, Միր. Լիսիցյան և ուրիշներ) ստեղծել են փաստական տվյալների այնպիսի մի համայնապատկեր, որ կարող է մոլորեցնել մարդու հայացքը: Զգողմնորոշված միտքը կարող է գնալ ու կորցնել ետղարձի ճանապարհը: Ուրեմն, մեր բոնածը մի արահետ է, գուցե նեղ, բայց հստակ: Վ. Բղոյանը տվել է խաղային բանահյուսության նկութերի որոշակի մի դասակարգում և բավական հեշտացրել զրամայի պատմաբանի ու տիսաբանի գործը: Անվեճելի է, որ այս նյութի կալը նոր ժամանակների հետ սոսկ արտաքին է, և նրա բուն արժեքն այդ չէ: Միսային և պաշտամունքային առնչությունները շատ հեռուն են տանում: Այստեղ կան խորհրդապաշտական առումով մթին կետեր, հասակային միությունների, ֆրատրիալ (ցեղախմբային) հարաբերությունների, կրոնական, սոցիալգուստական հակասությունների արձագանքներ, անհատականի ու հասարակականի բախման հիշողություններ, նաև սոցիալական հոգեբանության նոր դրամորումներ և հաղար ու բան, որ կողմնակիորեն է առնչվում մեր խնդրին: Բոլոր դեպքերում մեզ հետաքրքրողը հին դրամայի անդրադաման կետերն են, նրա աիպաբանությունը բնությանը հատկանիշները: Դրամատիկմի հետքեր, նաև սուր դրսեորումներ շատ կան խաղերում: Կարելի է ասել, որ չկա խաղ առանց դրամատիկական պայմանների, բայց բոլոր խաղերում չէ, որ դրամատիկմի հանդիս է գալիք որպես անհատի ու խմբի հարաբերություն, քոլոր խաղերում չէ, որ կան պարերգական-շրջանակենարուն

ձեմ հիշողություններ, «քավության նոխազի» գաղափարը՝ Դրանք արտահայտված են խաղերի սրբակի մի տեսակում, որը պայմանականորեն պետք է անվանենք ժողովրդական դիկաստերիոն:

Ժողովրդական դիկաստերիոնը ենթադրում է խաղի որոշակի մողել սյուժեատային սխմայի մեկ-երկու տարերերակի դատող ու դատվողի հավաքական մի կերպար՝ արխետիպ։ Այց Երևարք վկայված է մի քանի անուններով, որոնք բոլոր ել, Եթի նկատի առնենք խաղի սոցիալ-դասակարգային բովանդակությունը, մասամբ և ազգային բողոքի շերտը, նոր են. Շահ, Խան, Փաշա, Մելիք, Ղոշուն, Ղաղի: Խաղերը որպես կանոն, կոչվել են գլխավոր գործող անձի անունով։ Դատող ու դատվող դեմքը ժողովրդական գիտակցության մեջ պատկերացնել է արևելյան բռնացողի կերպարանքով։ Պարսկական ու թուրքական տիրապետության շրաժարյուրամյա շրջանը ժողովրդին տվել է մեղավոր ուժի և առհասարակ իրավունքի արևելյան պատկերացում։ Արդար ուժն էլ չի պատկերացվել այլ կերպ, քան բռնությանը հակոտնյա բռնություն, դարձյալ խան ու փաշայի կերպարանքով։ Դատող ու դատվողի միակ արգային անվանումը գտնում ենք Զաքարիա Քանաքեռու վկայության մեջ՝ Ավելավորի իշով թագավոր։ Թվում է նաև իմաստափոխված է «Շահ» անվանումը։ Վաղ միջնադարից վկայված «խաղացին, վերտեցին և շահս արարին» խոսքը մտածել է տալիս, թե «ի շահ ածել», որ նշանակում է «շահցոցանել, յարգել զբանքարս»⁷⁴, պաշտամոնքային խաղի հնագույն անվանումն է կեղծ աստվածության՝ պարսից բըռնապետի տիտղոսանվան պատճական հնչյունական նմանությամբ։ Ուժի գաղափարը պաշտվում է ի դեմս կռոց կամ մերժում է ի դեմս վախի խրտվիլակների։ Եվ աջա կուռքն ու երկյուղի օրյեկտը, լինելով դիկաստերիոնի կենտրոն, պարսկական բռնապետության երկարատև շրջանում միանգամայն տրամաբանորեն կարող էին հանգել շահ-բռնապե-

տի գաղափարին։ Եթե մեր կուահումը ճիշտ է, պետք է մտածել, որ ժողովրդական խաղերի արխետիպի վերը հիշատակված անուններից ամենահինը Շահն է, և «Շահ-շահի» անվանումը գուցի կարելի է թարգմանել՝ «Խաղ թագավորի»։ Եյուս անունները, որ ստորակարգվում են «Շահ» անվանոր, պետք է համեմատաբար ուշ առաջացած լինեն։ Պարսից շահին խաղի վերածելը չէր կարող այդքան ճիշտ լինել, և շահին գաղափարը մարմնավորվել է Խան ու Փաշա անունշահի գաղափարը մարմնավորվել է Խան ու Փաշա անուններում։ Բոլոր գեղքերում «Խաղ թագավորի» անվանումն ավելի մոտ է մեր խնդրին, մանավանդ որ դատական խաղի XVII դարի վկայությունը «թագավոր» անունով է։

Ասելով «Խաղ թագավորի», Ճանապարհ ենք բացում դեպի մեր միթուողիկան պայմանաձեր։ Թագավորը դատում է անհնագանդ որդուն։ XIX դարի երկրորդ կեսին պատումներուկ գրաված և ուսասկան-ժողովրդական Համարվող «Մաքսիմիլիան թագավոր» դրամայի հետազոտողները փորձել են պատճական ոչ հեռու անցյալում որոնել հեթանոս թագավոր Մաքսիմիլիանի և նրա քրիստոնյա որդու՝ Ադոլֆի բախումը, հասցնելով այն ամենաշատը մինչև Պետրոս Առաջինի և Ալեքսեյ Միհայլովիչի ժամանակները⁷⁵։ Թագավորը Առաջինի և նրան բրիտանական պատճող է լրմուտացող արդին գիտենք, թե որքան հին է ըմբուտացող արդարացնի և նրան դատող ու պատճող չոր թեման՝ թագավոր-դատավորի գաղափարը։ Սա միջազգային և ոռուականից առաջ բազում հոլովումների ենթարկված իրադրուկանից առաջ բազում հոլովումների ենթարկված իրադրուկան է կամ առասպել։ Մաքսիմիլիան անունն էլ ուսասկան թյուն է կամ վեհապետ։ Համարիստոններական վարքանական հետքեր կան այստեղ։ Հեթանոս վեհապետը հարցարնում է որդուն, որդին անորդենի է մնում քրիստոնեական հավատում, վեհապետը նրան բանա է ուղարկում, երեք անգամ կանչում, հարցաքննում, տանջում, բանտ զնում, մահապատճի ենթարկում։ Բազմիցս կրկնված և վարքագրություններից հայտնի իրադրություն, որի խաղացին ավանդումը չի հասել, պատճենի է զրոյցի ձևով։ Եթե սա

74 Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, հ. 2, էջ 458։

75 П. Н. Берков, Вероятный источник народной драмы «О царе Максимилиане и его непокорном сыне Адольфе». — «Труды отд. древнерус. лит. Ин-та русской литературы», XIII, М., 1957, с. 311—314.

Խեկապես ղրամա է, ինչպես ուսումնափրողներն ու գրառողներն են վկայում, ապա, միանգամայն պարզ է, դատական խաղ է, թագավոր-դատավորի միջնորդված հիշողություն:

Այսպիսով, աստված-հայր-թագավոր-դատավոր, սա ոչ
թե նվիրապետություն է, այլ մեկ ուժ, մեկ պատկեր: Դա
նույնն է, ինչ թագավոր-շահ-խան-փաշաղ-ղաղի էությունը
Եվ, ի՞հարկե, զործ ունենք մեկ բնդհանրացված դեմքի՝ ար-
խետիպի հետ, և իրազրությանն էլ ծանոթ ենք: Արտաշեսը
դատապարտում է Արտավազդին, Պիղատոսը Քրիստոսին,
Տրդատը Լուսավորչին, Աստված Տրդատին, Մաքսիմիլիանը
Աղոլֆին: Հավատաքննության այս պատկերը կրկնվում է
«Խան» խաղի տարրերակներից մեկում:

— ի՞նչ մարդ ես, աղա, ի՞նչ պաշտոնի ես ծառայում, — զարցնում էր խանը:

— Ես անտառապետ եմ, խանը սաղ լինի:

— Ի՞նչ են անում անտառում:

— Պաշտպանում եմ, ման եմ գալիս... խանը սաղ լինի:

— Դու ա՞րջ ես, ի՞նչ ես, որ անտառումն ես ման գտիս, — վրա էր բերում խանը և բնդշանուր ծիծաղ առաջացնում: Այնուհետև հրամայում էր, որ Նա իր արքության համար շաթբների կողմէց մի լավ ծեծ ուտեր ու տուպանք է ճարեր:

Գալիս էր ներկարաբոր, որին դարձյալ հարցնում էր.

— ի՞նչ մարդ ես, ի՞նչ հավատի ես ծառայում:

— Ներկարար եմ, խանը սաղ մնա:

— ի՞նչ է նշանակում՝ ներկարար ես. ի՞նչ են անում այդ ներկարար պարագաները:

— სამარ սალ ძმით, — պათავასწანით ებ წა, — ნერქარატნერე აյნ ამარტლები ხნ, ყრინდ საქოთა მზე გიცრნ ხნ კინთა ს სა ღამით:

— Վայ, շան շան որդիներ, դուք ի՞նչ մարդ եք, որ սպիտակը չուրն եք կոխում և սև հանում? 76:

«Թատավորը» տուգանք ու կաշառք է հավաքում (սա նոր չերտ է՝ մահմեղական արևելքից եկող), անվճարունակ-ներին «բանտ» ու «աքսոր» ուղարկում, ոմանց «կախաղան» բարձրացնում՝ կախել տալիս թեատակերից Այս ամենն ար-վում է ծաղրով, կատակով ու սրամտություններով՝ որքան

76 ፩. የጤንያና, ክርክ, ማረከር, 18 87:

մեղքը փոքր, այնքան պատիժը մեծ: Այսպես գրամ, ուտեղիք ու գինի են հավաքում և խաղն ավարտոմ են լնդհանուր խնջույքով: Սա, իհարկե, խաղի աղավաղված վերջաբանն է:

Սյուժետային պատկերն ավելի կատարյալ է Վ. Զերծը՝
նաև յանձնի՝ 1893 թ. արևմտահայ գյուղերում դիտած «Շահ-
շահ» խաղը: «Մեկն ընտրվում էր ուս կամ շահ, երեսը մը-
շահ» խաղը: Այս ընտրվում էր ուս կամ շահ, երեսը մը-
շահ» խաղը: Այս ընտրվում էր ուս կամ շահ: Եթե մեջքը մը-
շահ» խաղը: Այս ընտրվում էր ուս կամ շահ: Եթե մեջքը մը-
շահ» խաղը:

Այլ իմն գել, թալլ (թի այլ) իմն գել,
Գացեք, բերեք Նատոյի տիլ (քած շուն).
Նատոն քնի խոր քուն,
Կեկեն (շունը) ցուի վեր զիսուն.
Անձեղ փախի, մտի տուն,
Ջարկեց, կոտրեց զելի ճան.
Փախավ, մտավ աճմու դեղ,
Մինձ խորձ քաշեց վըրեն թեզ:

Այս խմբին ընդառաջ էր գալիս մի ուրիշ խումբ, որը նույնպիսի պատրաստությամբ դուրս եկած էր լինում մոտակա զյուղից, Կանչում էր գավուլ-զուռնան, որը Հենց որ սկըսում էր ածել, այդ երկու խմբերը հարձակվում էին միմյանց վրա և սկսում կուպելու⁷⁷:

Դաստիարակության մեջը ծանոթ է «Արեղաթողի հանդեսից»: Անոնթ է նաև խմբերգը «Տարոնո պատմությունից» այլանական, ավելի հավանական է՝ էզոթերիկ-հմայական ուսուքերով: Կատակերգականի պատկերացումը, ինչպես լիբեղաթողում», այնպես էլ այստեղ ևուրիշ խաղերում տիպիկ ժողովրդական է՝ եղջյուրավոր գլխարկ (մեզ անհայտ որդիքանիշ), ցնցոտի, աղք ու մուր, ցնցոտիավոր պարագորերի խումբ, ամբոխային, աղմկալից մթնոլորտ: Երկու խըմ-

77 Նույն տեղում, էջ 89, 92:

բերի հանդիպումը և բախումը ֆրատրիալ հակասության հիշողություն է: Ի դեպ, պարերգական տրամախոսությունը (գիխորեիա) նույնպես ֆրատրիալ ծագում կարող է ունենալ Խաղի շարունակությունը «կարմինա-տրիումֆալիա»: Հաղթողները բռնում են պարագլիխն կամ շահին, նստեցնում ավանակին՝ թարս, ավանակի պոչը տալիս են ձեռքը և զուռնա-դժողի նվազագությամբ, ամբոխի ազմուկի ու հարայհրոցի միջով տանում դեպի գետը, կրակ տալիս ուսերին ամրացված ցախի խործը և շահին գցում գետը: Երկրորդ տարրերակում շահին գցում են ցորենի հորը: Երկու դեպքում էլ ակներեւ են պաշտամունքային խորհրդանիշերն ու ծիսային շերտերը: Կա նաև երրորդ մի ավարտ: Հայտնվում է բահանան խաչ ու ավետարանով, մեկ-երկու ազոթք է կարդում, շահին իշեցնել է տալիս ավանակի վրայից և հաղթվողներից փրկանք պահանջում: Իրավիճակը կարծես թե փոխված է, բայց դարձյալ տեղի է ունենում անսպասելիություն: Հաղթվողները միանում են հաղթողներին և քահանային գետին տապալում՝ հողաթավալ, ցիխաթավալ: Վերջապես միջամտում են դյուդի ավագները և մի կերպ քահանային աղաւում զվարձացող ամբոխի ձեռքից: Քահանան դյուդի մեծամորների օգնությամբ վախչում է ուսունա-դժողի աղմկալից երաժշտության և ամբոխի հասուայրոցի ուղեկողությամբ⁷⁸:

իազդի մթնոլորտը և սյուժետային տրամաբանությունը նույնի են, ինչ «Երեղաթողի հանդիսում» և կրկնվում են ստեղծաբանական տարրերակներով:

Խաղի բոլոր գրառված տարբերակներից թերևս հնարավոր է կազմել մի համահավաք նկարագրություն, բայց դա կտա՞ր արդյոք հնագարյան պարերգական դրամայի լիակատար պատկերը։ Խաղի գրամատիկական առանցքը դատողի վիճակն է իր «մակընթացությամբ» ու «տեղատվությամբ» և ծայրահեղ ու անսպասելի կետերով։ Նոր նստվածքներից

գուցե այնքան էլ էական չէ արխետիպի պատմական կոնկ-
բնական մահմեղական բռնատիրողի կերպարանքով։ Բայց
դա իր ճետ բերել է խաղի ոչ միայն բովանդակային հիմքի
քայլայում, այլև զրամատուրզիական էառուցվածքի փլու-
թում։ Եատ տարբերակներում մոռացվել է իրադրության փո-
փոխությունը. դատողը վերածվել է հարկածավաքի ու կա-
շառակերի, իշարկե՝ անհեթեթ ու ծաղրանկարային, բայց
անպատիժ։ Այս փաշան կամ խանը իր վեգիր-շաթիրների
անկարգ ու ծաղրվող խմբով շրջում է զյուղում, երբեմն տնից
տուն, շպանում, պատիժներ սահմանում, փեշքեշներ հա-
վաքում հավ ու ճիվ, յուղ ու գինի, միրգ ու շարադ, և խաղն
ավարտվում է կերուխումով։ Այժի մորթին, պարող այծա-
մարդը, գինին, թոնրի խուզն ու խաշերկաթը, «դատավորի»
գլխին մաղվող ալյուրը խալի մեջ գործում են անխորհուրդ,
զուտ որպես կատակային վիճակն ընդգծող հանգամանքներ,
և դա շատ հասկանալի է՝ սիմվոլների իմաստավորկումը օրի-
նական է։ Բայց երբ դատողը չի ընկնում դատվողի դրության
մեջ, եղծվում է զրամատիկական խաղի տրամարանությունը։
Բացիու «Սալբի» վեպում նկարագրված խաղից երևում է,
որ պարսկահայերի մէջ XIX դարի կեսերին «դատավորի»
կերպարին տրվել է նույնիսկ հերոսական տեսք։ «Թանի
զվարացալի խաղերով են անցնում բարեկենդանը մյուս պա-
զցող ազգերը. բայց հայը յուր բարեկենդանի խաղերի մեջ
անգամ ոչ մի ուրախալի իրողություն չի հանդիսացնում,
որովհետեւ աշխարհիս թատրոնի մէջ, նրա կյանքը անցել է
ցագալի եղերգությամբ, նրա օրը միշտ սկ է եղել, նա չէ ճա-
շակել ոչ մի ուրախություն»⁷⁹. Հեղինակի ոռմանտիկական
երեակայության մէջ իրականությունը պատկերանում է
կարծես շափականցված։ Բայց կա մի ճշմարտություն։ Պարս-
կահապատակ հայը գուցե չէր կարող իշխողին պատկերել այն-
պես, ինչպես ուսւահպատակ հայը, որին տեսնում ենք
Պոռշյանի «Հացի խնդիր» վեպում։ Եվ Բաֆֆու, և Պոռշ-
յանի նկարագրած խաղերում շատ քիչ բան կա հնադարից ու
միշնադարից։ Փորձենք, այնուամենայնիվ, զուգազրել երկու

78 Նույն տեղում, էջ 92:

79 Ըստ Ֆ. Խաչիկովի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 205—206:

Բաժիքի

Փողոցի մէջ ձիւվոր և հետեակ մարդկանց խուն բազմություն է արշավում: Քրդի էշիրաթի փառավոր հագուստով բալորից առաջ լնթացող ձիւվորը՝ մի ջղոր խան է ձեացնում: Նրա հաւայան կրպասից դուշու թիֆչի խայտաձամուկ դրշակները փորդիում են քամու հորձանքի դիմ, նրա փակնդի դունդգույն փաթեթը փալլում է հարյուրավոր գույներով: Հպարտ, փէվելով, նստել է նա մի պատվական երիշարի վրա, որի պարանցը զարգարված է արծաթի ռաշմայով (պալաբակապով). նա զինված է այդ արքարու ցեղի ջղոր իշխանների պես, արարտիանի կեռ թորոց քարոզ է բնկուծ նրա կողքին, ձեռքին ունի եղեռակայտից թիքուն մշրամ (նիշակ), մի լայն զնդկական վահան՝ թափանցիկ ապակենման կաշուց՝ զցած է նրա մէջքի վրա, զաքարի զաշուցը մի զույգ ատօքանակների հետ, թիք խրած է նրա քիրմանի շալի հաստ գոտու մէջ, փորի վրա: Եթե մէնք վեր տանենք այդ ծայսածած իշխանի երկնից նրա սարսափելի զիմակր՝ կտեսնենք մէջ ձանոթ նենոց պատկերը դրա տակ, յուր չի աշեգործ, ու զանդրիցած մարտուք

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

Եթ աշա խանը իշի վրա նրանու մտայ տանութերի բակը:

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

Պառշան

Ուռած-ուռած բաւմած է մէկ փարբեցի եղջաբր իշի վրա, պուլ ձեռքին բանած, երկու զեսի ևս՝ մի երկար գերեմաստի ձիւսու և մյուս ձեռքին իրեն չիրու դրսի զնչին զեմ արած, նրա զըլիին գրած է մի զգզած պարսից խանի երկար զտակ՝ վրան զին փալասներ փաթաթած. Նրա երեսը քամած է աթարով վառվով տանօձորի մուր, նրա վիզը ձգած է զանապան ոսկրների կտորներից շարի. Հազած ունի նա մի պատվառուուն, ծլանքները հազար տեղից քարշ բնկած պարսիկ արկալաշինեցին. Նրա կուրծքը բաց է, նույնակա մրով սեաշրած, կողքից և երկար փալտե սուր կամած առաջ երկու երկու երիտասարդ. Նույնակա ալլանդակ հագնված, քաշում են իշին սանձը, երկուսն և քամակիցը մի-մի մէծ զավականի ծայրերը սրած՝ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

Եթ աշա խանը իշի վրա նրանու մտայ տանութերի բակը:

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

— Զաւ, չաւ, ոչ, չոչ, զնա, այս սատկած էշ, ինչ ևս նազ անում, ևս պատիվը խանին ա, քունը չո չի, — ասում էն բրդունք անհամատեած առաջ բուռ են իշին, զափ ու դուռնեն առաջն ածելով՝ քաշում է այդ հանդեսը դիսի տանութերի կտորը, իսկ խուն ամբութը միշտ յարի է կանչում:

Ուաներն են նիրկայացնում. որանք բոլորը պարսից զին ձեր զրա՞ ևն զագել, գիլներին թաւատման սաղամարտեր՝ ուրածայր վերշավորությամբ, երկաթի օգակներից ցանցատասակ հյուսած հագուստով զրաշաճությամբ, ձնուրին նիզակ և թուր:

Հետևակ բարձությունը բաղկանում է հետարքերի երկխաներից և զատարկապորտ մարդկանցից, որ միմյանց զրելով, աղազակելով ման են զալիս փողոցի ցողոց, և ամեն մի դուն առաջ կանգ առնելով կուզում են՝ «սուլաթ, սուլաթ»— այսինքն պաշար, պաշար:

Տանեաբը զուր է գալիս: Մի գեզանի արալի (շաթը) պատգամախոսում է.՝ «Անմատ-խանը— որին աւտված երկար կյանք տա, փարք ու պատկված տա, որի թուրը աւտված միշտ կտրուկ արած է առաջ բուռ են իշին, զամար՝ մի մի համարիլ, երեակացիք մրի ու ալլորի մէջ կուլված մի գոնզ միս:

— Գլուխ, որ էստեղ տես, ամեն կողմից վեր են կալնում անեղու անասունին յուր վերա բաղմած խանինի համար, կուզում է բազմությունը, իսկ վերելիցը ալլորի շաղ են տալիս խանի և իշի գլխին: Փոշին ողջ բակը բռնում է, բոլորը ալյուրատվում են, ու երեսին կամ գլխին էլ որ քիչ է թափվում, ինքն յուր մէկից մերժից վերցնում՝ քուսում է յուր երեսը, իսկ մեր խանի համար՝ մի մի համարիլ, երեակացիք մրի ու ալլորի մէջ կուլված մի գոնզ միս:

— Գլուխ, զլուխ տվիք, Աշտարակու իշխաններ, մ'ք ողըրմած խանին,— կարդացրում է ընդհանուր կտւակարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայիցն և իրանց տեղը կանգնած՝ խոնարհությամբ զուվի լշցնում: Վայ նքան, ով մի փոքր ուշ զուվիք կուշցըց, աշբով է անում խանն յուր կառավարչն, և բարակ ճիպուրը կլզում է այդ հանգուն մարդին:

— Ֆալախա, — Հրամայում է խանը— քաշեցիք տանութերին մէկյան:

Տապը-քամնը ալլանդակ հագնած երկխանարդներ մասնում են տանութերին, պակիցնում են և ուները փալախի մէջ ոլորսմ:

— Հարցըրու զլան, — Հրամայում է խանն յուր նաղիրին,—

նրան: Բայց խանը չէ կամ հնում
հնանալ, շաթիրը նրա կողմից
ձայն է տալիս, թե խանը պահան-
ջում է վիշտրասի, այսինքն՝
նրանց հացն ստեղու համար —
առամների վարձ, տալիս են մի
քանի աբասի փող ևս:


Այսպես, զյուղի բոլոր տնե-
րից առաս պաշար հակաբելով,
զնում են զյուղից դուրս, մի
առանձնացած տեղ և բոլոր բն-
կերներով, մինչև կես գիշեր սկբ-
սում են կերուխում անել և ուրա-
խանալ⁸⁰:

Դա քանի գլխանի էր, որ մեր
հրամանը շկատարեց, մեզ շան
տեղը շրցեց, մեր առաջը չեկավ:

— Թողոթյուն կանես, խանն
ապրած կենա, — խնդրում է տա-
նուտերը պառկած տեղից. — Ես
որ մեծոթյունի համար պատրաս-
տություն էի տեսնում բատեղ իմ
իշխաններով, անսում ես՝ հրա-
մանոցդ համար սուփրեն բաց ար-
քած ա, վարդի շարքաթը շահքա-
սու մեջ լիքը հազիր դրած, ավ-
դուշը ծողու ծերին կախ արած, որ
հրամայես թե չէ՝ խորովենք, ա-
նուշ անես, քո ընծեղ էլ, լավ
մտիկ տուր, ոտները կապած գա-
ռու բատեղ պատրաստ, երբ որ
ուղին՝ փլավի գլխին առաջդ կր-
ւերենք.

— Աֆարիմ, աֆարիմ, տա-
նուտեր, տղեք, բաց թռղեք-
դրան⁸¹:

Երկու հեղինակները նկարագրում են նույն խաղի (նկ.
12) տարբեր զբանորումները: Ուշագրավ է մի բան. խաղի
ոիթմը նույնն է. հեղինակները միմյանցից հեռու և անկախ
կարծես տող առ տող ձայնակցում են մեկը մյուսին: Բայց
թվում է նաև, որ ոչ այնքան խաղերի տրամադրությունն է
տարբեր, որքան հեղինակների վերաբերմունքը: Հարկահա-
նոթյան թեկուզ կատակային պատկերը ոռմանտիկ վիպա-
սանի սրտով չէ, և նա շրջանցում է խաղի մանրամասները.
«Ճենք ավելորդ ենք համարում նկարագրել բարեկենդանի
այն բազմաթիվ խեղկատակները...»⁸²: Պոոշյանի համար կա-
րելոր խաղի կատակային մանրամասներն են, և դրանցում
են ի հայտ գալիս դատողի ու դատվողի վիճակները, խաղա-
յին անսպասելիությունները: Դրությունները փոխվում են




Նկ. 6. Ալեքսանդրիայի Բատրոնը (Փրագմենտ):

80 Նույն տեղում, էջ 206—207:


81 Գ. Պոոշյան, Երկերի ժողովածու, Հ. 1, Երևան, 1953, էջ 338—339:

82 Բաֆֆի, նշվ. հատոր, էջ 207:



Նկ. 9. Լուսավորիչ գլուխարանը:

խոսքից խոսք, արարքից արարք: Նախ դատողը, իր «շքախմբով» հանդիրձ, հարևան գյուղից է (ֆրատրիալ հակասության հիշողություն), և առաջին դատվողը այս գյուղի առաջին մարդը՝ տանուտերը: Գատվողը գետին տապալված, ստքերը ֆալախայում ոլորված վիճակում է և հաճոյախոսության ցույցիր է անում: Ի վերջո նա արդարանում է և ազատվում կապանքից: Իրաղրությունը շրջվում է: Ազատվողը «դատավոր» չի դանում, բայց իր պատրաստած դառն ու



Նկ. 12 «Խան» խաչը բատ Հ. Քացակյանի:

թթու անակնկալներով Խանին դնում է դժվար կացություն-ներում: Խանը հնարամիտ պատասխաններով ու արարքներով պետք է պահպանի իր՝ «ղատավորի» վիճակն ու հեղինակությունը:

Առնում է իսկոյն մեր տանուտերը զավաթով լիբր քացախը և խոնարհուամբ մատուցում խանին:

Շատ էլ լավ գիտի բարձրապատիվ խանը, որ շաբրամի կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ թունդ քացախ, բայց ոչնչ դիմք չցուց տալով առնում է ձեռքը և մոտեցնում բերանին:

— Ծիա՞յ, ինչ լավ էր շինած, սիրու հովացավ, շատ ծարավ էի:

— Այ աղա, հորսը մոտ բերեք, — Հրամայում է տանուտերը:

Վերջնում են զահելները ձողու ծայրին կախած սպանած ազգավոր և առաջ է երում:

— Ֆարբա, — Հրամայում է խանը, — վեր կալ ես կաբակը, երբ որ մեր երկրը կերպանք, փլավի գլխին տապակած առաջ կրերես

— Հումեկ բեր էդ գաւոր, — տնօրինում է տանուտերը:

Մոտ են բերում ուսները կապած, տեփրի մեջ զրած սև կատուն և համեցեք անում խանին³³:

Երկու կողմերն ել հիմարի գեր են խաղում: Բայց իրավիճակը երկար տեղի չի կարող. դրությունները պետք է փոխվեն: Խանի գերակատարը կարող է շարունակել. նրա հնարամտությունից է կախված գործողության հետագա ընթացքը: Բայց նա պետք է շատ ըրարդացնի կոլիզիան, քանի որ դիմացինի նախատիսած անակնկալները կարող են մի տեղ սպառիլ: Բայցի այդ Խանը պետք է վերականգնի իր՝ «ղատավորի» դիրքը, այլապես խաղը կզրկվի իր իմաստից: Ընդունելով քացախի բաժակն ու սատկած աղուալը Խանն արդեն ի շիբ է դարձրել տանուտերի ունակությունները: Մնում է վերսէնել մեղադրանքը, և զրա առիթը սև կատուն է, որ հայտնվել է երկու ֆրատըիաների միջև: Խանը սկսում է հոփիորտալ, բայց նրա զայրույթը կանխվում է. կատուն մեջտեղից վերացվում է, մեջտեղ է բերվում աստծո զառը:

— Այ անպիտաններ, ձեր գաւը կատու գառա՞վ. շուտ, շուտ կապուտիցեք Աշտարակու բալոր իշխաններին, քոթի միշին պտի փատճնեմ, բնշանք որ խէցները զլամիք զա, էլ ես կատուն ոչխար շինեն, — Հրամայում է խանը: Բայց նորա այս հրամանն էլ չի կատարվում, որովհետեւ խսկոյն

մլուս կողմից առաջ է բերվում մի մեծ և պարարտ որձ ոչխար և գյուղի կողմից ըննայիլում խանին:

— Շատ շնորհակալ եմ Աշտարակ զեղի մենձ ու պատկից, իրանց սպատիվն իմ աշքի, իմ զլիի վրա...³⁴

Կապէց այստեղ կարող է ավարտվել, բայց «ղատավորը» իրավությունը սրելու նոր առիթ է գտնում: Նա թողնում է տանուտերին ու մեծավորներին և դատի հանդիսարան է քաշում «քավության նոխազին»՝ մի անմեղ մարդու և նրան ստիպում ծունը դնել իր պատվական նժույգի՝ ավանակի առջև:

— Բատեղ կա մի Խեշաննց Խեշան, նրա համար ինձ խարար ա հասել, որ շատ վատ մարդ ա, որ օրական նրա տանը հինգ աղքատ կշտանալու տեղակ տան ա կշտանում, որ շաբաթ-կիրակի ժամ զնայու փոխուրն, լրի կուն-առավոտ ժամից ետ չի դառնում. Էլ մարդին ես պահի պատմամ, թե որ զա ձեր միշին ա, էս ահաթիս զա իմ առաջին չորի: Հը, շուտ, ուր ա էն մարդը, տանուտեր, ձեռաց բատեղ ստեղծիր³⁵:

Խանի վերջին խոսքերը միայն սրամտության համար շեն ասվում: Էաղի կանոնը պահանջում է, որ կեղծ ամբաստանության ևնթարկի որևէ անմեղ մարդ: Եթե գյուղում չկա կամ տվյալ պահին ներկա չէ այդպիսի մեկը, նրան պետք է ստեղծել՝ Հորինել: Բայց ահա, այդ անմեղ մարդը չի ներկայանում և ուղարկում է իր կաշառքը՝ խանի «աշքը կապելու» համար:

— Ես արագը գրկել ա, խանն ապրած կենա, քո մեծությունի համար Խեշանը, որ անուշ անես, ինքն էլ հիմի քո զուլուզին կդանվի:

— Գլուխ տուր, գլուխ տուր, իրեք ճետ զլամիք տուր խանին, Խեշան ազա, — ձայն է տալիս ֆարբաշը, և խեղճ Խեշանը կատարում է յուր պարագը:

Դարձրը քաշում է Խեշանի կոնիցը, շոքացնում իշի առաջին: Բավական միջոց լուսիցունից ճետո բարեհաճում է խոսել խանը:

— Ես միտք ունեի, Խեշան աղա, շատ խիստ պատճել քեզ, համա քո լնձն իմ աշերը կապեց. զեր կաց, արի ձեռս պաշիր ու աղատ են³⁶:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, էջ 340:

36 Նույն տեղում, էջ 341:

Խանը ծունկի է իշեցնում ևս մի քանի «իշխանների»՝ խորիմաստ հայացքով լուսմ, ստանում իր ընծաները, բոլորին ներում և «մնացեք բարով»: Բայց խանին թուզ չեն տալիս մեկնել: Բոլորը շրջապատում են նրան և կարող են ցանկացածի պես վարվել: Խանն իր «շքախմբով» գերի է: Կարող են նրա գլխին բամբել, մորուքն այրել, աքացի հասցնել, եթե լավ չի խաղացել դերը, լավ չի վվարձացրել: Բայց աշտարակցիներն այդ բանը չեն անում. նրանք լավ են ճանաշում Փարափի գյուղի հայտնի կատակարան ու մասիսարա Եղագարին: Բազմեցնում են նրան պատվավոր տեղում, կենացը խմում, խմում են նաև երկու գյուղերի միաբանության համար «և ապա նույն կերպիվ յալլա կանչելով, իշխն բարձրացրած» ճանապարհում հարեան գյուղը: Եղագարին ճանապարհում են և սկսում գովարանել աշտարակցի մասիսարա Ղուկոյին, որ այգտեղ չէ, գնացել է Հարեան գյուղերը՝ խանովյուն անելու: Պարզվում է, որ այս Ղուկոն ամենաճանաշված ժողովրդական կատակերպակներից է և Բարեկենդանին շրջում է ամբողջ Արարատյան գավառում: «Ղուկոն երեկ եղմիածնումն էր,— պատմում է մեկը,— շատ քեֆ շանց տվեց, կոտորեց ամենքին ու թողեց ծիծաղեցնելով»⁸⁷: Ուրեմն, Ղուկոն, իր մասիսարա տղերքով, մտել է «Արեգաթողի Յանդես», խառնվել աթուրմա ու լախտի խաղացող վանականների խմբին և բոլորին հավաքել իր շուրջը: Բանել է մի վարդապետի, շարձրել իր «գինակիրը». Ճեռքն է տվել իր ավանակի սանձը, թե՝ պահիր մինչեւ զործա վերջացնեմ: Մի աթոռ է դրել Ղուկոն մայր տաճարի դիմաց, Հրապարակի կենտրոնում, նստել ու ներկայացում սարքել, թե՝ տղերը, առաջորդերը վարդապետներին և եպիսկոպոսներին, դրանց դատու դատաստանն անեմ: Ղուկոն մի քանի ժամ իրենով է արել բոլորին, վվարձացրել աշխարհականին ու հոգեորականին, «Արեղաթողը» մի լավ ծաղկեցրել ու նվերներ հավաքել՝ աշխագին ապրանք՝ թանկարժեք կտորեղեն, գրանի դանակ, երեսարքի, սապոն... «Ես որ ասում եմ Ղուկոն դոշաղ ա...

աշտարակցի ա, մեզ ո՞վ կհասնի»⁸⁸,— պարծենում են համագյուղացիները:

Պողշանի այս նկարագրության մեջ խաղը կարծես կիսատ է մնում. խանը հեռանում է ոչ միայն անպատիժ, այլև պատվով: Դա, հավանաբար, խաղի տարբերակներից մեկն է: Ավելի վաղ գրառված մի տարբերակում, «Սոս և Վարդիթեր» վեպում, «Դատավորը» պատժվում է: Եվ պատժվում է դատը չսկսած: Խաղը նույնն է, թեպետ կոչվում է «Շահ»: Ոչ մի նշանակություն չունի: Հայտնվում է մոմեսիկը, թե՝ «Ճամփա» տվեք, շահը գալիս ա»: Մեկ-երկուսն էլ, թե՝ «աթոռ դրեք»: Դնում են մի ծակ աթոռ: Հայտնվում է Շահը «մի բոզիշի վրա նստած, երեսն ալբոտ, ոսկոսի ալանգեքը շնչին, մի քուլա բամբակից միբուք շինած, մի ոչխարի հին քորք թարս հաքին, մի ճաղոտոված փոստ գլխարկ, մի աքլորի զղա (պոշ) գտակածալին, երկու մարդ էլ գտակները շուռ տված, երեսները մուր քսած, մի մին աթարոց (կրակ խառնելու փայտ) ձեռներին, իշի նողաեն քաշելով»⁸⁹: Շահը էշից իշնեխս ընկնում է, շաթիրները վերցնում են նրան, զնում փալանին, փալանից իշեցնում, զնում աթոռին: Շահը ճառ է ասում, էռի է կոչում «Օսմանլիլի» դեմ... Մասնակիցներից, թե՝ հանդիսականներից մեկը բամփում է Շահի գլխին, մյուսը աթոռն է տակից քաշում, ու մինչ Շահը ոտքի կկանգնի, «մի մասիսարա մարդ» ճրագը պահում է նրա միբուքի տակ, բամբակեր բունչում է, մեկ որիշը փարչով ջուրը շուռ է տալիս Շահի գլխին, Շահը մի կերպ գլուխն ազատում է, կորչում⁹⁰: Սա խաղի իսկական ավաբետական է, որ հանդիպում ենք շատ տարբերակներում:

Բանագետները և գլուխները խաղի ամենատարբեր մանրամասներ են նկարագրում, բայց մեզ համար ամենաէտեկանը խաղի սյուժետային տրամաբանությունն է, որ արդեն հայտնի է, և օպսիսը, որ, թվում է, ակներեւ գրանորում շունի: Խաղը պատվում է մեկ անձի շուրջը, և այդ անձը, անկախ նրանից գտառում է, թե՝ գտառվում կենտրոնում է: Նրա

87 Նույն տեղում, էջ 341—342:

88 Նույն տեղում, էջ 259:

89 Նույն տեղում, էջ 260:

շուրջը պատվողները կազմում են երկու պար, առաջինը «շքախումբն է», երկրորդը ամբոխը, որի մի մասը հանդիսական է, մի մասը խաղի մասնակից: Պարերգական դրամայի օպսիսը ավելի հստակ է երևում կատակերգական երթում կամ կոմոսում: Կոմոսի պատկերն ավելի հստակ է երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանցի (Տեկանց) «Տոհմային հիշատակարանում» բերված նկարագրության մեջ: Սա խաղի՝ Վասպուրականի տարբերակներից է, որ տարածված է եղել նաև վանական միջավայրում, օրինակ Վարագա վանքում: «Դատավորն» այստեղ կոչվում է Փաշա: Ահա Փաշայի և նրա «շքախմբի» պատկերը: «Մի մարդու ոտք հին, պատուած ճզմա հագուցեր, մի պատառ-պատառ եղած սպիտակ վերնավարտիկ հագուցած, մարդ վերնավարտիկի գրպաններու բերանեն ձեռքեր և թերթ դուրս հանած, վրան մի ժամկոտած ու մաշած հապո մի ծփած, էծու երկար ժազերով սպիտակ մի մորուք հարմարցուցած, երես, քիթ ու բերան ալուրի փոշի քսած, այնպես որ աշք հազիկ երեխ, զլուխ մի հարդի սակառ կործած, ձևու մի երկար ծող տված՝ իբրև շրուխի կոթ, մեկ ծայր լայնաբերան փարշ մի անցուցած՝ իբրև շրուխի լուլա, ետև էշու գլուխ և երես դեպի էշու ետև, էշու վրա հեծուցած, 10—12—15 պատանիք և երիտասարդք դատաստանի պատկերի միջի սատանայից և դեպ կերպարանք մտած, փաշայի շուրջը բոլորելով՝ յուր հավատարիմ պաշտոնյացք, երթան ահուելի և զարժուրելի տեսողաց»⁹¹:

Այս պատկերը թվում է ավելի հին կամ հնին աղերսվող: Կատակերգականի ժողովրդական ըմբռնման հատականիշների կողքին նշշմարդում են և ծիսացին ատրիբուտներ (այժմ մաղից մորուք, դեմքին քսած ալլուր), նաև սարսափի խորհրդանիշեր: Խաղը նախատեսում է հակասական զգացումներ՝ ծիծաղ և սարսափ: Փաշան գնում է հեծյալ՝ ավանակին թարս նստած, այսինքն թարս է քշում իր էշը, բայց այնպես, «որպես թե բովանդակ աշխարհի տերն ինքն է», իսկ նրան շրջապատող «շքախումբը» առաջ է ընթանում վայրենի աղաղակներ արձակելով: Դերի ու սատանաների այս շրջան-

91 Վ. Թովայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 80:

կենտրոն երթը ժամանակ առ ժամանակ կանգ է առնում հանդիսականներից մեկին «ձերբակալելու» համար, ամբոխը փախչում է սարսափած, «փաշայի սեպունդ մարդիկ» հետապնդում են, բոնում ում կարողանում են և շրջանի կենտրոն գցած, տանում: Խումբը կանգ է առնում զյուրի հրապարակում, եկեղեցու մոտ, Փաշան նստում է ամբոխի կենտրոնում և «սկսում զատը»: Փաշայի գահավորակը կիսամաշ մի կողով է, ծխամուճը կավե փարչ, որի մեջ այրվում է աթար Փաշան փշում է և ծուխ արձակում: «Դատ-բեղադր» տեղի է ունենում ծխի ու աղմուկի մեջ: Փաշան հարցաքննում է, պատիժներ ու ահմանում և սուրճ պահանջում, մատուցում են մրացուր միծ ամանով: Փաշան ձեացնում է, թե խմում է՝ մրացուրը թափում է այժմից սարքած, ճերմակ մոռուքին: Արևելյան պատվի խորհրդանիշը անարգված է, և Փաշան այլևս պատվազուրկ է՝ նրա հետ ամեն կերպ կարելի է վարվել: «Դատավորը» խաղը ու խայտառակ» է լինում, գործողության ընթացքը շրջվում է, ամբոխն աղատություն է ստանում:

Այստեղ է խաղի պերիպետիան:

Կոմոսը աղմուկ ու ծիծաղ է բարձրացնում, բայց ցուցք դարձած պարագլուխը տեղի չի տաքիս, շարունակում է հոխորտալ ու սպառնալիքներ կարգալ: Փաշան փրկագին է պահանջում, և նրա առջեւ է զրվում աղբով լի կողովը: Եթե այս պահին բերակատարը կարողանում է հնարամիտ գտնվել՝ որևէ սուր խոսքով կամ արաքով, ամբոխը հետաքրքրությունից լուսն է, իսկ եթե ոչ՝ նրա տակից գուրս են քաշում «գահավորակը», և Փաշան տապալվում է: Տեկանցի գոտուած եռկրորդ տարբերակում իրարանցման պահին որևէ մեկը ճրագը մոտեցնում է Փաշայի «սաղավարտին» եամ մորուքին, Փաշան զեն է նետում այրվող կողովը ու մինչ ուզում է աղատվել այրվող մորուքից, նրա գլխին է դատարկվում զրով լի կուժը, և «խաղը ու խայտառակը» կատարյալ է՝ «ինկվիուցիան» ու «մկրտությունը» խառնվում են իրար, ովարձացող ամբոխը հարձակվում է Փաշայի վրա: Բախման վիճակը հասնում է իր կումինացիոն կետին: Ինչ է լինելու «դատավորի» վերջը՝ որոշում է դիպվածը: «Վայ-

այն մարդուն,— գրում է բանահավաք Հովհաննես Մալխասյանը,—որ հանձն կառներ զադի (դատավոր—Հ. Հ.) դառնալ. Էլ ինչ հայցոյանք, էլ ինչ հարվածներ ասես, որ շորս կողմից չէին տեղում նրա զլիխն»⁹²; իրական ու պայմանական վիճակները շփոթվում են, կյանքի իրադրությունը շփոթվում է խաղի իրադրության հետ, իրար են խառնվում ծիծառը, զայրուցիքը, զվարձախոսությունը, հարայքոցը, զուռնա-դջոլի աղմուկը: Հանդիսականներից շատերը, որ լավ գիտեն խաղի պայմանները, շփոթում են իրականն ու պայմանականը, դերն ու դերակատարին: Դերակատարն էլ, երբ քիին է դիմում այրվող բամբակի կամ այծամաղ մորուքի հոտը, մանավանդ երբ աքացիներ ու բունցքի հարվածներ է ստանում, կորցնում է պայմանականության զգացումը: Կրակից փախչում է, զուրն է ընկնում, շրից փախչում, ալյուրի տոպրակն են զլիխն թափ տալիս, աչքերին ալյուր են փշում:

Փաշայի մորուքի այրելը այն նշանն է, թե ամբոխը դառնում է դատավոր, Փաշա «քավության նոխագ», դա կատարում է «թագավորը մերկ է» հակատագրական խոսքի դերը: Փաշային շրջապատող ամբոխի օղակը՝ «խորոս-կոմուը» գնալով նեղանում է, փախուստի նանապարհները փակվում են: Հնարամիտ ու կատակաբան դերակատարը կարողանում է միջոցներ գտնել (դա նրա շնորհքից ու տաղանդից է կախված)՝ սրամտություններ է անում, գլուխկոնծիներ տալիս՝ մրակոլու ու ալրաթաթախ և, եթե հասցնում է ժամանակին ազատվել «խաղք ու խայտառակ» կերպարանքից՝ դեն նետել ցնցուտի թիկնոցը կամ այծի մորթին, խաղից դուրս է գալիս պատվով, նրա անձը դառնում է անձեռնմեկի, նույնիսկ մեծարելի: Դերասանն ստանում է իր խաղի գնահատականը⁹³:

92 Նույն տեղում, էջ 133:

93 Դերասանին մեծարելու կամ անարդելու սովորությունը, ինչպես նկատում ենք, գալիս է ժողովրդական դրամայի դատական բնույթից և ունի հնաւարյան ավանդներ: Հայտնի է, որ հին Հռոմում վատ խաղացող գերասանը ներկայացումից անմիջապես հնատ ծեծի էր ենթարկվում: Հայտնի է նաև, որ Շեքսպիրի դարաշրջանի թատրոնում հանդիսականը կարող էր աղմիկել, սովոր ուտելիքի մնացորդներ նետել բեմ, նույնիսկ բարձրանալ բեմ, միջամտել խաղի ընթացքին, կոիվ սարքել: Բարքերի միջնադարյան

իթե Փաշան չի կարողանում կամ չի հասցնում ազատվել ծպտումից, իթե նրա միջոցները չեն ազդում ամբոխի վրա, պիշայի «շքախումբը» իրարանցում է ստեղծում, պառակտում կոմուին, և երբ իսկապես «շունը տիրոջը չի ճանաշում», Փաշան մի կերպ դուրս է պրծնում «կախարդված» շրջանագծից և անհետանում, իսկ «շքախումբը» փախչում է տարբեր ուղղություններով: Բոլորն ի վերջո հավաքվում են աշքից հեռու մի տեղ, ազատվում «դիվական», «խայտառակ» զգեստներից ու ասպազենից, լվացվում և «յուրյանց մաքուր հանդերձ հագնելով գան բազմեն ի շարս մարդկանց»⁹⁴:

Կատակերգությունն ավարտվում է, սկսվում է մեծարանքի խնջույքը, որն արդեն խաղային ու տարերային չէ, այլ ծիսային ու կազմակերպված և շատ գերով նման է պատարագի: Սա նույնպես շրջանակինտրոն ծես է, ըստ ժողովրդական ըմբռնման՝ արարողություն, որտեղ գլխավոր անձը սեղանապետ—«արարողապետն» է քրմական իրավունքներով ու քրմի վարքագծով: Նա գոնի է հեղում, բոլորը պետք է գինի հեղին: Տեղի է ունենում պարզ ծիսական տրամադրություն. մեծարողն ասում է «կենդանություն», մեծարվողը՝ «անուշ արքայություն», ապա փոխվում են զերերը՝ մեծարվողն է մեծարում, մեծարողն է մեծարվում: Այս զվարթ ու լուրջ ծեսը հայոց ավանդական խնջույքն է, ուր օրհնանք ու հաճոյախոսություն է շոայլվում, իհարկե «արարողապետի» թույլտվությամբ, «ում լեզվումը մի քիչ հունարիա, սուվորի ու գինու կամ արագի թասի վրա յա փորձում», և ամենքի խոսքի վերջը նույնն է. «Տեր Աստված՝ վերջներս բարի անես: Կենդանություն: Հավասարական սաղ ըլիք, ուրախ»⁹⁵: Ժողովրդական նվազածուների «զաստան» («դաս գուսանաց») կենացներ է ծաղկացնում, հացն ու գինին որպես էլյանքի հարատեսության խորհրդանիշեր, զարդարում են վայրենությունից բացի, այստեղ տևանում ենք ժողովրդական հին ամանդենքի՝ կառնավալային ազատական դիմական դատի, հարապարակային-ամբոխային խաղերի ու խնջույք-խրախճանշների հետքերը, որոնք անդամանելի մնացին միջնադարյան թատերական կենցաղից, և որոնց նշանները հասան նոր ժամանականեր:

94 Վ. Բոլոյան, նշվ, աշխ., է. 1, էջ 84:

95 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1955, էջ 52:

ուրախության բնմը՝ խրախճանքի սեղանը. շեն պահի աստվածած մեզ, մեր տունը, տոհմը, պագը, ցեղը: Ամեն ինչ պարտվում է քրատրիայի գաղափարի շուրջը:

Թերևս պետք է համաձայնել այն ենթադրությանը, որ դատական խաղերի գլխավոր դեմքը «բովանդակում է հեթանոսական դատող ու պատժող աստվածության տարրեր»⁹⁶, որ խաղի հիմքում կան և մեռնող ու հառնող բնության պաշտամոնքի հետքերը, և նախնադարյան դուալիզմ, և ֆրատրիալ գիտակցությունը⁹⁷: Մեզ հայտնի գրառումներում, իհարկե, գծվար է ցույց տալ հնագար տանող շոշափելի օղակներ, դա երեսում է խաղի տիպաբանության մեջ և առանձին խորհրդանիշերում, որոնք հանդես են գալիս ոչ այնքան խորհրդապաշտական, որքան առարկայական դերով: Ամենաէքականը խաղի հնագարյան և միջնադարյան բնույթն է՝ կատակարանության, ծեսի ու թատերական պայմանականության ժողովրդական ըմբռնումներով, կենցաղի ու պաշտամոնքի միասնությամբ: Մաղրի ատրիբուտները (գլխարկի տեղ պղնձե լազան, կոտրած կամ կողով, նժույգի տեղ ավանակ, ոսեու տեղ աղբ) միախառնվում են ծիսային խորհրդանիշերին՝ թոնրի անթրոց ու խաչերկաթ, ալյուր, գինի, այծի մորթի, եղցյուրներ, նվիրաբերվող գառ և այլն: Միախառնված են հանդես գալիս կատակայինն ու ծիսայինը, ծիծաղելին ու սարսափելին, կատակն ու պատիքը, իրականն ու պայմանականը, կենցաղայինն ու պաշտամոնքայինը: Այստեղ չկա, այսպես կոչված, մաքուր ամբիվալենտ վիճակ, երեատիվածություն, և դա ժողովրդականի առանձնահատկությունն է⁹⁸:

93 Յ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 118:

97 Հմմտ. Վ. Բղոյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 42—48:

98 Ռուս գրականագիտ Մ. Բախտինը միջնադարի ժողովրդական մշակություն է որպես հակազրությունների վիճակ, կենցաղի ու ծեսերկատիվածություն (տես Մ. Բախտին, Տворчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, М., 1963, с. 173): Ավելի արամարդ է Ա. Գորեկի տեսակետը, որ «միջնադարի մշակությունը պատկերն ավելի բարդ է» և այնտեղ պետք է տեսնել ոչ այնքան հակազրության, որքան հակադրամիանության գիծ (հմմտ. Ա. Գյորզեց, Պահանջման հարցերը միջնադարում և առաջնահարցերը մասնաւոր առաջնահարցերը, Մ., 1981, ս. 272—278):

Հստ մեր ընտրած պատմատիպաբանական հայեցակետի, հայ ժողովրդական դրաման ենթադրում է հիմնականում երկու խաղային մողել՝ անձի ու ամբոխի հարաբերություն, ուր գրված է համայնքի (կամ քրատրիայի) համերաշխության գաղափարը, և երկու խմբերի կամ երկպար (զիխորեական) հարաբերություն, որ, անկասկած, ֆրատրիալ հակասությունների հիշողություն է⁹⁹: Կան, իհարկե, տիպաբանական բացառություններ, որոնք այնուամենայնիվ ընդհանուր եղր ունեն վերոհիշյալ երկու մողելների հետ¹⁰⁰:

Երկպար խաղի մի օրինակ մեզ արդեն հայտնի է Զաքարիա Քանաքեցու վկայությամբ: Ուշ միջնադար հասած այս պայմանաձեռ տեսնում ենք նաև XIX դարում: Այսպես, պարագլուխը, Շահ լինի, Խան, թե Փաշա, դուրս է գալիս գյուղից իր օյինբազմասխարանների խմբով և աղտոտ լաթը պարզած որպես գնում է Հարեւան գյուղը՝ «շառ կտրելու»¹⁰¹: Ճանապարհին, պատահականորեն կամ պայմանավորված,

99 Հմմտ. Վ. Բղոյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 44:

100 Շապին-Գարահիսարի խաղերում (գրառում Գ. Հյուսիսյանի) կամի կատակերգություն՝ «Փորսուղ կառնավալ», որտեղ Դատավորից բացի զործում են և հինգ անձ՝ Փորսուղ, Արապ, Ձեյտեկ, Յժիշկ, Շարս: Այս խաղը ներկայացվել է թորքերն և հիշեցնում է մի կողմից փոքրասիհական օրքա-օյտնուն (Հրապարակախաղ), մյուս կողմից խտալական կամենիփա դելլ’արտեն: Միայն դատական բնույթն է այս խաղը մերձեցնում հայժողովրդական դրամային, իսկ այսուժետային տրամաբանությամբ նա շոնի ոչ մի աղերս չնագույն շրանակին տրոն-արքիստիպային դրամայի հնատ: Սա կարծես ուրիշ մողել է, գոյցի դարձյալ չին, հայ միջնադարից եկողդատական գառական կամ առենիլ կապահանքային կամ պատահական միջնադարում է արենիլ կապահանքային բատրոնի ուսումնասիրող կինապ կունոսի տեսակետը, որ ՀԻՀ գորի թուրքայում տարածված օրթա-օյտնուն ծագումով հոնական է և XVII դարից է մուտք գործել Արևելք (Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 61—64): Օրթա-օյտնուի դերասանները եղել են հուներ և հայեր: Հնարավոր է, որ բանավոր դրամայի այս տեսակը կապունենա վաղ միջնադարում տարածված բյուզանդական միմերի թատրոնի հետ:

101 Ժողովրդի մեջ տարածված «դատ կտրել» արտահայտության հակառակ իմաստն է «շառ կտրելը»: Ուրշ գավառներում խաղերը կոչվել են այսպես: Շառ արաբական փոխառություն է, նշանակում է ամբոխ, իւսություն, փորձանք, ամէւտանություն և կապ ունի շ է թ (Ճաղական երգ բառի հետ (Հ. Անայյան, Հայրեն արմատական բառարան, հ. 3, էջ 496):

սրանք հանդիպում են Հարթան գյուղից եկող «շառ կտրող-ներին»: Երկու շառավորիները¹⁰² կանգնում են դեմ-դիմաց և միմյանց դիմում հայջոյանքներով: Ֆրատրիալ պայքարի հիմ հիշողություն է սա: Դրա ամենավաղ վկայությանը հանդիպում ենք Սեբեռի «Պատմության» Անանունին վերաբրւող հատվածում, ուր Հայկի և Բելի կոփին սկսվում է ճիշտ այսպիս:

Զուելի կալաւ Հայկն և ասէ ցնա: «Զի՞ պնդեալ գաս զհետ իմ. դարձր անցրէն ի տեսի քո, զի մի մեռանիցիս այսար ի ձեռաց իմոց. քանդի ոչ մրիպի նետ իմ լմիքո: Պատասխանի ետ թէլ, և ասէ. «Վասն այնորիկ, զի ո՞ի անկցիս ի ձեռ մանկուոյ իմոյ և մեռանիցիս. այլ եկ ի ձեռ իմ, և կեաց ի առան իմում իշաղոլութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զըսականս»:

Պատասխանի համար Հայկն և ասէ. «Շուն ես գու և յերամակէ շանց՝ զու և ժողովորդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսար ի քեզ զկապարճս ամուն¹⁰³»:

Այս հատվածը, ինչպէս նկատել է Հայնրիխ Գելցերը, նախնական-բանացյուսական նկարագիր ունի¹⁰⁴, ի տարբերություն Խորենացու տարբերակի, ուր Հայկն ու Բելը խոսում են դեսպանորդների միջոցով և հոետորական, մշակված ոճով: Քոյոյանը այս հատվածը համարում է ֆրատրիալ հակասության հիշողություն¹⁰⁵: Ըստ իս, տրամախոսությունն ունի խաղային-դրամատիկական նկարագիր և թվում է քաղված է «Հայկեան հանդէս» կոչված խաղ-մրցություններից¹⁰⁶: Հիշենք Գրիգոր Մագիստրոսի խոսքը. «Ուր Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն»¹⁰⁷: Նման մի պատկեր գտա Հովհանն Մամիկոնյանի «Տարոնո պատմությունում»: Պարսից դորավար Վախտանգի զինվորները նույն ոճով են խոսում Գայլ Վահանի հետ: «Այ շաբաթարոյ Գայլ Վահան, մինչ գիտես, եթէ ծառայելոց ես Սրեաց արքային, ընդէր այդպէս

¹⁰² «Շառագոննեալ զլխով, արինուուշ կամ գլուխ խոսվութեան, շառադրություն» (նույն տեղում):

¹⁰³ «Պատմութիւն Սնեբոսի», աշխ. Գ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 49—50:

¹⁰⁴ Մ. Սըլլան, Երկեր, Հ. Ա., էջ 50:

¹⁰⁵ Վ. Բդյան, նշվ. աշխ., Հ. 1, էջ 44:

¹⁰⁶ Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 185—188:

¹⁰⁷ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 59 (թ. 7թ):

անամբթիս յանդկնեալ: Արդ՝ արի, եկ առ մեզ, և լեր հարկատու, ապա թէ ոչ մեռանիս որպէս զշուն»¹⁰⁸: Սա բոլոր գծերով ֆրատրիալ բախում է և ունի իր պայմանական դետերմինանտը՝ «պարուք դէմ ընդ դէմ»: Դրա հիշողություններից մեկը պետք է համարել ժողովրդական «Յարխուշտա» պարը՝ դիմուրեական շարժում: Երկու խմբերը պարում են դեմ ընդ դէմ և ձեռքերով ուժգին զարկվում միմյանց: Դա արտաքին տեսքով նման է հին հունական ողբերգությունների խորային օպսիսին¹⁰⁹: Ֆրատրիալ բախումն մեջ ախոյանները միմյանց ֆիզիկապես ընկճելուց առաջ, փորձում են խոսքերով ընկճել: Դա հատուկ էր նաև ըմբշամարտի ու կոփամարտի հին եղանակներին միջնադարյան խաղահրապարակներում: Մեր հիշատակած վիպական հատվածները թերեւս անուղղակի անդրադրություններ են, գուցե ոչ անմիջապես խաղերից առնըւգած, բայց համոզված ենք՝ խաղերի տպավորությամբ զրոված: Համենայն դեպս, ֆրատրիալ բախումներն իրենց հետքն են թողել երգային-վիպական և խաղային բանահյուսության մեջ: Այների է, որ խաղային այս պայմանաձեռ հետարարություն փոխվել է: Բայց դա պարզ տեսնում ենք դատական խաղերում: Այդ է ասում «Վարդան Մամիկոնյանի ցուցմունք» (Հիշենք յուցք բառը) կոչող ժողովրդական ներկայացումը՝ տարածված շատ գավառներում՝ Հայոց ձորում, Ախալցխայում, Ղարադաղում և այլուր: Կողմերը ներկայացրել են պարսից և Հայոց բանակները, իսկ հաղթող, պարագլուխը՝ Վարդան զորավարին: Պատմական հուշը ժողովուրդը վերաբարտադիր է ֆրատրիալ-դատական խաղի պայմանաձեռում:

Խաղը հանգեցնում է շրջանակենտրոն գործողության: «Շառ կտրողների» խոսքակրիվը դասնում է «փետրակոփիվ». գործում են մահակ ու մտրակ: Հաղթողները գերի են վերցնում պարտված պարագլխին, նստեցնում ավանակին (իհարկե՝ թաբս), կամ՝ որևէ պատգարակ-գահավորակի և աղմկալից ծաղբական երգով, զուռնա-դհոլով պատեցնում են զյուղի փողոցներում: Կրկնվում է հին ու ծանոթ պատկերը: Հիշենք

¹⁰⁸ Հ. Ճավաններյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 182—190:

¹⁰⁹ Վ. Բդյան, նշվ. աշխ., Հ. 2, էջ 83—84: Հմմտ. Քսենֆիան, Անարախիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 118, 267:

Մարկոսի Կրտոսի նմանակ Գայոս Պակիանոսի ծանակումը Սելէկիայում կամ Հովհոս Կեսարի «կարմինա-տրիումֆալիան»: Գյուղական կոմուն ավարտվում է գետափին, առվի կամ որևէ ջրափոսի մոտ: «Շառը» ջուրն են պցում, որտեղից նա դուրս է դալիս «մաքրված» և ստանում իր շարչարանքի ու ստորացման հատուցումը՝ ինչ-ինչ ընծաներ և իր ընկերների հետ մասնակցում է ֆրատրիայի խնջույքին: Այս և «Աբեղաթողի հանդեսի» ավարտակետերը կարծես նման են ըստ սյուժեատային տրամաբանության և տարրեր՝ իրենց սիմվոլիկայով կամ բովանդակային հիմքով: Թվում է, այստեղ կատակախաղի է վերածվում մկրտության խորհուրդը, ինչպես «Աբեղաթողի հանդեսում»՝ հարության խորհուրդը: Այստեղ կա ծիսային-պաշտամունքային որոշակի հիմք, որի ակներև նշաններին բախվում ենք ամեն պահ:

Ծիսային հիմքը նախ և առաջ երևում է սյուժեատային տրամաբանության մեջ: Այստեղ գործում է հնադարից եկող և Ավետարանում հաստատված պարզ սկզբունքը՝ «որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք և որով շափով շափէք՝ շափեսցի ձեզ»: Գործում է կյանքի միջնադարյան-ժողովրդական բմբոնումը. մարդը կամ «թագավոր-դատավոր» է (որոշ գավառներում այսպես են կոչվում խալերը) կամ գամված է անարդարական սյունին, կամ փառքի ու լույսի մեջ է, կամ ետին թշվառության, կամ աշքի լույս կամ ոտքի փոշի: Այս ամբիվալենտ հայացքին միջնադարը տալիս է քրիստոնեական մեկնություն և ստեղծում երկնայինի ու երկրայինի հակասությունը: Բայց ժողովրդական հայացքն այլ է. կեցության ծայրահեղ վիճակները ժողովուրդն իմաստավորում է միասնաբար՝ ոչ որպես հակասություն, այլ՝ մեկը մյուսի շարունակություն. այսօր թագավոր ես, վաղը կարող ես ետին մուրացկանը լինել: Սոցիալական կյանքի այս դիալեկտիկան համերաշխվում է ցերեկվա ու գիշերվա պարբերականության, մեռնող ու կենդանացող բնության գաղափարի հետ: Ժողովուրդը, ինչպես առասպելում, այնպես էլ խաղում, ծեսում, գուշակություններում, երազներում մարդկային-սոցիալականը տեսնում է բնության երևույթների ու առարկաների տեսքով, իսկ բնության երևույթները, իրերը, կենդանիներն

ու բույսերը մարդկայնացնում է՝ մարդուն թարգմանում է բնության միջոցով և բնությունը մարդուն կորհանշական իմաստներ ենք վերագրում խաղի արտաքին, առարկայական ատրիբուտներին, բայց խորհրդանշական է նախ և առաջ ինքը՝ խենթակերպ, էշին թարս նըստած «դատավորը», որին բոլորը նվիրաբերում են ինչ-որբան, ոչ ոք չի հրաժարվում այս նվիրաբերությունից. Էջմիածնի վանականներն անգամ այստեղ ենթարկվում են աշտարակցին սոյինբաղ Ղուկոյին: Ուրեմն, խաղի նախահիմքն խակապիս ծիսական-պաշտամունքային է: Ժամանակը քայլայիլ, ջնջել է շատ նշաններ, բնապաշտական մոտիվները հանգեցրել սոցիալ-կենցաղային փաստերի, տվել նրանց տեղային, պատմականորեն կոնկրետ նկարագիր, որ օրինաչափական է, զոհն ու նվիրաբերումը դարձրել ընծառ ու կաշառք: Հարյուրամյակների նստվածք է այս ամենը, տիղմ ու ամապ, որի տակ խեղդված է հնագույն խորհրդապաշտական շերտը: Դատի միջնադարյան-ժողովրդական գաղափարն իսկ, որ ունի հնադարյան տրամաբանություն (օրինակները մեզ արբեն հայտնի են), դժվար է ընկալվում, մանավանդ, երբ արար «շաթիբների» ու պարսիկ «աարբազների» կողքին, որ տեղից որտեղ հայտնվում է «որսի նաշալնիկը» (Գ. Տեր-Աղեքսանդրյանի գրառում)¹¹⁰, բոլորովին նոր գեմք: Բայց միևնույն է՝ հայ ժողովրդական դրաման իր տիպաբանությամբ մնում է հինգ չի վերածվում XIX դարի կատակերգության, չի ընդունում նոր դրամայի տարրեր, ոչ մի շափով չի ենթարկվում հայոց քաղաքային կենցաղում արմատավորվող գրական թատրոնի աշբեցությանը: Թիֆլիսում XIX դարի 40—50-ական թվականներից կյանք էր մտնում երրորդական տիպի նոր թատրոնը և այդ նույն ժամանակ, Բարեկենդամնի տոնին, փողոցներում խաղացվում էր «Ղենորան», որ «Խանի» հայ-վրացագիրական մի տարրերակն է¹¹¹: Թատերական այս

110 Վ. Բղոյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 94:

111 Հմտ. Դ. Ջանելաձե, Грузинский театр, Тбилиси, 1959, с. 70—73: Մինչև վերջին տարիներս դատական խաղերը տարածված են եղել վրացանակ հովաների միջավայրում, մասնավորապես Վարձիքի շրջանում: Հատ իմ լսած բանավոր տեղեկությունների, հովանական, նաև օսհեական պատմական խաղերում («կոռմսի» կենտրոնական գեմքերից մեկը եղել

Համակարգերը միմյանց կողքի են, բայց պատմատիպաբանական առումով հեռու են մեկը մյուսից և ծառայում են նույն աշխարհում ապրող սոցիալական տարրեր խավերի: Թիֆլիսի քաղաքային թատրոն մտնող նոր բուրժուան, քաղենին, մտավորականն ու ուսանողը, ազգային թատրոնի գաղափարվ մտահոգված հայ համալսարանականը այս ամբոխային ծալլրական երթը դիտում են կողքից, իսկ դարավերջի նկարիչ վանո Խոջաբեկյանը վերաբարձրում է այդ որպես էթնոգրաֆիական ունիկում (նկ. 11): Դատական խաղերին բնականորեն նույն հայացքով են մոտենում հայ գրողներն ու բանահավաքները, ընձեռելով ուսումնասիրողներին ինքնատիպ ազգագրական-բանահյուսական նյութ:

Արդ, ի՞նչ ներքին կապեր կան մեր քննության առարկայի և գրական դրամայի միջև:

ՎԱՆԱ ՓԱՇԱՆ ԵՎ ՔԱԶ ՆԱԶԱՐԻ

Երեմիա Եպիսկոպոսի (Տեկանց) գրառած Վասպուրականի «Փաշա» խաղում արտաքին, երկրորդական թվացող մամրամասներ կան, որոնք «թագավոր-դատավորին» կարծես մտերմացնում են հայ ժողովրդական հեթիաթի բախտախընդիր ու բախտավոր «ասպետի» հետ: Այդ կապը շատ պարզ է երևում Հովհաննես Թումանյանի հեթիաթում, Դերենիկ Դեմիրճյանի հայտնի կատակերգությունում, մասամբ նաև Ավետիք Խաչակյանի «Աղա Նազարում»: Ընդհանուր զուգահեռ և որոշ կետերի համբնկնումները կարելի է բացատրել ժողովրդական խաղերի անմիջական կամ միջնորդված ազգեցությամբ՝ մի բան, որի համար արտաքին կովաններ չունիք, ենում ենք ընդամենք տիպաբանական հատկանիշներից: Փորձենք գտնել այդ, թեկուզ փոքրաթիվ հատկանիշները բանահյուսական հիմքում՝ Սրբանձայանի գրառած «Դրժիկոն» ժողովրդական զրուցում: Ի դեպ, սա հեթիաթ չէ, ըստ

է այժմակերպ խեղատառակը): Նույն է վկայում Վ. Խոջաբեկյանի նկարը, որը, թշոմ է, դատական խաղի հավաքական մի պատկեր է՝ հալկականի, հաւականի, գուցի և օսեխականի տարրերով:

Ժանրային առանձնահատկությունների, այլ իսկապես զրուց, միջնադարյան որոշումը կայտնի է նաև, որ բախտավոր «ասպետի» զրուցը, որպես սյուժետային պայմանաձև, միջազգային է: Թումանյանը նշել է «Քաջ Նազարի» մտահղացմանը հիմք ծառայած մի շարք աղբյուրներ՝ արևմտյան և արևելյան, գրանց թվում՝ «Դրժիկոն»¹¹²:

Դրժիկոն կամ Դրժիկոն անունը (Սրբանձայանի գրառածան մեջ տրված է այս երկու ձևով) տարօրինակ է թվում: Հայ բանահյուսության և գրականության մեջ այս անվան երկրորդ մի վկայություն ինձ հայտնի չէ: Զրուցի բովանդակությունը ելնելով, այս անունը կարող ենք բացատրել դրկերպութիւն (տձեռութիւն, տգեղութիւն) և դժմիս («գժնեայ մտօք, զառնացեալ, խայտառակ, ծաղղածանակ»)¹¹³ բառերի օգնությամբ: Հեղինակիս սուրբեկտիվ միտումին համերաշխ են անելութիւն, խայտառակ, ծաղղածանակ զուգահեռները: Ընդունենք, ուրեմն, զրուցի հերոսի անունը, թեկուզ և պայմանաբար, որպես տիպաբանական մեկ միավոր:

Վանա Փաշան իսկական Դրժիկոն է և «գժնեայ մտօք», և տձեւ ու խայտառակ տեսքով: «Շքախմբի» դիվակերպ ու սատանայակերպ մարդիկ «յուրյանց էշավորյալ փաշայն խաղի վարի ծայրեն սկսեցին հառաջ քշել: Սև թորվան փորատիկ անթրոցի ծայրն անցուցած իբրև գրոշակ, տղայի մեկը՝ փաշայի առաջ քառակ բարեկ...»¹¹⁴: Փաշայի «պատկերագրությունը» լրացնում է կեղտոտ լաթը որպես գրոշակ կապած թոնրի անթրոցի ծայրին: Դրժիկոյի ձեռքին նույն իրն է՝ թոնրի անթրոցը, որպես ցաման գավազան կամ խոսքի իրավունքի սիմվոլ¹¹⁵. «օր մի ելավ, իր կովն առավ ու անթրոցը ձեռք բռնեց, տնեն ինկավ զուրս: «Առնեմ գլուխս կորսվիմ,— կը-

112 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 430 (Ճանությունը):

113 Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, հ. 1, էջ 614:

114 Վ. Բղոյան, նշվ, աշխ., հ. 1, էջ 82:

115 Գավազանը, որպես խոսքի իրավունքի և իշխանության խորհրդանիշ, շատ հին է: Ցունական ուսպոտները Ցուներույան պումբները պատմել են սարդենի (դափնե) մահակը ձեռքներին: Այսօրվա Անդիքայում թագուհին պաղամենստի նիստին մասնակցում է երբեմն միայն իր գալիսոնն ուղարկելով:

սեր,— այս անգամ կնկան ձեռքեն»¹¹⁶; Ծիսալին ու կենցաղալին նշանները խառնված են երևում; Դրժիկոյի փախուստը նման է «ղաշաղ ընկնելու», բայց ի՞նչ ձեռվ. եղջուրավոր մի անասունի հետ և «շառ կտրողի» կրակախառնիւ— «գայլիսոնով»; Յոթ ճանձի, որպես յոթ կենդանի շնչի, ոչնչացումը հիշեցնում է դիտարկված խաղերի կատակալին հիպերբոլաները (մի լիտր օղի-մի գետ ջուր, տաս զաթաւաս ջաղացի քար, հինգ հավ-հինգ երամ թուռմ, մի թաս օղի-«թվանքի գյուլա» և այլն)¹¹⁷; Դրժիկոյին «գիր է անում» և դյուցազն կնքում հոգնոր մի անձ՝ ոմն դերվիշ, և թուղթը, որ պետք է շփոթովթյան մատնի ամբոխին, նա կապում է «կովի ճակատին՝ կոտոշներում մեջ»¹¹⁸; «Թագավոր-դատավորի» պատկերագրությունը յշառնում է կատարյալ. եղջուրները սաղավարտի վրա շեն, ինչպես Խան-Փաշալինը, բայց «մանգատը», ուր գրանցված է նրա «սիրանքը», կովի ճակատին է:

Այս ամենը ճամարենք Դրժիկոյին ու Խան-Փաշալին եղայրացնող երկրորդ տիպաբանական Ֆիավորը:

Անսովոր ու արտառոց կերպարանքով՝ դժնատեսիլ ու ծաղակատակ «ասպետը» հեռանում է իր շենից, անցնում օտար ֆրատրիայի սահմանները; Սա երրորդ տիպաբանական միավորն է:

Չորրորդ միավոր. արտասովոր անծանոթին պատվով ու Հանդիսավորությամբ տանում են «գլուխ», որը Դրժիկոյի զրույցում «քոշկ ու սարայ» է, «Խան-Փաշա» խաղում՝ տանուարի տուն: Այս իրադրությունը և խաղալին է, և կյանքից է զալիս: Օտարի առջև շփոթվելը, շափից ալելի մեծ պատիվներ տալը և միշավայրի գլխին նստեցնելը թերեւս ավելի հատուկ է արևելյան կենցաղին: Համաշխարհային դրամատիկական գրականության մեջ այս իրադրության գասական օրինակը տալիս է Գոգոլի «Ռեկորը». միշավայրն ստեղծում է դատավորին, հաճոյանում, կաշառում, զարմա-

նում ու խայտառակվում: Առասպելը անծանոթ օտարականի շուրջ հյուսվում է արագ ու ծաղկում խնջույքի սեղանի մոտ, խնջույք— «պատարագի» ներբողները գրսից եկածին հասցընում են աստծո գահի մոտ (կենաց ծաղկեցնելը այս է որ կա), և մեծարվողն ազատություն է ստանում ներկայանալու այսպես կամ այնպես:

Խնջույքի տեսարանը և՝ Դրժիկոյի զրույցում, և՝ «Քաջնագարի» թումանյանի ու Խաչակյանի վերսիաներում, և՝ Դեմիրճյանի կատակերգությունում (Զ-րդ արար): Խնջույքը դրված է թումանյանի հեքիաթի հիմքում, և հեքիաթն էլ ըստ էության շրջանակենտրոն խաղ-մեծարանք է՝ բացարձակութեամբային-ներբողական երգերով: Կարելի է ասել, որ խնջույքը մեր խաղի հիմնական տիպաբանական հատկանիշն է: Տեսնենք, ուրեմն, ինչպես է զրսեռվում բախտի «ասպետը» հեքիաթի ու խաղի խնջույքներում:

Դըմիկո

Փաշա

Դողալէ կը դադրի Դրժիկոն.
«Թող ձեր ասածի պես լինի»,
կըսե: Կը տանին առնը, վերին
գլուխ կը նստեցնեն, ամեն բա-
րութենեն կը զնեն իր առջև ու
իրենք ձեռները խաչ կապած ծա-
ռայություն կընեն: Դրժիկոն խոր
մատածունքի մեջ է, թէ այս փոր-
ձանքին ինչպես ենեն և թէ՝ կը
վախնա զինքըն շսպանեն: Ասոնք
ալ կը կարծեն թէ՝ ինչ խորունկ
խելացի ու մեծ հոգի մարդ է, որ
իրենց երեսը շնամիր, չի խոսիր.
կը հազան, կը հազմզան հիշեց-
նելու համար նշան, և Դրժիկոն
հրաման կուտա որ նստին: Հան-
գըստանալեն հետո կը հարցանեն:

Փաշայն յուր սարոքն ելա-
ներ ի մեր սենյակ: Մարդիկ գիա-
շայն և զուր սպասալորք Հրավի-
րելով վերի զլուկ բազմեցուցա-
նելին և նորա դալուտն շնորհա-
վորելով, որպիսություն հարցանե-
լով, խնդրեն պատմել, թէ որ աշ-
խարհն գա, ինչ-ինչ քաշություն
արած է, երկրին ինչ բարիք պի-
տի առնե: Նա ևս ասեր.

— Բարելոնեն, նիմվենեն,
եգիպտական, մեծի Պոլսեն և աշ-
խարհի բոլոր քաղաքներեն ու գե-
ղերեն անցանելով հասած է Վա-
նա քաղաք, որո մարդիկ քան զա-
մենայն մարդիկ քաղաքացն այ-
նոցիկ, զորս տեսյալ էր Փաշայն,

¹¹⁶ Գ. Սրբանձայանց, Երկեր, հ. 1, էջ 474:

¹¹⁷ Վ. Թղթյան, Աշվ. աշխ., հ. 1, էջ 97:

¹¹⁸ Գ. Սրբանձայանց, Աշվ. աշխ., էջ 474:

119 Հայտնի է, որ «Ռեկորի» պաղապարը, իր սյուժեային տրամաբանությամբ պատկանում է Պուշկինին. նա Գոգոլին պատմել է իր շուրջը տեղի ունեցած, գուցե և իր հորինած կամ «մշակած» մի միշագեն: Թվում է, թէ բանաստեղծի արևելյան իմացությունը և արևելյան երևակայությունն և ստեղծել այս իրադրությունը:

«Աղա, քո ձին, քո զենք, քո ծառաներ ու՞ր ես թողիր, հրամանք արա, երթանք բերինք»: Դրժիկոն կը սե. «Զենք ու ձի վախկոտ ժարդկանց ապահին է. ես զործածած շեմ երթիք, պետք չէ եղած եթե մեծ կոփի բռնվիմ, այն ատեն ձի և զենք կը գործածեմ. իսկ ծառալի երթիք պետք չունիմ, աշխարհ իմ ծառաներն են <...> ես Գրժիկոնն եմ, մեկ ափով յոթն հոգի կ'սպաննեմ¹²⁰:

Երադրությունը բացարձակորեն նույնն է. Հայտնվել է տարօրինակ մի անծանոթ՝ կրտկիսառնիշը ձեռքին, մի զեպքում անզեն և կովի հետ, մյուս զեպքում ժանդատած ու հին ասպաղենով և «Էջավորյալ»: Երկու զեպքում էլ գործում է ոչ թե մարդու իրական արժեքը, այլ արժեքի սիմվոլը՝ թուղթ կամ դրոշ՝ անթրոցին կապած կեղտու լաթ: Անծանոթը վայելում է օտար ֆրատրիայի հյուրասիրությունը, ձևանում խոր ու խոհուն անձ կամ հանդուզն արկածախնդիր, զարդարված իր շունեցած անցյալով և իր զլիսի շուրջը ճառագող լուսապսակի տակ բազմած հուշեր է պատմում: Այս այն բնավորությունը (էթոս), որ խաղային-դիպվածային իրադրության ծնունդ է, անկախ նրանից զրուցից է անցել խաղին, թե խաղից զրուցին: Այս իրազրության մեջ նշմարվում է նաև Դոն Կիխոտը, թեպետ «տիսուր պատկերի ասպետի» նկարագիրն այլ է՝ նրան իրադրությունը չի ստեղծում, ինքն է իր երևակայած իրականությամբ մտնում տարապայման իրադրությունների մեջ: Բայց նա էլ բախտի «ասպետի» նման փախչում է տանից, հայտնվում անծանոթ միշավայրերում, իշարկե ոչ խաղույքներում, այլ պանդոկների համեստ սեղանների մոտ իր նախապապի հնացած ու ժանգոտ զրահներով ու «Մամբրինի սաղավարտը»՝ դալլաքից խլած պղնձե լագանը գլխին: Վասպուրականի «Փաշան» (նկ. 13) կարծես հիշեցնում է, որ խաղային արմատներ կան այս երկու արտա-

քուստ նման ու բախտով տարամեատ ասպետների շուրջ ստեղծվող իրազրություններում:

Խնջուայքի սեղանի մոտ Վանա Փաշան լուս է, ինչպես Դրժիկոն, բայց ոչ նրա նման մոլորված ու մտահոգ, այլ ցուցադրական մոայլադեմ: Տպավորությունը և արդյունքը, սակայն, նույնն էն: Արժանապատվության ասիական ըմբռոնումով մեծ ու խելոք մարդը պետք է իրեն ծանր պահի,



Նկ. 13 «Վանա Փաշա» խաղը ըստ Հ. Քաջակյանի:

զպետք է ժպտա ու խոսի: Այս խորիմաստ լոռությունն էլ ահա մտածել է տալիս, թե ով գիտե, ինչեր կան դրոշի տակ նըւտած անծանոթի գլխում: Ժողովրդական զրուցի հերոսը սկզբից ևեթ լոռությամբ է գործում: Փաշայի վարդապիծն ավելի կատակերգական է: Նա պատմում է իր կյանքը, վա-

120 Գ. Արքանձույանց, նշվ. աշխ., էջ 474—475:

121 Վ. Բդյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 82:

յելում գինին ու կերակուրք, կշտանում և մոայլում: «Նորքառ պահ մի յուրյանց իշխանություն մոռացած,—պատմում է Երեմիա եպիսկոպոսը,— իբրև ընկեր, ուտեին, խմեին, երգեին և ուրախություն առնելով զվաճաքանեին, մինչև փորերնին կշտանար»¹²²: Փաշան ձևանում է դժգոհ ու վիրավորված: Միշտավայրից վեր ձեւանալու գիտակցությունը նրան հիշեցնում է, որ պետք է ծանր նստել ու շատականալ սեղանակի ցների լեզուն: Սա էլ մի նշան է, թե «առաքյալն» ու «դատավորը» տեղացի չե, նրան չի վայելում տեղացի լինել արդարությունը ւրիշ աշխարհից պետք է լինի, որ հեղինակություն ու հավատ ներշնչի: Վերջապես Փաշան պատիվ է անում սեղանակիցներին և հոգոցներ հանում, անորոշ ձայներ արձակում, մրթմթում: «Ժողովականները,— կարդում ենք Թումանյանի հերթաթում,— իրար աշքով են անում, հասկանում են, թե էդ հառաջանքն ու ձեռի թափ տալը ինչքան բան կնշանակեր...»¹²³:

Դեմիրճյանի կատակերգությունում, որի կապը ժողովրդական խաղի հետ, թվում է, ակնհայտ է, իրադրությանը տրված է այնպիսի տեսք, որ միայն թատերական կոնտեքստում կարող է իմաստավորվել: Նազարը, ըստ հեղինակի ոեմարկի, մտնում է անվստահ և նստում գյուղական ավագանու շարքում: Նա հազում է: Տիրում է լուսավոր: Նազարը նորից է հազում: Խնջույքի արարողապետն էլ է հազում... կություն:

Նազար.— Հըմ....

Բոլորը.— (Խայում են նրան):

Ա. հյուր.— Ի՞նչ ասավ:

Յ. հյուր.— Ասամ՝ «Հըմ»:

Գ. հյուր.— Ի՞նչ ասավ:

Դ. հյուր.— Ասամ՝ «Հըմ»: (Հերրով նույն հարցն ու պատասխանը մինչև մի ծերունուն):

Մի ծերունի:— Որ ասամ՝ «Հըմ», ասել է Քյոոօղին է¹²⁴:

Վանա Փաշայի լուսթյան պատճառը պարզից պարզ է: Ճաշը կերել է, պետք է ստանա վարձը: Այդ պահանջին տըր-

պում է խորագույն իմաստ, ինչպես նազարի հառաջանքին ու լոռությանը: «Հետո փաշայն նորեն յուր իշխանական գիրք բռնելով, բերան սրբելով, բեղերն ոլորելով, շան պես կոմուշով, խոզի պես մոմուալով հարցաներ յուր մարդկանց, թե այս գիշ մարդիկ բնավ չեն հարցաներ, թե փաշայն է՞ր աղագավ այս քաղաք և այս թաղն եկած է, որով հետեւ այլ արժանի չեր համարեր բերան առ բերան մարդկանց՝ հետ խոսել, այլ թարգմանավ: Նորա մարդկանց մին թարգման ձեւանալով ասեր, թե փաշայն վերջի աստիճան զայրացած է, զի քանի օր և ամիս վերջի տարի է, որ այս թաղն եկած է, բնավ նորա գալստյան կամ տարի է, որ այս թաղն եկած է, բնավ նորա գալստյան պատճառ չեն հարցաներ: Մարդիկ բոլոր ի միասին հազար և բյուր անգամ ներողություն խնդրելով ասեին, թե մեք մեծապես սխալած եմք այդ մասին, ուստի թողություն խընդրեմք, յուր գալու պատճառն թող ինքն բացատրե մեզ և ինչ հրաման ունի, մեր գլխու վերա կատարեմք»¹²⁵: Փաշան հարկ ու տուգանք է պահանջում, ապա շղթայում է մի քանիսին, ծովնկի էջեցնում, գլխաներին մտրակ ու գավազան խաղացնում, ներում: Այնուհետև տեղի է ունենում այն, ինչ պետք է լինի: «Որս փաշայի գլխու կողովին կրակ կուտայինք, — պատըռմ է խաղի մասնակիցը, — որս նորա մորուր փիետեինք, որս գլխու վերա ջուր լեցունեինք, որս աշքերու մեջ փոշի փշեինք և այնպես ձգձկելով աստ անդ քաշը էինք, որ բնավ փաշայի կերպարանք չեր մնար վրան»¹²⁵:

«Թագավոր-դատավորի» պատկերը, թվում է, բոլոր դեպքերում խաղային հիմք պետք է ունենա: Որոշակիորեն այդ տեսքով է ներկայանում Խահակյանի «Աղա Նազարը» Հերքիաթի հերոսը: «Էշը քշեց, ընկավ մեծ ճամփան ու գնաց գրոշակը ձեռքին, թուրը մեջքին, շիբուխը բերնին, գլուխը՝ բարձր, փափախը՝ ծոծրակին, հպարտ, աղավայել...»¹²⁶: Անցորդները ահ ու սարսափի են մատնվում, տեսնելով այս արտասովոր, էշավորյալ վեհապետին և աղաշում են խղճալ, խնայել: «Գնացեք ձեր ապրուստի ետևից, — հրամայում էր

124 Գ. Գևորգյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1957, էջ 160—161:

125 Նույն տեղում, էջ 84:

126 Ավ. Խահակյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 272:

122 Նույն տեղում:

123 Հ. Թումանյան, Երկեր, հ. 3, Երևան, 1969, էջ 220:

նա, և ամենքից մի քիչ հարկ էր վերցնում, որից հաց ու ծխախոտ, որից օղի ու շամփչ և ուրիշ մանր-մունք բաներ»¹²⁷: Աղա Նազարի ավարը բավական համեստ է՝ գրեթե մուրացկանի բաժին և դրանով էլ նման է Փաշայի հարկա-հավաքությանը: Վանա Փաշան երկու-երեք զուռուզ է ստա-նում իր խորիմաստ լուսվյան ու քըթմնջոցի համար:

Տիպաբանական այս և այլ ընդհանրությունները վկայում են, որ բախտի ասպետի պատկերն ու ճակատագիրը հորինվել են խաղային հիմքի, եթե ոչ անմիջական, ապա միշնորդված, անուղղակի ազգեցությամբ։ Ծրագրվածություն, իհարկե, ոգևար է որոնել, չկա նման բան։ Բայց խաղը, որպես զգացողություն, որպես ազգային գեղարվեստական մտածելակերպի հատկանիշ, խորթ չէ հատկապես Թումանյանին։ Թումանյանի հերքիաթը, ըստ սյուժենտային կառուցվածքի, խաղային է և դրամատուրգիական, այս հասկացությունների ժողովրդական իմաստով։ Դա խնջուրային զրուց է տրամախոսությունների ու երգ-դիֆիրամբների բնույթով։ Մարդիկ հաճոյախոսություն են անում, անծասոթ հյուրին դնում մեծարգողի դիրքում, և «աշուղն էլ, որ էնտել էր, ձեռաց երգ է հորինում ու երգում։

Բարով եկար, զազար բարի,
Հրդու արծիվ մեր սարերի,
Թագ ու պարձանք մեր աշխարհի...»¹²⁸

Երգը լուրջ է՝ հերոսական ներքող, հույսի ու հավատի անսրդ գրակորում, ուր կա նաև սոցիալական երազ, արդար ու հզոր միապետին հավատարիմ լինելու խոստում։ Իսկ հեգնանքը շատ նորբեր է ու կարող է չնկատվել, եթե իրադրությունը լինի այնքան անհիթեթ, եթե պատումի կոնտեքստը լինի կատակերգական։

Մատաղ ենք մենք քո դրոշին,
Մեջքիդ թրին, տակիդ ռաշին,
Նրա ստին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջդ նազար,
Որ մին գարկես՝ ցարկես հայրաբ¹²⁹:

127 Նոյն տեղում, էջ 273:

128 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, լ. 220:

129 Նույն տեղում:

Թումանյանի հեքիաթի տոնայնությունը մղում է խաղի եթե չի գալիս խաղից, և երգային է, զվարթ, հանգեցնում է կատակերգական օպերայի գաղափարին։ Այս տրամադրությունը շարունակվում է նաև մեծարման խնջուքից հետո. թվում է ամբողջ հեքիաթը հորինված է սեղանի մոտ, բաժակաճառերի աղմուկի մեջ, որտեղ գեր են խաղում ոչ թե արժեքն ու մեծությունը, այլ նրանց սիմվոլները, թևկուղ և փտած՝ մի լաթի կտոր ու մի ժանգոտ երկաթ։ Մենք նկատեցինք, որ ժողովրդական խաղում էլ շփոթվում են իրականն ու պայմանականը, լուրջն ու կատակը, և Փաշայի գերակատարը ոչ միայն իսկական հոգրասիրություն է վայելում, այլև իսկական ծեծ ու շարդ է ուտում։ Թումանյանի հեքիաթն այդպես է գրված այնտեղ նույն մթնոլորտն է տիրում, բայց ծեծ ու շարդը չկա։ Այս երկակի վիճակների գաղափարը աղոտ արտահայտություն ունի Սրբանձայանի գրառած զրոյցում, բայց այստեղ կարծես որոշակի է հերոսի անունը՝ Դրցիկո. դժմատեսիլ ու ծիծաղելի, սարսափեցնող ու զվարճացնող։

ինչ վերաբերում է Գեմիբրձանի «Քաջ նազար» պատմությունը, ապա այստեղ ազելի քան պարզ են Երևում ժողովրդական դրամատիկական խաղի գծերը: Կատակերգությունը կառուցված է դատական խաղի տրամաբանությամբ սկզբից մինչև վերջ, կեղծ հերոս ու վեհապետ, և նրան մեծարող ու տապալող ամբոխ: Աշխատավոր մշակույթում, ոչ էլ Թումանյանի ու Խաչակրանի վերսիանի հրուտական զրուցում, չի տապալվում, այդպես է աշխարհի բանր ըստ ժողովրդական զրուցի կենսափիլիսոփայության: Բայց այլ է այդ նույն ժողովրդի խաղային տրամաբանությունը, և Գեմիբրձանը կարծես հետեւում է դրան: Նա գրել է ոչ թե հերթ-զրուց կամ առակ, այլ խաղ: Այստեղ ամեն ինչ տեղի է ունենում շրջանակենտրոն խաղի օրինքներով, աղմուկի ու իրարանցման մեջ, որտեղ «շունը տիրոջը չի ձանաշում», ոչ մեկն ի վիճակի չէ հաշիվ տալ իրեն, թե ինչ է անում, ինչ աղետ է պատրաստում իր վկին, ինչ «գատ-բեղդադ»: Թվում է, թե մարդիկ լախտի են խաղում, և հանկարծ շրջանի կենտրոն է ընկնում վայրի մի գագան՝ վազրը, լախտերը ջախչախում են գաղանին, փառք ու պատիվ է ստանում ջախչախում

ակամա հեծյալը: Գործում է խաղային դիպվածը՝ կատակերգական «այսիսեն»: Եվ մարդկային կցության միջնարյան-ժողովրդական ըմբռնումը դառնում է ավելի զորել: այսօր ոչնչություն, վաղը՝ թագավոր ու աստված, մյուս օրը՝ դարձյալ ոչնչություն:

Սա ոչ թե զրուցի կամ հեքիաթի, այլ խաղի տրամաբանությունն է և արդյունք է ոչ թե սոսկ գիպվածի, խաղային պատմականության։ Այդ պատմահականությունը, ինչպես ցուց են տալիս մեզ ծանօթ խաղերի տարրերակները, ծրագրված է որպես ծիսային վախճան և ունի իր աշխարհայցքային հիմքերը։

Կյանքի նորոգման գաղափարն իր գոյաբանական և սուցիալ-բարոյական արմատներով կերպավորվում է զատող ու պատճող աստվածության պատկերով և յուս կողմից հանդում է երկրային տիրակալների ժամանակավոր լինելու գաղափարին։ Տոհմի ավագին ու քրմապետին դատելու նախնադարյան ծեսը արեկեցան միջավայրում ստացել է տարբեր փոխակերպումներ, որոնցից մեջ Համար ամենաբնութագրականը ժամանակավոր միապետի գաղափարն է և նրա հայտնությունը օտար աշխարհից։ Ջեյմս Ֆրեդերիք Նկարագրում է մի շարք նման ծեսեր, և ըրանցից ամենահետաքրքրագիրը, որ բոլոր գծերով մեր խաղերն է Հիշեցնում, եղիսականն է։ «Վերին Եգիպտառում, — գրում է Ֆրեդերիք, — սեպտեմբերի 10-ին, այն է՝ զարտական օրացույցի արեգակինային տարվա առաջին օրը, երբ նեղոսի ջրի մակարդակը հասել է բարձրացույն կետին, կառավարությունը երեք օրով լուծարի է հնդարձնվել, և ամեն քաղաք ընտրել է իր սեփական կառավարչին։ Այս ժամանակավոր տիրակալը (որնէ ֆելլահ—Հ. Հ.) կրել է ծաղրածուական սրածայր գլխարկ, երկար, վուշե մորուք և արտառոց ու ծիծաղեկի թիկնոց։ Գայլիսոնը ծեռքին և զրագիրների ու դահիճների տեսքով ծրագրված մարդկանց ուղեկցությամբ նա ուղեկորվել է զեպի քաղաքի կառավարչի տունը։ Օրինական կառավարիչը թույլ է տվել այս հավակնորդին ստորացնել իրեն, իսկ հավակնորդը նաև է զահավորակին և դատ սկսել, որին պետք է ենթարկվեին և կառավարիչը, և նշա աստիճանավորները։

Երեքօրյա թագավորությունից հետո ժամանակավոր միապիտը գատապարտվել է՝ մահապատճի՝ Հրկիզման։ Հրկիզվել է սակայն այն փայտե վանդակը, որտեղ կալանավորված էր թագակիր ֆելլանը և որտեղից նա անվնաս դուրս է պրոց-նում»^{130:}

ինչպիս նկատում ենք, այս ծեսում կրկնվում է մեզ արդին ծանօթ դատական խաղի մողելը: Ավելին՝ խաղի սիմվոլիկան և իմաստաբանությունը բացարձակությունն էն:

Այսպիսով, Վանա Փաշան ու Քաջ Նազարը, որպես արխիտեկտ, նույնը չեն, ինչպես նույնը չեն ժամանակավոր միապետն ու բախտի ասպետը: Բայց նրանց խաղային թեմաները, նաև վարքագծերը եզրվում են. թատերական կոնտեքստում նրանք ուրուրվում են նման գծերով, ինչպես Զախարի Բագավորը և Անդերսենի մերկ արքան, ելեւագետ և Կրեչինովին: Ժամանակավոր միապետի ու բախտի ասպետի շուրջ ստեղծված իրազրություններում գործում են երկու ունիվերսալ թատերական մողել՝ հանդիսավոր երթիք և խնջուրի սեղանը: Դրանք շրջանակին նույնական խաղի երկու հիմնական պայմանաձևերն են: Թումանյանի հերթաթում թեմատիկ և խաղային պայմանաձևերը համատեղված են, բայց արինեափը հանդես է գալիս «մարտուր» տեսքով. բախտի ասոկետին մեծարում են, բայց վերջինս չի համարձակվում դատավորի ղեր ստանձնել: Խաչականի հերթաթում բախտի ասպետն աշխարհ է մտնում ոչ միայն գրոշակով ու թրով այլև գրշով, նա գնում է «զառ կտրելու»: Թումանյանը շրջականին արդարություն խաղի որոշակի տարրեր է մտցնում իր պատումի մեջ: Դրանով նա հիմք է տալիս Դեմիրճյանին՝ ստեղծելու կատակերգություն ոչ այնքան հերթաբի, որքան ամբողջությունը պատի ոճով ու տրամաբանությամբ: Նազարն այս խային դատի ոճով ու տրամաբանությամբ: Դասականն այս տեղ շտահ է կուհում իրազրության իմաստը և դառնում «թագավոր-դատավոր»: Դեմիրճյանը գրել է ժողովրդական պատահան կատակերգություն: Դասականն այս խաղը, ոչ թե դասական կատակերգությունն է, դրամատուրգիան փաստ գիւղում մեկ համար մակդիր է, դրամատուրգիան փաստ արժեքագործող բառ, ոչ թե տեսակի բնութագրում: Դեմիրճյանը գատական խաղի կոնտեքստում է իմաստավորել բայ-

130 Дж. Фрезер, ү24. ш24и., б2 321:

աի ասպետին, դրեւ է նրան դատող ու դատվող Փաշայի վիճակում: Երկու արիստիպերի մերձեցումը տվել է մի կերպար, որը տարբեր է Թումանյանի Քաջ Նազարից և նման է ինահականի Աղա Նազարին:

Ժողովրդական խաղի պոետիկան շատ բան է որոշել այստեղ: Ուստի, Դեմիրճյանի կատակերգության լեզվառժական ու դրամատուրգիական պատկերը թվում է նույնիսկ անմշակ: Բայց դա այլ կարգի մշակում է. այստեղ անտեսանեկ շերտեր կան, որ կարող են ի հայտ գալ միայն խաղային տարերքում: Դեմիրճյանի գործը նախատեսում է բնմադրության ժողովրդական-հրապարակային ոճ, երկդիմի, շփոթեցնող, այլարանական վիճակների շարք և ենթադրում է կարծիս ոչ թե Հայկակամար (պրոտալային) բեմ (թեպետ որա հիշեցումը կա պիեսի սկզբում ու վերջում), այլ պյուղական հրապարակ, ժողովրդական կառնավալային մինուզորտ: Այստեղ նույնիսկ պալատը պալատ չէ, այլ գուցե թոնրատուն կամ ախոռ, պալատականները նման են Փաշայի ցնցոտիտարդ շքախմբերին. նրանց անունները (Ղուորուղա, Դանգիդ, Խողենի, Արշաթոթոշ, Ղառաղուուա, Ղորոնթի, Ղուղղուն) պատահականորեն չեն ընտրված: Սրանք պարզապես «շատ կտրողներ» են, չշին թարս նստած, աշխարհի բանը բարս պտտողներ: Ի վերջո, ինչպիս դատական խաղերում, այդ պտույտը կասեցնում է առողջ բանականությունը՝ Փաշայի մորուքն այրող, որ ժամանակավոր միապետի գեղջկուհի կինն է. «Դե հիմի կաց, քեզ խալխի առաջ դընգոստեմ, որ աշխարհք տեսնի քեզ»¹³¹: Խաղն ավարտվում է ծեծով: Հեղինակն իր նախարանում էլ ունի դրա ակնարկը. «Եվ եթե այս երեկո ծեծի շանդիպի (Հեղինակը—Հ. Հ.), այլ իր հերոսի պես ինքն էլ անսպասելի բախտով ձեր ծափերի ձակնը լսե, համեստորեն բեմ պիտի դուրս գա վերջին արարի մեջ՝ իր շնորհակալությունը հայտնելու ձեզ»¹³²: Վերջապես, խաղի տեսլարանային վճիռը և ոճական պատկերը պարզ են դառնում վարագույրը փակողի խոսքերով. Բախտ չէ, Ուս-

առիան, Շիմար իմաստուն, այլ խրովիլակներ և խարեռություն»¹³³: Դեմիրճյանը բախտի ասպետի զրուցքը գիտել է ժողովրդական խաղի տեսապակով և ստեղծել երկդիմի ալլարանություն, իր հերոսի խոսքերով ասած՝ «երազ ու կես»: Ինչպես բանալ այս միկրոաշխարհի դուռը:

Բանալին վանա Փաշայի գրպանում է:

ՎԻՊԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Ժողովրդական դրամատիկական մտածելակերպը դընակուրվում է ոչ միայն ինքնակա արժեքերով՝ որպես ծիսական-խաղային ամբողջություն, այլև միջնորդված ձևերով և տարբեր կրնտեքստներում: Ժողովրդական զրուցները, վիպական ասքերը, Հերքիաթները երրեմն բերում են դրամայի տողի կամ անուղղակի անդրագարձումներ կամ կրում են դրամատիկական պոտենցիալ՝ կենդանի իրագրության վերածվելու հնարակորություն: Այստեղ գործում է թերևս պարզ մի օրենք. Եթե կա ժողովրդական դրամա, ապա այդ դրաման գտնում է իր ճանապարհը, դրսելում ոչ միայն խաղային պայմանաձևերով, այլև զուտ խոսքային արտահայտությամբ: Դրամայի ուրուն ավելի լայն է մեր պատկերացրածից, նրա նշանները բազմազան են, և թատրոն երեւույթի առօրյա պատկերացումը բավարար չէ ժողովրդական դրամայի դրսելումները զննելու համար: Խնդիրն, իհարկե, կարող է շատ տարածվել, բայց մեր ընտրած պատմատիպարանական սխեման թերևս բավական է դրամայի մեկ-երկու վիպական անդրագարձումներ շոշափելու համար: Կանգ առնենք ամենաբնութագրական կետերի վրա:

«Փաշա» խաղի Մոկաց տարբերակում, որ գրեթե չի զանազանվում մեզ Հայտնի գրառումներից, ենթադրվում է երկու հնարակոր վերջաբան՝ բարեհաջող և անբարեհաջող: Փաշան ավարտում է դատը, ստանում իր պարզմները և նքատում ինչուցիքի: Փարում են, երգում, ծիախաղեր սարքում, ապա Փաշան պատրաստվում է հեռանալ և շնորհակալու-

131 Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 229:

132 Նույն տեղում, էջ 142:

133 Նույն տեղում, էջ 230:

թյան իոսպիր է ուղղում գյուղի ռեսին: Ռեսը նրան հանում է փաշայական դերից և, ինչպես ցուց են տալիս վերը հիշատակված արբերակները, Փաշային պատվով ճանապարհ են դնում: Դերակատարը ճեռանում է դերն ափարտված, ոչ որպես դառնախոր, այլ բարեկամ: Խաղի կանոններով նախատեսված վերջաբանն է սա: Բայց պատահում է, որ ծագում են այլ հանգամանքներ, և Փաշան ակամա ներքաշվում է նոր խաղի մեջ՝ դառնում «թշնամի»: Անսպասելիորեն սկսվում է «երկրորդ գործողությունը», որը, թվում է, շպետք է լինի: Գյուղի երիտասարդությունը խափանում է Փաշայի հանդիսավոր ետզարձը, քից բերում «զատ-բեդադն» ու կերածիմածը: Երիտասարդները ցովիկ են տալիս նրա ծխամործի հարգը և քաշքում ու շարշարում Փաշային: Փաշայի շքախումը կովի մեջ է մտնում, պաշտպանվում ու հարձակվում: Եվ քանի որ Փաշան դատն ափարտել է, նոր հարձակում շպետք է գործի: Նա փախում է իր մարդկանցով շրջապատված, և ամբողջ խումբը նահանջում է կովով: Փաշայի խրմրին հետապնդում են մինչև գյուղի սահմանները: Փախչողները ճեռանում են ծեծ ու ջարդ կերած, պատառութեած, երշեմն էլ վերեր ստացած¹³⁴:

Խաղի այս ավարտակետում ծխականությունից ու ֆրատրիալ բախման հիշողությունից բացի պետք է տեսնել նաև պատմական հիշողություն: Հավանաբար հին ավանդությունն է երիտասարդության ընդդիմանալը, հարկածաններին պատուհանելը, գյուղի ավագանին հարկը տալիս է, իսկ երիտասարդները հարձակվում են հարկածանների վրա: Պատմականորեն իրական այս երեւյթը վիպական դրսնորում ունի «Ծանրա ծոերում»: բնություն չանգարժող մի «ծուռ»՝ Դավիթը, պատուհասում է Մարա Մելիքի հարկածաններին: Խնդիրն այն է, որ վիպական այս դրվագը մեզ հայտնի դրիթե բոլոր պատումներում վերարտադրված է դատական խաղի տեսքով: Եվ այստեղ պարերգական դրամայի գծերն ավելի հստակ են ու ամբողջական, քան բուն խաղերում: Հատվածն սկսվում է պարերգով, ավարտվում է պարերգով. առաջին երգը ներքողական է, երկրորդը՝ ծաղրական: Ենթադրվող շրջանի

կենտրոնում կանգնած է որպես ցուցք «խաղը ու խայտառակ» հարկածանը՝ Կողբադին: Այս առաջին պարերգը բատ Տարոնցի Կրպոյի պատմածի (գրառումը Գ. Երվնձտյանցի):

Ուսան թարածից լի եռլաշին էլալ, առավ զոր ազգար, էկավ, օր տի գեր ի Մարաթուկ, Դավիթի վրեն, Տեսավ, օր կընկտիք կայնած են ճոմփու վրեն, բաց Եղունց:

— Զրդի պար, ասեք, խաղցեք, շորի ես իգամ: Ասեցին: — Մենք դինչ ասենք ու խաղանք: Զէ, լընք գինա, թե դինչ ասենք: Խոլրաշին ուրանց ասեց:

«Եարձ կընկտիք երկանք աղան, էրկեն կընկտիք զուզուեր բառնան, Մըր Խոլրաշին դացեր Սասոն ի բան, Մուղալ էնկեր բերե լըծան, Զկարմիք կոչեր բերե կթան, Գարուն բոլ կը շինենք եղ ու շորթան»:

Մեկ լի կիշե, օր կընկտիք Բրանց զան ու կը խաղան: Երանց զըդի կանեն ու կը խաղան: Եղունք լի կանեն զանգար, կիղան...¹³⁵

Սա կոչվում է «խաղ կապել», այն է երգել չափով ու հանգով, տողը տողին, ձանձավորը ձայնավորին համաձայնեցնելով, շրջանաձև պարով: Թերեւս Դրիմոր Մագիստրոսի ասած լով, ավագան հիգութեամբ» այս է: «Պարանցիկ երգի» կամ «կարկատել հապներգութեամբ» այս է: «Պարանցիկ երգի» կամ «պարուց երգի» ձեերց է այս, որ հետո վերածվում է «ցցոց և պարուց» երգի կամ «շափօք և պարուց» խաղի: Կողբադին (այստեղ՝ Խոլրաշի) իր զորախրով, ինչպես Փաշա՝ «գիվան» անող, զնում է Սասոն և հանդիպում Դավիթի «զատ-բեդագութին»: Բայց ուշագրավ է, որ դատի զաղափարը կա նաև պատումի այս մասում՝ Կողբադինի հարկածանության մեկնելուց առաջ: Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատմածում (գրառումը Կ. Մելիք-Օհանջանյանի) ծաղրական երգով են ճանապարհում Կողբադինի:

135 «Սանա ծոեր», 1977, էլ 29.

«Հու ո՞ւ, ալամենց փբոցլուտ բերան,
Ռու զիկաք քըց շուն վաղան,
Անրթաք քըց գել-գաղան»¹³⁶;

Առաջին ժաղողին միանում է երկրորդ «խորհրդական» հա-
կառակ կողմից: Տեսարանը դառնում է զիխորհական:

Մղեք տուն, էրեք զիկան,
Յեւեք դուս, էրեք շիկան.
Կւրթանք Սասուն առ ու թալան,
Կը բերինք մըզալ եզներ լճան,
Կը բերինք կեռիկ կովիր կթան»:
Կին վերցուց, էդոնց ըսեց.
— <...>ձոր բերան՝
Թե տան, թե տան¹³⁷:

Դատական խալերը հիշեցնող ևս մի արտաքին նշան. Մո-
կացի Հովհանի պատումում (գրառումը Գ. Հովհանիցանի) Դա-
վիթը հարկածանների դեմ է զնում Փաշացի «գայիսոնով», որ
թոնիրը խառնելու երկաթն է: Դրժիկոյի ձեռքին էլ տեսանք
այդ «ցասման գավազանը»:

Դավիթ էլավ՝ Պառվու անթարուց,
Ինչ թոնիր կը խառնին,
Առից, ընկավ մըշ դաշտին.
Կանչից Աստված, կինաց դախ Կուզբաղնը առքար-
կինաց, ասքարին խասավ...¹³⁸

Շարունակությունը դատաստանի պատկերն է.

Բոնեց զիոլրաշին լի,
Քակից զակոնք ու շարեց ի ճակատ,
Ու զմզրախ լի էրեց քընց շան խառան¹³⁹:

Հաջորդ դրվագը Մսրա կանանց կատակային-ժաղրական
պարերն է. կանայք դարձյալ խաղ են կապում Կողբաղնի
շուրջը, կամ դիմավորում են խաղով: Բոլոր գեպքերում երգը
շրջանակենտրոն-կոմուսային է՝ նման Հովհան Մամիկոնյանի

«Տարոնո պատմությունից» նախորդ գլխում բերված համ-
շածին:

Խոլրաշին հեղ լմ լի էկավ մհշ ըդ կնկաց.
Հեղ լմ լի կասեն ու կը խաղեն:
«Խոլրաշի շան, Խոլրաշի.
Իդա դիեն գացիր քընց գել գաղան,
Ըն դիեն էկար քընց շուն վաղան,
Մըրադդ է վիզդ քընց շան խառան,
Բերնեղ կերթա քընց շորկի տրկի թան,
Ճանճներ վրեն կապած քարվան»:

Խոլրաշին ասեց.

«Տո շընացած, դել անզգամ,
Ես գիցա, թե Սասուն դաշտ ու գուրան էր:
Զգիցա, թե քար ու կապան էր:
Ըն ճմեր, օր նոր են էլած, դիվանական են.
Ուրանց նետ կա քընց ձիթիցի գերան,
Օր կը զարկեն, բերան կը բացվեր քընց պատուհան
Ըն մանկափ օր հնտս էր, ժողվան լցվան ի
խարաման»¹⁴⁰:

Պատկերն ակնհայտորեն պարերգական է ու դատական.
Պատվում է Մսրա Մելիքի «քավության նոխազը»: Իրազրու-
թյունն արդեն ծանոթ է, ծաղրի եղանակը հնադարյան: Ամեն
իշխ հիշեցնում է 53 թվի (մ. թ. ա.) խառանի դատը: Պարթև-
ները այս եղանակով ծաղրում էին Կրասոսի նմանակ Գա-
յոս Պակինոսին Հայ էպոսում տեսնում ենք առաջավորա-
սիական հնագույն դատական խաղի հիշողությունը: Երկու-
դեպքում էլ ծանակվողին շրջապատում են կանայք՝ Սելմկիա-
յում պոռնիկներ, այստեղ՝ «շընացած, դել անզգամ»: Սե-
լմկուհիները ի գեմս Գայոս Պակինոսի ծաղրում են Կրա-
սոսի կնաբարո էությունը, այստեղ Մսրա կանայք ու Կողբա-
ղինը գոեհկարանում են, չգրվելիք խոսքեր են փոխանակում:
Հասկանալի է, որ վիպասացները մեզ հաղորդում են դատի ու
ծաղրի հայ միջավայրում տարածված ձեր: Ժողովրդական
կատակերգության կոմուսային եղանակն է սա. շրջապատում
են «քավության նոխազին» ու երգով գոեհկարանում: Եվ պա-
տասիւնառողն էլ ընտրում է նման խոսքեր. «Էն մեզ մարթ

136 Նույն տեղում, էջ 183:

137 Նույն տեղում, էջ 184:

138 Նույն տեղում, էջ 449:

139 Նույն տեղում, էջ 30:

140 Նույն տեղում, էջ 30—31: Ընդգծումն իմն է:

խոսքաշեն էր, ըսեց. <...>¹⁴¹: Եվ ամենաէականը. Կողբադ-նի խոսքերում պարզ հիշեցնում կա, որ Սասնա տան «Ճե-րը» (ջահեները) «գիշանական են», այսինքն՝ իր գլխին «գատ-րեղադ» են սարքել: Եվ նորից է կրկնվում «մղեթ տուն, էրեք դիվան, մէկիք դռւս, էրեք շիվան» խոսք¹⁴²:

Կոմոսալին-ծաղրական պարերը, դատական բնույթով, պահպանված է վեպի գրեթե բոլոր պատու՞նային տարրե-րակներում, սուղօթաբանական միանման ու տարրեր փոփո-խակներով Պետք է կարծել, որ միջնադարյան պարերպա-կան կատակերգության ոճն ու եղանակը, բովանդակությամբ ու ոճով շատ տարրեր «Արեգաթողի համդեսի» խորային հատ-վածներից և դրամատիկական փունկցիայով նույնը, վիպա-սացները վերարտադրում են բավական հավաստիորեն:

Կնքափր կանչեցին ասին,
«Կոողրադին <...>,
Ի՞նչ իս իկի լերան-լերան.
Տու կասիր՝ իերթամ Սասնա քաղաք,
Քառուն աղջիկ բիրիմ արմազան,
Քառուն կորու կնիկ բիրիմ՝ էրկանց առան,
Քառուն հերկեն կնիկ բիրիմ՝ ուզու բանան
Կուըրադին էսաց.
«Իս շեր գիտը, նիտիրն ին գերան,
Էնունց լուստիրն ին կծան.
Ինչ կը զարկին մարզու շան,
Լեզ կէն/ն պատուխան»:
Կնքտիր կատին.— Այս միր իրենիր որտե՞զ լի:
կ: ար.
«Զիր իրենիր ինկած ին լուս դաշտ, կը խեծան»¹⁴³.

Բանահավաքները շեն մոռացել հիշեցնել, որ այս նման երկխոսությունները երգեր են և վերարտադրվել են երգով¹⁴⁴: Նկատենք, որ բերված հատվածները դրամատիկական խաղի ալիլի հին պատկեր են Հուշում: Գատական խաղերը (սրբնք մեզ ծանոթ են) պարերքական տրամախոսություններ չու-նեն, թեալետ ըստ տեսարանակարգի (օպերա) սպատկանում

141 Նույն տեղում, էջ 184:

142 Նույն տեղում, էջ 186:

143 Նույն տեղում, էջ 449—450:

144 Նույն տեղում, էջ 450 (ծանոթագրությունը գ. Հովսեփյանի):

Են պարերգական դրամալի տիպին: «Կողբադնի դատում» (մեզ համար պայմանական վերնագիր) կատակերգական խմբերը (կոմուս) կանանցից է կազմված և, ըստ էության, միջնադարյան է կամ հին վարձակների պարերգի հեռավոր անդրագութումն է: Դրա հնադարյան համեմատականը տե-սանք Սելեկիայում: Կարծում ենք, այս դրամատիկական պայմանաձեռ տարրեր է նոր ժամանակներ հասած դատա-կան խաղերի պայմանաձեռից և ժողովրդական կատակերգու-թյան առանձին մի տեսակ է հատկանշում:

Ժողովրդական վեպի այս հատվածի ավանդան նախ-նական ձևում դրամա տեսնելը թերեւ ծայրահեղություն է, բայց դրամալի անդրագութում այնտեղ կատ նույն վերաբե-րում է վեպի բազմաթիվ պարերգական-դրամատիկական հատվածներին¹⁴⁵, որոնցում լսելի են հին խաղերի ու խըն-ջույքների հեռավոր ձայները:

Միջնադարում վեպերը պատմվել ու մասամբ երգվել են¹⁴⁶, իսկ «Սասնա ծոերի» մեզ հասած պատումներում բա-վական մեծ տեղ են բռնում երգային, տրամախոսական և հատկապիս երգային-տրամախոսական հատվածները: Վե-պի առաջին՝ Գարեգին Սրվանծոյանի գրառած տարրերա-կում վիպական-պատմողական տարրը թերեւ ավելի մեծ է: Բայց ոչ պակաս էական է դրառողի բերած հետեւյալ տեղե-կությունը: «1879 Հունիս ամսույն» Մշու դաշտ Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վար-դապետի միջոցով: Սա կը պատմեր թե յուր վարպետը շատ բնդարձակն գիտեր այս պատմության, և թե մեջ ընդ մեջ

145 Այս ծայրահեղությանը տուրք եմ տվել «Թատրոնը միջնադարյան Հայութանում» գրքում (էջ 293—299): Վեպի ավանդան նախնական ձևերում դրամա տեսնելու լմ ձգտումը վէճարելի է բանագետ Սարգսի Հարություն-յանը. «Եթե հեղինակի հետ ինչ-որ վլրապահությամբ կարելի է համա-ձայնվել, որ Հայ հերոսական բանահյուսության առանձին նմուշներ թիրեալ թատրայնորեն ներկայացվել են միջնադարում, ապա բնավ չի կարելի համաձայնել այն տեսակեամին, թե Հայութական ժողովրդական վեպերում դրամատիկական ցայտուն գծերը պահպաղորեն ենթագրում են դրամա-տիկական նախահմեր» («Երաբեր հասարակական զիտությունների», Երե-պան, 1979, Ա. 5, էջ 108—109):

146 Մ. Սքելլան, երեկո, Հ. Ե., էջ 161:

շատ տեղեր ուսանավոր խաղեր կային, որ ձայնով կ'երգեր թե՛ այդ վարպետը երկու վոշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թե ինքն՝ բավական ժամանակ պատմած վիճելով, շատ կտորներ մոռզած էր¹⁴⁷:

Տարոնցի Կրպոն Սրբանձտյանին պատմել է վեպի՝ իր հիշողության մեջ մնացած ոչ ընդարձակ մի տարբերակը՝ առանց երգելու և տրամախոսելու, բայց չի մոռացել հիշեցնել Կողքադնի ու Մսրա կանանց տեսարանի երգային-տրամախոսական լինելը։ Կրպոյի պատմածում սա միակ հատվածն է, որ Սրբանձտյանը ներկայացնում է շափածո տողատումով¹⁴⁸. Հատվածի դատական խաղ լինելը, ինչպես նկատեցինք, ակներեւ է։

Վեպի այս առաջին տարբերակում պատմողական տարրը մոտ երկու անգամ գերազանցում է տրամախոսականին։ Դա, եթե կարեւոր համարենք գրառվիլ վկայությունը, գալիս է ավանդող Կրպոյից։ Բայց աշա այդպես չէ Մոկացի նախոքնու պատմածը (գրառվածը Մ. Աբեղյանի, 1886 թ.)։ Այստեղ երգն ու տրամախոսությունը հինգ անգամ ավելի տեղ ևն զբաղեցնում, քան պատմողական հատվածները։ Մի քանի տարբերակների համեմատությամբ ու թվաբանական հաշվարկումով չի կարելի ինչ-որ օրինաշափություն որոշել։ Մենք ենում ենք ակներևությունից, որ ամեն դեպքում գիտական եղակացության հիմք չէ։ Ուրեմն, թող համարվի այդ թեական կոռացում։ Տրամախոսական-երգային տարրի գերիշխանությունը փաստ է Մոկաց պատմումներում, և գիտականք, որ Մոկաը (Մոկք) վեպի ճառագայթման կետերից ամենաէինտրունականն է, եթե ոչ վեպի բնօրրանը¹⁴⁹, ևնդիրն այն է, որ վեպն անուղղակիորեն անդրադրաձնում է իր կազմավորման միջավայրի խաղային բանահյուսության որոշ առանձնահատկություններ, նաև զբամատիկական մողեներ։

Այն, ինչը կոչվում է էպոս, ժանրային առումով տարբերունակ երևոյթ է և կարող է դրազնել բանավոր մտածելա-

147 Փ. Արվանձտյանց, նշվ. աշխ., էջ 85 (Ենդգծումն իմն է—Հ. Հ.).
148 Նույն տեղում, էջ 99—100:

149 Ա. Սահմակյան, «Մասնա ծուրի» պատումների քննական համեմատաթիւն, Երևան, 1975, էջ 31—39, 58—59, նաև՝ վեպի տարածմանը ու տեղայնացման քարտեզ (40—41 էջերի միջև):

կերպի շատ գծեր՝ զբույցի, առակի, երգի, խաղի «Սանա-
կը սուքային արտահայտության ձևերի առումով ըս-
տուերը» խոսքային արտահայտության ձևերի հառումով ըս-
տուերը է մեզ հայտնի էպոսներից։ Հարցը
դրամատիկական պահերին և գործողությունների վերաբ-
րագրությանը չի վերաբերում։ Դա հատուկ է բալոր էպոսնե-
րին ու վիպական ասցերին։ Հարցը վերաբերում է պարեր-
գական արամախոսություններով արտահայտվելու եղանա-
կին, որը նախահիմքն է դրամատիկական հնագույն համա-
կարգերի։ Խեկ վեպի սկիզբը՝ «Դառնամ զողորմին տը տամ...»,
որ օբՀներգական ու ներգրային է (դիֆիրամբային), հու-
շում է ծիսականություն։ Խիստ էական հանգամանք է այս
երգերը, կրկներգային բնույթի ձայնակցումներով, երբեմն
մղում են պատարագային ու խնջուքային տպավորություն-
ների, հիշեցնում ծիսական կցուրդներ (դիրեր) և մտածել
տալիս, թե մի գուցե Սանա վեպը պատմվել է ֆրատրիալ-
նախարարական խնջուքներում։ Այս կեառում շնչար ուղում
կասկածել

Երգով պատմելը Հին ավանդություն է: Հսոսրույս
պոեմներն էլ այդպիս են ավանդվել: Մոկացի Հովհանոր, ինչ-
պես Գարեգին Հովսեփյանն է վկայել, շատ հատվածներ
պատմել է երգով¹⁵⁰: Այս ավանդությունը հայ իրականության
մեջ գալիս է նախարարական խնջույքներից, որոնց տիպաբա-
նական պատկերը՝ ներողական ճառերով ու կենացներ «ժաղ-
կեցնելով» հասկել է մեզ: Հայոց խնջույքն այսօր էլ պարզ ծի-
սական մի պայմանաձև է և կրում է պարերգական դրամայի
հատկանիշներ: Այս ծեսը միանգամայն բնական ճանապար-
հատկանիշներ: Այս ծեսը միանգամայն բնական ճանապար-
հատկանիշներ: Վեպ, որպիս արտահայտության պայմա-
նական-թատերային եղանակ: Խոսքային վերաբարության
տարասեռ (Հետերոգեն) ձեռքը՝ երգ, տրամախոսություն,
կոչ, անեծք, աղոթք, այստեղ ի հայտ են գալիս ոչ այնքան
պատմողական տարերքում և էպիկական կոնտեքստում՝ որ-
քան անկախ և ինքնակա արժեքով: Պատումը հաճախ ընդ-
միջարելում է երգային տրամախոսությամբ, և զեպքերի
պատճեռացետևանքային ընթացքը հասունանում է երգից
երգ, պատասխանից պատասխան: Ակամա բախվում ենք

150 Եռլին տեղամ, էջ 67:

խոսքի դրամատիկական գոյածնի, և դա օբյեկտիվ իրավիճակ է:

Դժվար է, իհարկե, դրամատիկական (էպիզոդների) ուրարդ շղթայալորում համարել «Սամնա ծոերի» վիպական ամբողջությունը: Սա վեպ է՝ էպոսային աշխարհ կամ էպոս որպես գոյաբանական համակարգ, որպես բնության ուժարդեալին կեցության վիպական որոշարկում (գետերմինացիա), աշխարհի էպոսային խորհրդապատկեր: Բայց այնուամենայնիվ իր էպոսային կենսափիլիսոփայությամբ հանդերձ «Սամնա ծոերը» չի տեղավորվում էպիկական արտահայտչակալվության մեջ շրջանակներում, որ մշակել է Հեղելը Հոմերոսյան պոեմների, որպես դասական էպիկայի, հիման վրա¹⁵¹:

151 Հմանք, «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 293—295: Այս գրութիւնի առիթով Արամ Ղանալանյանը գրել է. «Հ. Հովհաննիսյան այն կարծիքին է, թե «Սամոնցի Դավիթի» պատումներում պահպանված երգացին, պարագին, արարացին տրամախոսական բազմաթիվ հատկաներ խոսում են այն մասին, որ «Սամնա ծոերը» էպոսային չէ իր արտահայտության ձևում» և որ՝ «Հայ ժողովրդական վեպո դորս է զալիս էպիկական հեգելյան դասական ասհմանման շրջանակներից»: Զգեսք է նուացության տակ, սակայն, այն կարեր հանդամանքը, որ հիշյալ ասհմանումը խարսխված է Հմանականում «Էպիկականի», մասսամբ նաև խսպանական «Սիդի» վրա, որոնք Հեգելը բնորոշել է իրեն էպիկական պոեմների վերջիններս, ինչպես հայուսի է, հնմարկել են որոշակի մշակման, տասի և, հասկանալի պատճառով տարիերվում են ավանդամբ մեղ հաւած էպոսներից: «Սամնա ծոերի» Հովհաննիսյանի կողմէց վերն ակնարկված հատվածները այդ ավանդաման արգանքն են: Դրանք ցույց են տալիս, որ մեր վեհը ոչ թե «էպիկական պոեմ» է, այլ բարի խակական առումով նորմարկական էպոս: Նույն այդ հատվածները հաստատում են մի հողմից «Սամնա ծոերի» հնադայն տարբերը (այսպիս էուշտած մի նկրեակի և իմպրովիւսացին ակրոնները), մյուս հողմից հաշվառում նշան բուն արդացին ինքնօրինակ նկարագիրը («Պատմաբանամիքական հանդես», Երևան, 1980, № 1, էջ 267): Մինչ այս հողմածի հրապարակումը զրուցել եմ վաստակաշատ բանագետի հնու «Մաքրդ տեսականորեն համոզվել են»— առաջ նաև, — բայց էպոսի հնու զգուց էլքիր էպոսում դրամա որպեսու ձգտումը շեմ կարող բաժանել և շեմ էլ ողուժ փակիլ մտքիր հնանապարհը: Փաստարկումները արամագանական են, բայց պետք չէ ձայնահղության մեջ բնիկնել: Գրքիդ էպոսին վելայի երող հատվածներում ծայրահնկություն և որոշ համեմակություն կա: Էպոսում

հնդիբն ավելի հստակ պատկերացնելու համար տարբերենք երկույթի երեւ շերտերը՝ վիպաշին հայացքը և վիպական խոսելակերպը, բայտ այդմ սահմանադարձելով էպոսային և էպիկական հասկացությունները:

Թվում է, դրանք նույնը պետք է լինեն, և անհարկի բառախաղ ենք ստեղծում: Երբեք:

Էպոսային ամելով նկատի ունենք իրականության ընդուրկման տարածածմանակարգին ծավալը, գիտման շրջանակները, գեղարվեստական կենսափիլիսոփայության որակը: «Սամնա ծոերն» այս առումով էպոսային է: Էպիկական ամելով հասկանում ենք խոսքային վերաբազրության եղանակը՝ աշխահայտչական համակարգը՝ վերաբազրության սուրյեկտիվը զիրքը վերաբազրությունը իրականության կամ օբյեկտի հանդեպ, երբ նպատակը պատումն է, ոչ թե գործողությունը: Այս առումով, «Սամնա ծոերը» մաքուր էպիկա չէ, քանզի այնտեղ ոչ սակայի նպատակ է գառնում գործողությունը՝ վիճակների անկախ ներկայացումը պատումնային շղթայից (կոնտեքստ) դուրս: Սա մոտենում է դրամատիկական եղանակին: Հեգելյան ըմբռնման մեջ էպիկականի գաղափարը լուծված է էպոսայինում և սահմանված է մեկ սինկրետիկ հասկացությամբ՝ էպիկական: Դա պայմանավորված է Հեգելի ոչ այնքան գրականագիտական վարդապետությամբ (գոկտրինա), որքան նրա վիլխուսիայական համակարգով, իրերի երևութաբանությունն ամբողջացնող մտածելակերպով: Բայց շմուռնանք, որ Հեգելի գեղագիտությունը հիմք է տալիս տաշքերելու գեղարվիստական ներքին արտահայտչակարգը երևութիւն ընդհանուր վիլխուսիայական դիտումից:

Այսուհետք, «Սամնա ծոերը» էպոսային է որպես գեղարվեստական-սիմվոլիկ դոյցաբանություն, աշխարհի խորհրդապատկեր և մտքուր էպիկա չէ իր պատմողակարգով: Այնուհետև ունենում ենք տարածեն օղակների արտաքին կապակցումներ ոչ միշտ էպիկական հնտողականությամբ: Խաղի, ծեսի և դրամատիկական մոդելների անդրադառներն ակներե-

գուիր, ինչ ուղարկ և (այնակ շատ բարելի է գտնել), բայց էպոսին ձեռք մի տուրք: Արոշ վերաբազրությամբ ընդունելով այս պահանջը, կարծում եմ, որ պետք է խոսափել միակողմանի վճիռներից:

ին, թեպետ դրանցով վեպը չի վերածվում ամբողջական դրամատիկական համակարգի: Մեզ հայտնի չէ Սամսա վեպի թեմայով որևէ ժողովրդական դրամա: Բայց գիտենք շղթայվածի առասպեկի թեմատիկ կրկնությունը վեպի վերջին ճյուղում: Դա խենթացածի («Ճուռ») գրուցն է անդրաշխարհային էակի՝ հոր ուրվականի հետ: Դավիթը հանդերձյալ աշխարհից դատում է կյանքից օտարված, երկրի կրծքին ծանրացած որդուն և ուղարկում հավերժական կալանավայր: Սա ճակատագրական մեղավորի դատն է՝ լուսավորված հնագույն ծեսի խորհրդապաշտական ցոլքով: Այստեղ չենք կարող չնկատել հայ հնագույն դրամայի վեպական անդրադումը:

ԴՐԱՄԱՅԻ ԽԱՂԱՅԻՆ ՄՈԴԵԼԸ

Մի հեքիաթ կա թագավորի և օտար աշխարհից եկած դեսպանի այլաբանական գրուցի մասին: «Թագավոր մը վեր աթոռքին նստած էր, հեռու աշխարհն ելի (դեսպան—Հ. Հ.) էկավ և առանց խոսելու թագավորի աթոռքի բուրոր կլոր եռ (շրջագիծ—Հ. Հ.) քաշեց, բերան խփեց ու նըստավ: Թագավոր բան մը չհասկացավ, իշխաններ կանչեց. րան մը չհասկցան»¹⁵²: Եվ ահա, գտնվում է մի «իմաստուն ջուղհակ»: Պարզվում է, որ թել ոլորողը կարող է բացատրել շրջափակող գծի խորհուրդը: «Ջուղհակ քիշ մը կը մտածե, ապա կառնե երկու ճան (վեզ) և մեկ վառեկ ու կուգա: Կը հանե երկու ճանը, կը ճգե ելլիին առջե: Ելլին կը հանե ծոցեն և կը ցփնե ճանկ մը կորեկ: Ջուղհակ կը ճգե վառեկը, որ հետնույն կորեկներ կտցեց: Խաղը վերջանում է: «Ելլին ասոր վրա իր տրեխներ հագավ, զնաց: Հարցուցին ջուղհակին՝ թե ինչ էր այդ: Ասաց. «Այդ մարդ էկեր էր թե՝ թագավոր կուգա պաշարելու և կովելու քեզի հետ, պիտի խոնարհի՞ս, թե՞ ճակատ պիտի տաս: Ես ճանը դրի իրեն առջե թե՝ դուք տղայի տեղ մեր առջե, զնացեք ճան խաղեք, դուն ուր, մեզ հետ կովիլ ուր: Ճանած կորեկով հասկցուց

թե՝ անթիվ անհամար են մեր գորքերը: Ես վառեկ մի հանի, որ կերավ ամենը, թե՝ մեր մեկը ձեր բյուրը կը շարդէ»¹⁵³: Այս հեքիաթ-գրուցը վկայարերում է Վ. Բոյանը՝ բայց ամառ շրջանագծի իմաստը հայ ժողովրդական խաղերում: Որպես ներփակության ու հոգու կաշկանդման խորհրդանիշ, շրջանագիծը նաև ծիսական պայմանաձեկ¹⁵⁴: Դա, ինչպես ցույց են տալիս պարերգական դրամայի հնագույն վիայությունները (օրինակ՝ հումականը՝ շրջանաձեկ հրապարակով), տիեզերքի երկրաշափական դետերմինանտն է և ժամանակի ու պատմության պարբերականության պայմանական երևակումը: Օտարվածին կաշկանդելու և դատելու գաղափարը, ինչպես արդեն որոշել ենք, արտահայտվում է շրջանակենտրոն տեսքով ու տրամաբանությամբ: Սրվանձտյանի գրառած հեքիաթում տեսնում ենք այդ նույնը ֆրամուրիալ ու դատական խաղերի պայմանակերպ աշխարհի հանելուկային նշաններով: Դե պանն ու ջուղհակը հանդես են գալիս օտար ախոյանի և հանգույցները լուծող դատավորի դերերով և զրամա են խաղում կամայական պայմանանիշերով: Այս օմետափիկիկան» մեզ համար կարող էր ոչ մի արժեք չունենալ, եթե չիմանայինք դրա խաղային զուգահեռները, մանավանդ դատական խաղի ֆիզիկական պայմանաձերը: Գուցե անտարբեր անցնեինք ֆիզիկական բնույթի շրջանակենտրոն խաղերի կողքով, եթե աչքի շզարնեին հին ծեսերի խորհրդանշերը՝ շղթայվածություն, պատիժ, կրակ, շրջանաձեկ պտույտ և այլն: Վերջապես, այդ խաղերը տեղի են ունեցել Բարեկենդանի օրերին, մեծ պասին ու գարնանամուտին: Մեր առջե դարձյալ մեռնող ու հառնող բնույթյան գաղափարն է:

Շրջանակենտրոն խաղի ամենատարածված տեսակը կապվում է գոտու, որպես անձը շրջափակող, հոգին ու մարմինը օղակող, փակ ոլորտում պաշտպանող ու պաշարող առարկայի հետ: Սա Սրտաշեսի «ոսկեօղ շիկափոկ» պարանն է, որ նա «ընկեց ի մեջք օրիորդին Ալանաց» և կաշ-

153 Նույն տեղում, էջ 459—460.

154 Վ. Բոյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 22, Դժ. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 276—277:

կանդեց իր հոգու տիրույթում: Ոսկե օղը ամուսնական մատանին է, առեանգման հին խորհրդանիշ: Երկաթի օդն, ի՞նչարկե, ավելի հին է, և, ինչպես տեսանք, Շիդարի շղթան էլ մի գրտի է՝ ժամանակը կաշկանդող, երկրի ու ոգու թաքնված ուժը հավերժորեն ճնշող:

Դրաւու, շրջայի և օղակի իմաստները խորհրդապաշտական ծեսերում տարրեր որունորումներ ունեն: Մի դեպքում բախիվում ենք շրջափակման, մյուս դեպքում՝ կենտրոնախուզ ուժի անխուսափելիության ու անհուսալիության գաղափարին: Դարձյալ հիշենք Փափազյանի հավելումը Համելետի խոսքերին. «Ժամանակն իր շավոյից դուրս է սայթաքել, շրջան է պոկել»: Միթուոգիական նոր գաղափար է սաւ Շղթան, ըստ առասպելի, չի սրկվում, և օտարված ուժը չի աղատագովում, այլ պտտվում է կենտրոնի շրուցը այրվող մոլորակի նման, ինչպես պողպատալարը ձգող չնետված մուգը մարգիկի ձեռքին:

Մնջ հետաքրքրող խաղային մողելը վկայված է մի շարք անուններում. լախտախաղ, ջղախտի, նղախտի, ջղաստի, նենախտի, լախտի, գծախտի, կենու լախտի, կարախտ լախտի, գոտու խաղ, շրջնաձև լախտի, չվանցիկ, կրակտարոց, կուժ կուտրովի, աեղ խլուկ, շան կապ, դալլաք բուռ և այլն: Բերելով մեզ հայտնի գրեթե բոլոր անվանումները, տեսնում ենք, որ խաղի տրամաբանությունն ու սիմվոլիկան ատտիվում են մեր հետապնդած ծիսային գաղափարի շրուցը: Անունների մի մասը պարզուն ակնարկում է խաղի դրամատիկական բնույթը: Բանահավաքների բերած տվյալները բույց են տալիս, որ ժամանակին սա եղել է ծես, խաղացել են անգամ հրգելորականների հետ: Հետագայում միայն լախտախտաղը վերածվել է տղայական ժամանցի: Դժվար է ասել, թե այս խաղի ձևերից որն է ավելի հին՝ խմբականը, թե՞ անհատականը, խմբերի՝ բախումը, թե՞ խմբի ու անձի բախումը: Նկարագրված դատական խաղերում այս երկու գծերը միահյուսված են, մեկը մյուսի շարունակությունն են, բայց ի վերջո հանդում են անհատական ուժը դատելու գաղափարին: Լախտախտաղը նույնպես դատական է, ավելի ճիշտ՝ պատժական, և պատիժն էլ, խաղը խմբականի, թե անհատականի:

Հատական, բաժին է ընկնում անհատին: Լախտախտական բոլորը հավասար չեն տուժում, և վիճակները անհատական են՝ անձը անձի դեմ: Խումբը մեկի դեմ է, կամ մեկը խմբի դեմ, միևնույն է¹⁵⁵,

Երջանակենտրոն խաղերը, ըստ տիպարանության, Վ. Բդյանը ստորակարգում է տարրեր խմբերում՝ «Լախտախաղեր»¹⁵⁶, «Երջանակենդիչ խաղեր», «Խփել՝ խույս տալու խաղեր», «Բոլորվանքի խաղեր»¹⁵⁷: Մի քանի խաղեր էլ գրված են պատահական խմբերում: Այս բաժանումը մեր խնդրի տեսակետից այնքան էլ հարմար չէ: Ծիսական նշանները, որպես տիպարանական միավորներ, և խաղերի ընդհանուր տրամաբանությունը թերաւում են այլ մոտեցում: Իսկ գործողության բնույթը հանգեցնում է մեկ ունիվերսալ վիճակի՝ կենտրոնածիռ և կենտրոնախույս ուժերի հարաբերություն և ըստ այդմ էլ վիճակների ու լուծումների պարզից բարդ ձևերի: Այս տեսակի ց շրջանակենտրոն խաղերը մեզ համար ամբողջանում են որոշես մեկ խաղի փոփոխակներ (վարիացիաներ):

Այս թերես ամենապարզունակը՝ Թուխ-Կրպոյի պատմած Բաղեշի հին խաղերից մեկը. «Սատանի մեռել»¹⁵⁸, Վիճակ են զցում և խմբից մեկին թողնում մենակ: Պառկեցնում են նրան շրջանի կենտրոնում, բերանին, ոտքերին քարեր գնում, ասել է՝ շնուսես, չքայլես, և շուրջը պար բռնած պտտվում ու աղաղակում. «Արի, սատանա՝, զէս մեռել թաղա»: «Մեռյալը» վեր է թռչում և քարահալած անում պարերգակներին: Քարն ում որ դիպչում է, զառնում է «մեռյալ» ու պառկում շրջանի կենտրոնում: Խաղը մասամբ հիշեցնում է «Աբեղաթողի հանդեսի» վերջը: Թվում է, այս խաղի մի տարրերակն է երվանդ Լալայանի գրառած «Դալլաք Բորան»՝ կոռվա խաղ, անվան ու բովանդակության կապը անհասկանալի: Մի փոքրիկ փոս են փորում, վիճակով խմբից դուրս

155 Այս տրամաբանությունն է գործում նաև ֆուտբոլում. տասնմեկը տասնմեկի դեմ, բայց գնդակի մոտ միշտ երկու անձի բախում: Դրամայի պարզ օրենքն է. անկախ շարժող անձանց քանակից, բախման պետում հանդիպում են երկու անձ:

156 Վ. Բդյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 90—97:

157 Նույն տեղում, հ. 3, էջ 58—62, 67—72, 106—107:

158 Նույն տեղում, էջ 64:

մնացածը մի ոտքը դում է փոսում, շրջապատողները խը-
փում են նրան ու փախչում, իսկ կաշկանդվածը, եթե կարո-
ղանում է իր ամելի շուտ խիելով կանխել մեկն ու մեկի հար-
վածը, ազատվում է փոսից, խփվածն է փոսն ընկնում¹⁵⁹:
Նույն է «Քթուլ փոսին»՝ տարածված Ղարաբաղի հայերի
մեջ (գրառումը Օ. Եգանյանի): Այստեղ փոսը փոխարինված
է մեկ մետր տրամագիծ ունեցող շրջանագծով: Դրա երկրորդ
տարբերակն է «Քթկոմին», գարձյալ Ղարաբաղի խաղը:
Շրջանագծում կաշկանդվածը պաշտպանում է գետնին դրված
գլխարկը՝ իր անձի սիմվոլը, շրջապատողները ջանում են
ոտքով շրջանից հանել գլխարկը: Իսկ Բալազետի «Կուժ կոտ-
րուկ» խաղում (Ե. Լալայանի գրառում) խոմքը պարանով
է շրջապատում պատճողի վիճակը կրողին, և վերջինս, եթե
հանկարծ պարանն ազատվում է, պարանով հալածում է
շրջապատողներին¹⁶⁰:

Շղթայվածության ու պատժի գաղափարն ամելի առար-
կայական է երևում Վանա «Ծնողիկ», «Զվանոցիկ» (գրա-
ռումը Ե. Տեկանցի)¹⁶¹ և «Ծան կապ կամ կատղած շուն»
(գրառումը Վ. Վարդանյանի)¹⁶² խաղերում: Հրապարակի
կենտրոնում տնկում են մի ցից և ծայրից կապում երկու մետ-
րանոց պարան՝ «շան կապը»: Վիճակով խմբից դուրս մնա-
ցածը բռնում է պարանի ծայրը, մյուսներն իրենց թաշկի-
նակները դնում են տնկված փայտի մոտ ու աշխատում են
ազատել թաշկինակները, առանց շղթայվածից հարված
ստանալու: Շղթայվածը պատվում է փայտի շուրջը, իսկ
շրջապատողները՝ նրա շուրջը, ջանալով բոլոր միջոցներով
ընկճել նրան: Հարվածներ են հասցնում, շալակն են թոշում,
«Պարառեալ խումբն,— պատմում է ականատեսը,— շուա-
նեաց խարազանաւ մատչի ի շնորհաւորել զշուանակալն: Մի
կապած շան բոլորտիք եթէ 5—10 արձակ շունք ժողովին,
որպէս քաղաքաւարութեամբ վարեն ընդ կապեալ շուն: Սո-
քա եւս ընդ կապեալ առնեն: <...> օրինակի աղափաւ
10 ոշխարի շունք, որք ամեն աւր ի մասին երթան ի հօտ ոշ-

¹⁵⁹ Նույն տեղում, հ. 2, էջ 96—97, հ. 3, էջ 72:

¹⁶⁰ Նույն տեղում:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 69—72:

¹⁶² Նույն տեղում:

խարաց, ի սոցանէն մինն բոնէ եւ կապէ, տես թէ նորա սի-
րելի, ծանօթ եւ եղբայր շունք ինչ կերպիւ վարեն ընդ կա-
պեալ օտար, անծանօթ, իբրեւ թշնամի համարելով, յար-
ձակին ի վերա, հաշելով, խածելով և խեղզօց տալով: Ահա
մեր խարազանաւ պատրաստի խումբ այսպէս վարի ընդ
շուանակալ անձն, որ որպէս կապեալ համարի ի մէջ նո-
ցաւ»¹⁶³:

Ինչպես նկատում ենք, Երեմիա Տեկանցն այս խաղը
մեկնում է որպես բիոլոգիական, ոհմակային բնագդի գրան-
վորում ամբոխի ու անձի հարաբերության մէջ: Առանձնա-
ցած կամ սոցիալ-բարոյական այլ դիրքով ներկայացող ան-
հատի երեւցիթը միջավացն ընդունում է թշնամարար, ա-
ռանձնացածի կամ օտարվածի մէջ տեսնելով իր թշնամուն:
Եթե խաղը կյանքի զուգահեռն է, ապա այստեղ դրան տըր-
գում է ոչ թե նշանային, այլ կենսահոգեբանական բացատ-
րություն: Գրառուղին ուշադրություն է դարձնում, սակայն, մի
նուրբ պահի վրա: Շղթայվածը եթե երկար է մնում այդ վի-
ճակում, «ուպարառեալ խումբէն» մեկը կանխում է յուրային-
ներին, ասելով՝ «Հերի՛ք է, Հերի՛ք է, խալա՛լ ի, խալա՛լ
ի»¹⁶⁴: Խաղը թվում է բավական կոպիտ ու բարբարոսական,
բայց նրա ներքին տրամաբանությունն էլ որոշ գգուշություն
է թելադրում: շրջապատողներն անզգուշ հարվածներից խու-
սափում են, որպեսզի, եթե իրենք հանկարծ դառնան չվանա-
կալ, դրա հատուցումը շտանան: Տեկանցը մի համեմա-
տության էլ է դիմում, որ մեզ հիշեցնում է Շիղարի գրուցը:
«Ինչպես դարբինք կռանաւ հարկանեն երեկաթն»¹⁶⁵,— գրում
է նա, գուցե պատահաբար, բայց նրա համեմատականը
տրամադրում է:

Մի այլ ականատես՝ ապոչեխցի ուսուցիչ Փետրոս Գահ-
վեճյանը նույն խաղի Ակնա տարբերակում («Լող պահուկ»)
շվանակալի վիճակում տեսնում է ծառը վող խենթի:

Մեծ Բարեկենդանին ի քաշաքն Ակնա,
Լող պահուկ անվամբ խաղալ մը տեսա.

¹⁶³ Մատենագրարան, ձեռ. 4184, էջ 165 ա:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 162ա:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 161 բ:

Բաբախ սիրաբ, քրտինք վար վազեն,
Ծուխ մ'ըն է ելլի շառագույն ճակատեն.
Մերթ լա կարեեր և մերթ ծիծաղի,
Խենդ է ան՝ ձ'ըսեր, զի խաղ խաղցի:
Վերջապես ելլի, ճիգ մ'ըն ալ թափի,
Զեղավ նե ուրիշ կերպեր ալ փորձե,
Մինչև որ զարնեն հոգոսին մեկը,
Քաջության պատկ ձեռէն առնե ձազկը^{166:}

Խաղի հիմնական տարբերակներում պատժի գաղափարը
և առարկայական է, և խորհրդանշական: Բայց հայտնի է մի
մանկական խաղ՝ «Լախտիով պուտ», որտեղ պատիժը ֆիզի-
կականից հանգում է սիմվոլիկ-խորհրդապաշտականի: Խաղը
կոչվում է նաև խարույկ: Շրջանագծի կենտրոնում խարույկ է
վառվում կամ դրվում է մի քար, որպես կրակի սիմվոլ: Անհա-
վասար թվով (կենտ) տղաների խումբը միմյանցից մեկ քայլ
հեռավորությամբ նստում են կրակի շուրջը: Նրանցից մեկը,
որ շրջանում տեղ չունի, լախտը ձեռքին երեք անգամ ձախից
աջ պատվում է նօտողների շուրջը և անսպասելի կերպով
մեկին խփում է լախտով, լախտը ցցում նրա գիրկն ու փախ-
չում: Նա սիետք է պատվի ու նստի լախտի հարված ստա-
ցողի տեղում, իսկ վերջինս պետք է նրան լախտածեծ անի:
Եթե շկարողացավ խփել, լախտը պետք է նետի հաջորդ նրս-
ուողի գիրկը և փախչի: Եթե փախչողը խախտում է շրջանա-
գիծը, նրան «Հրկիպում» են. գլխից մի մազ են պոկում ու
նետում խարույկը^{167:} Սա արդեն ակնհայտորեն հեթանոսա-
կան մերապրուկ է: «Այն պատկերացումը, որ մարդուն կա-
րելի է կախարդել նրա մազափնջի միջոցով,— գրում է Ֆրե-
կերը,— տարածված է զրեթե ամբողջ աշխարհում»^{168:} Հստ
այս նախապաշտումնքի, մազը եթե ընկալվ կախարդի
ձեռքը, մազի տիրոջ կյանքն էլ նրա ձեռքին է. մազը աղոթե-
լով ու թաղելով կարելի է մարդուն մահվան մատնել քսան

166 Կ. Ճանիլյան, «Հությունք Ակնա, Թիֆլիսի, 1895, էջ 175 (բերում
էմ ըստ Վ. Բոյցանի, հ. 3, էջ 69): Լոլ նշանակում է կտուրը հարթեցնե-
լու վրան (Հ. Անայան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 292):

167 Վ. Բոյցան, նշվ. աշխ., հ. 3, էջ 57:

168 Ջե. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 268:

օրվա ընթացքում: «Հայերը,— շարունակում է ֆրեգերը,—
ուն չնն նետում կտրված մազերն ու եղունգները (նաև ընկած
ատամները), այլ թաքցնում են սրբազն համարված տե-
ղերում (եկեղեցու պատի ճեղքում, տան առաստաղը կրող
հիմնական սյան ճեղքում)»^{169:} Մազն այրել շրջանագծի
կենտրոնում արված խարույկի մեջ, թերևս նշանակում է
զոհել մարդուն հեթանոս մի սատվածության, նայած ում
տիրույթն է հնիթաղը պում շրջանագծում, կամ ինչ ոգի է պա-
շարված այնտեղ:

Շրջանակենտրոն խաղերի արտաքին նշանները շատ
տարբեր եւ հակասական (գուցե և միասնական, եթե մեր
իմացությունը բայլարարի ըմբռնելու) աղերսներ ունեն:
Շատ բան մեզ անհայտ է: Բայց որոշակի է, որ այս խա-
ղերն ինչ-որ անխորհուրդ ժամանց չեն կամ զուտ մարզա-
կան միջոցները Սիմվոլիկան շատ կողմէրով մնում է շփեր-
ծանված, և դա, համարակալի է, չի նշանակում, թե խաղերի
իմաստը սահմանափակված է առարկայականությամբ:

Մեր խնդրի տեսակետից ամենից ավելի մշակված է
երկում, եթե կարելի է այսպիս անվանել, դասական լախ-
տափաղը: Դարձյալ ֆիզիկական բախում, խաղացողների
կուրտ վարքագիծ, բայց ոչ ֆիզիկական պարտություն:
Ամենաբնութագրականը, որպես խմբի ու անհատի հարաբե-
րություն, «կենտ լախտին» է: Վիճակ են հանում, մեկին թող-
նում շրջանի մեջ, գոտին զնում շրջանում՝ ծայրը դուրս: Հին-
գից յոթ հոգի շրջապատում են «թուրան (լախտը) պաշտպա-
նողին, աշխատում նրան շփոթեցնել և փախցնել «թուրան»:
Փախցնողը բոլորին քշում է շրջանագծի մեջ և սկսում լախ-
տով ծեծել այնքան ժամանակ, մինչև ներսիններից մեկին
հաջողվի ոտքով խփել ծեծողի ոտքին: Այստեղ գծամեջ է
մտնում ծեծողը և դառնում լախտը պաշտպանող՝^{170:} Խաղի
պատկերը շատ լարված է, խաղացողները բոլորը կենտրո-
նացած են, ուշադիր: Եթե դիտողը չի տեսնում շրջանագիծը,
տպագրությունը դրամատիկական է. մարդիկ շարժման մեջ
են և միաժամանակ զսպված, ներսինները առաջ են ցցում

169 Նույն տեղում, էջ 269:

170 Նույն տեղում, հ. 2, էջ 95:

ոտքերը և մի ոտքը պահում են շրջանագծի ներսում, առաջանում է կաշկանդված ու շարժուն վիճակների հակադրություն. մեկը բոլորի զեմ, բոլորը մեկի զեմ, և ոչ մի անկարգ իրարանցում: Թվում է, թե շրջանագիծը մի կախարդական օղակ է, և այդ օղակը բոլորին զնում է ներքուստ սևեռված վիճակի մեջ: Տարօրինակ է լախտը լինգ անվանելու սովորությունը. մարդիկ կամ երկաթն են պաշտպանում կամ երկաթով հարձակվում: Երկաթի պաշտամունքի հեռավոր հիշողությունը կա այսուհետ: Ո՞վ գիտե, թե նախկինում ինչ իմաստ է տրվել այս գործողությանը: Տևկանցի ակնարկը դարեինների կոնահարության մասին գուցե ինչ-որ բան հուշում է, բայց ավելի լավ է շատ հեռուն շփնալ մեկնություններում: Ուղղակի առնչությունը շղթայված երկաթի կամ մուրճով երկաթը կոնելու ծխական ավանդության հետ գուցե մի օր պարզվի մեզ համար:

Գրամմատիկական առումով ավելի հետաքրքիր ու տեսարանային է խմբական լախտախաղը: Խաղում են երկու խըմբ՝ ներսիններ և դրսիններ: Ներսիններից յուրաքանչյուրը պաշտպանում է մեկ թուրա, խմբերը դրսից կամ ներսից նվազում են՝ մեկին ձեռքով դուրս են քաշում գծից, գերի պահում, մյուսին դրսից են ներս քաշում, փոխվում է շղթայվածների կամ «կոնահարողները» քանակը: Շրջանագիծը միշտ մնում է կաշկանդող միջոց. ներսինները պայքարում են առանց մի ոտքը շրջանագծից հանելու, դրսինները առանց շրջանագծի մեջ մտնելու, խփում են միշտ ծնկից ներքե, և երկու կողմից էլ աշխատում են պակասեցնել հակառակորդի քանակը. երկու կողմից էլ շղթան կտրելու պայքար է զնում: Տեսարանը դառնում է ավելի դրամատիկ, երբ գծամիջում մնում է մեկը և իր միակ լախտով, առանց շրջանագծից գուրս զալու հարձակվում է շրջապատճեների վրա, մինչև որ մեկը դրսից կարողանա խփել նրա ոտքին: Շղթա են կռնում, շղթա են կտրում, կաշկանդման ու կաշկանդումից աղատվելու պայքար է տեղի ունենում, պատվում են շրջանագծի շուրջը, տեղերը փոխում, իրար շփոթեցնում փոշոտ գլխարկները միմյանց երեսի զարկելով: Կարդում ենք Պոռշյանի նկարագրությունը: Քյուղի քահանան լախտախաղի մեջ է, թոշկոտում է «Ճիմ» (գծի) շուրջը, աղմկում.

Դե՛ւ, ոռննա՛ծ, մի քիլ էլ կարգիս խնայեցեք, կամաց տվեք է՛, — ասում էք մեր տեր հայրն ու էլ հետ թոշկոտում ձեր շորս կողմը, աշխատելով լախտը բռնողի ձեռքիցը խելու:

— Ուշնչ, տերաեր ջան, բարեկենգան օրեր ա, խելքներս կորել ա, — պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում¹⁷¹:

Մրգանձայանի վկայությամբ, այս խաղը կոչվում է նաև կրակտարոց: Բստ Բդոյանի, կրակտարոցն այլ խաղ է¹⁷²: Բայց մենք արդեն նկատել ենք, որ շրջանակենտրոն խաղերի շատ տարբեր անուններով են վկայված: Կրակապաշտության հիշողությունը այս խաղում, եթե ելնենք մեզ հայտնի գրառումներից, չի երևում: Դա կարենոր չէ, կարենորը լեզվական թեկուզ մեկ վկայությունն է, որ ինչ-որ մի աղերս է հուշում: Եթե կա երկաթի գաղափարը, հոգու տիրուցի ու շրջափակման գաղափարները, ուրեմն կրակն էլ հեռու չէ: Ուշագրավ է Բդոյանի այն բացատրությունը, որ այս խաղում պայքարը տեղի է ունենում հոգին կրող առարկայի շուրջը, և այդ առարկայի անկումը խորհրդանշում է հոգու կործանումը¹⁷³: Հոգին կրող առարկան գոտին է՝ անձը պահպանող սիմվոլը: Հետաքրքիր է, որ կենտ լախտախաղի ժամանակ գծամիջի խաղացողը պաշտպանում է այնքան լախտ, որքան դրսինների քանակն է: Եթե տրամարանությանը հետևենք, դրսինները պայքարում են օտար տիրուցիում կաշկանդված իրենց հոգինների համար: Սա, իհարկե, ենթադրություն է. գուցե խաղն այլ իմաստաբանություն ունի: Անվիճելի է առարկա և անձ հասկացությունների սիմվոլիկ նույնացումը, ինչպես աստվածության մարմնավորումը որևէ նյութի կամ առարկայի մեջ՝ հեթանոսական պաշտամունքի հիմքերից մեկը:

Լախտախաղը բոլոր արտաքին հատկանիշներով ֆիզիկական գործողություն է, բայց սիմվոլիկ առարկայի ֆետիշացումը մտածել է տվել, որ այսուհեղ վիճարկվում է հոգու իրավունքը: Եթե արտաքին հատկանիշներով դատենք, կը տեսնենք, որ խաղի բնույթը դատական է, նույնիսկ թվում է, թե կրկնվում է «Ճահ-կան-Փաշա-Ղաղի» խաղը հույժ պայմանականորեն, միայն դրությունների սիմվոլիկ վերարտադրությամբ և սիմվոլիկ նշանների միջոցով: «Այս խաղե-

171 Պ. Պոռշյան, երեկոի ժողովածու, Հ. 1, էջ 26.

172 Վ. Բդոյան, նշվ. աշխ., Հ. 2, էջ 21:

րում, — գրում է Բդոյանը, — ամենանախնականը, որ մենք կռահում ենք, ծիսական շերտն է: Մեզ թվում է, որ գրանք նախապես խաղ չեն եղել, այլ միստիկական գործողություններ, որ գոյանալու էին ոգեպաշտական հողի վրա»¹⁷³; Բայց փոքր-ինչ պարզունակ է թվում Բդոյանի ենթադրությունը, թե շրջանագիծը տոհմի տնակն է խորհրդանշում կամ պահետը¹⁷⁴: Շրջանագիծը, եթե ենթադրքի ու պատմության հնագույն պատկերացումներից, որ ամբողջացրել է Պլատոնը, արիեղերաբանական դետերմինանտ է: Մեկնություններ կարող են շատ լինել: Մեզ համար ամենաէականը հնագույն դրամայի մոդելն է, հնագույն ծեսերի ունիվերսալ պայմանաձևը, որոնց մասին արդեն խոսել ենք:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԱՎՈՐԾ

Եւ ինքն էր պահեցող յոյժ և
միայն զարդարությունը և սակափկ մի
հաց ճաշակեր <...> և պարան կա-
պեալ էր ի սենեկի խրում. և յորման
տքներ և աշխատեր, անկաներ լանջօքն
ի վերայ պարանին և սակափկ մի
ննջեր:

Հովհան Ռոկերեանի վարդից.
Մատենադարան, ձեռ. 4512:

Հայտնի չէ, երբ էր, որ քրիստոնեական սրբավայրերում հայտնից միջնադարյան խաղաղապարակների ասպետը՝ սրբի լուսապսակով և այցամորուս «զինակիր»-ծալրածուի ուղեցությամբ: Հին է այս ուխտը, թե նոր, չգիտենք: Գիտենք, որ Գրիգոր Լուսավորիչը «կարգեց ի Նաւասարդի մեկըն տաւնել սուրբ Կարապետին և Մկրտչին Յովհաննու»: Փաշէւանը զալիս է Սուրբ Կարապետի գանքից և մեր առջեւացում է կյանքի ու աշխարհի միջնադարյան պայմանաձևը, մարդկացին վիճակների հակադրամիամական պատկերով, ոչ որպես որամատիկական բնիքը, այլ բնիքացքի գիտանկարային թղթանք կամ հայրապետի առաջնորդությունը նազը այլ

հարթության վրա է. Ճիշտ է՝ շրջանաձև հրապարակում, բայց ոչ նրա «կախարդական» շրջագծում, այլ երկնքի ու երկրի միջև:

Լարախաղացությունը հին արվեստ է՝ տարածված Արեւելքում, Առաջավոր Ասիայում, Հռոմում: Հայ մատենագրության մեջ այս երեսովի ամենահին վկայությունը տալիս է Դավիթ Անհաղթի «Սահմանքը». «Եւ են ընդունայն արհեստութիւնք՝ լարախաղացութիւն, ծողախաղացութիւն, որք ոչ օգտեցուցանեն զկենցցաղս և ոչ վնասեն»¹⁷⁵: Սրբության ոչ մի ակնարկէ: Հստ հունասեր փիլիսոփայի, նաև ըստ միջնադարի պաշտոնական գաղափարախոսության, ովու աշխարհից զուրս է տեսականորեն և գործնականորեն չեղոք կամ անօգտակար աշխատանքը: «Ընդունայն» նշանակում է անխորհուրդ և անտուրիա՝ գործողություն կամ պատկեր, որը շունի դիտման օրինկտ, նշանակյալ, շունի իր ակներնությունից զուրս այլ իմաստ: Վերջապես, դարձյալ ըստ Դավիթ Անհաղթի, «արուեստ անակութիւն» ոմն է և գիտութիւն» և «զամենայն ինչ ըստ կարգի առնէ»¹⁷⁶: Ի՞նչ է լարախաղացությունը այս առումով: Թա ժողովրդական «սրբնչելիք» է՝ հրաշագործություն, որ խախտում է իրերի բնական ընթացքը, աստվածացն նախառահմանությունը, ստեղծում աշքի ու բանականության համար արտասոց պատկեր: Հստ Արոն Գուրեկիչի, այս տեղից է ծագում միրակլի գաղափարը¹⁷⁷: Լարախաղացությունը ժողովրդական սրբի հրաշագործությունն է, որ ստեղծում է կյանքի «բնդունայն» մի պատկեր: Միջնադարում ժողովրդական կրոնասիրությունն ըստ էության հակառակած չէ պաշտոնականացված հավատին, բայց նա ստեղծում է իր տեսիլքները, հաշտեցնում երկինքն ու երկիրը¹⁷⁸ և իր հրաշագործության ասպեկտին, որը հնագարից է գալիս, տանում է քրիստոնեական սրբի գուրը, նրա գլխին դնում Աստծո որ-

¹⁷³ Հմատ. Առաջ տեղում:

¹⁷⁴ Առաջ տեղում:

¹⁷⁵ Գավիթ Անյալը, Սահմանք իմաստասիրութեան, աշխ. Ս. Արեւածարանի, Երևան, 1960, էջ 104:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 102: Հմմտ. Գ. Օգանեսյան, Об эстетической ориентации Давида Непадимого, сб. Философия Давида Непадимого, М., 1984, с. 207—214:

¹⁷⁷ Ա. Գյուրեսակ, նշվ. աշխ., էջ 318:

¹⁷⁸ Հմմտ. նույն տեղում, էջ 275—277:

դուն մկրտողի աջը: Հետեւարար, «բնդունա՞յն» է արդյոք լարախաղի՝ այս Երացնարիկ աստվածասիրի գործած հրաշքը:

Հայ լարախաղացը, ինչպիս ժողովուրդն է ասում՝ Փառշանը սուրբ Կարապետի ուխտավորը է, նա գալիս է քրիստոնեական մարգարեին՝ Հովհաննես Մկրտչի տաճարից Բայց այս Մկրտիչը ժողովրդականացած է և հայացված, նա հանդիս է զալիս կարծես ոչ այն գիմազմակ, ինչ Հովհաննես նախական համարքիուսոնեական միջավացրում: Եթի սա Բաղդամի տաճարի սուրբն է, որին Հրաշապործության տոպիան էլ մկրտվել է Եփրատ-Արածանիի ցիրում: Դա հայունի չէ: Զգիտենք՝ որ դարերում է ժողովրդականացել ու հայոցի Հովհաննես Մկրտիչը: Վարդ միջնադարից վկարիցած կարսպարագը, որ նշանակում է «Հօրդորիչ Հանապարիչ», տաշընթար սուրբ հանդիպակ, նախընթաց անեաւոր, սեփականեալ անուն Հովհաննես մկրտչի¹⁷⁹, ժողովուրդը դարձել է հատուկ անուն, հետին զարերում՝ «Մշտ սուրբան սուրբ Կարապետ»: Գրտէան միայնություններին նայելով դժվար է տարբերել հատուկ ու հասարակ անունները, քանի որ ձեռագրերում փոքրատարի ու մեծատառի խնդիրն անորոշ է. Մկրտիչն էլ կարող է գրվել փոքրատառ, Քրիստոսն էլ: Պայմանականուրեն կարսպետի ժողովրդականացման փաստ կարող ենք համարել Հայումագուրքը, որը որպիս տոնացուց մատյան ամբողջացել է Հ դարից (914 թ.)¹⁸⁰:

Այսպիս, Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական «առասպել տօնի» փոխարեն հաստատեց Հովհաննես Մկրտչի տոնը: Բայց ինչպես վարդից նա նավասարդյան «աշխարհախումբը» զարդարող դոսանների հետ նրանց էլ մկրտեց, կամ նրանք էլ Բագավանում մկրտվեցին: Ժողովրդական տվանությունը Կարապետին նույնացնում է Տարոնի պահապան երկարամազ սորի հետ, որը սաղմի աստվածություն է՝ կանգնած Յայքնայաց պաշտպանների թիվանքին: «Եւ յանհարծակի ահախն ույր մի զիտուր, — կարում ենք «Տարոն ուղամատթյունում, — որ բայց փալլեր ի հերթն նորա, և զա-

մբ Բնամեացն կուրացուցանէր: <...> սուրբ Կարապետն մեղ ի թիկունս հասկալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմից¹⁸¹: Տրամաբանական է, որ Հրաշապործության ասպետը գնաց Տարոն և գտավ իր մկրտչին Միրինկատար սարի կանաչ սուրբանում, ինչ աղյուրների մոտ, «Բննակնեան» մեջ՝ յանի անդում, որ թաղված էր Հովհաննես Մկրտչի և սուրբ Աթանազինեսի ուկերաց մի մասը (Թագավանից հետո կամ առաջ, հայտնի չէ) և հիմնվել էր Գլակա վանքը (VI դ.)՝ «Մշտ սուրբ Կարապետը»: Ավանդությունն առավ է, թի Զենոր Գլակը «Հաղաքար» մեր սուրբ Լուսավորչին, որ հոն մնա, որ կիրակին մազ ուկերք կարույր Աթանազինեի և Հովհաննեսի¹⁸²: Նույն ավանդությամբ, այս վանքի ուխտավորներն են եկել միջնադարյան Հայուստանի երգիչները, գուսաններն ու լարախաղաները: Ենթագումում է, որ Սայաթ-Նովան էլ եղել է այսանուց: «Ըստը Կարապետի կարուղութեանվ սովորցա բամանչին ու շննդուրն», — ասում է ուշ միջնադարից եկող մեր բանաստեղծը¹⁸³:

Սուրբ Կարապետը համարիստոնեական մի գաղափարի նորոգումն է աղդային-ժողովրդական հողի վրա: Լարախաղաներին հովանավորողի ու ձիրք տվողի գերը նրանն է: Թերևս սիամի չէ ուսումնասիրողների և թագրությունը, որ այս հասկացության մէջ հեթանոս մի աստվածության հուշ է ամփափմած: Հայ լարախաղացի զգեստավորման և խոսքերի մէջ խոսում է քրիստոնեական սուրբը: Լարախաղացը հայտնվում է կարմիր կամ ծիրանակույն ատլասի շոշողում արխալուղ, ինչպիս Թիգառասը կարմիր քամմիղով խաչ բարձրանալուց առաջ Արխալուղը կոճկված է և պարանոցի մոտ բաց, առանց կանգների, պարանոցը զարդարում են մետաքսեր, ճերմակաթուրը, ժանեկաղաքը կրծկալ-օծիքը և հուռութների ժակավենեները: Հուռութները, որ հանկյունածե են,

179 Առ բացիրը հաշկաղուն Շեղամի, հ. 1, էջ 100 հ.

180 Ա. Ավանդության, նշվ, աշխա, էջ 26:

181 Յավհան Մամիկոնեան, նշվ, Հրամա, էջ 106:

182 Ա. Տեղանց Այցելություն ի Հայուստան, 1878 թ., Օբւան, 1935, էջ 56:

183 Արար-Եղիա, Խաչեր, Արեան, 1959, էջ 10:

գարդարված են գունավոր ծովականությունը, հեռվից նմանվում են ծաղիկների: Նրանցում թղթեր կան, որոնց վրա աղոթքներ են պրված նարեկացուց կամ «Ժամագրքից»: Հուրիբները նրա թալիսմանն են¹⁸⁴: Պարզ երկում են բնության հեթանոսական պաշտամունքի և քրիստոնեական հավատի նշանները:

Ներկայացումն սկսվում է զունա-դօսի աղմկալից ներառածոթյամբ: Խարխաղացը վերցնում է հավասարակռության ձողը՝ «Թարագուն» և դանդաղ ու հանդիսավոր բարեգանում իւր լարի վրայով: Զողափայտը և նրա ուղիղ մարմինը խան ներառում: Թվում է, այս ակնհայտ պատկերը նաև ներքին հմաստ է հնիտադրում: Ճշմարտության գուստաբը թարմնախորում է այստեղ մարդու, որպես արիգերքի կինտրոնի, տիեզերական հավասարակռությանը կրողի և արդար դատաստանի կշեռը սպահուի տեսքով, խսկ խաչը համաշափության ու հավասարակռության երկրաչափորին ամենաճշգրիտ պատկերն էր Խարխաղացը, վեր բարձրանալով, սրբազն արարողության է կատարում, քանի իր գործը նա համբում է ապաշխարտանք, սրբին ծառակից մի ձեւ: Նա հանում է կայսի ծայրը և կանգնում: Երաժշտությունը լուսում էր Խարխաղացը կանգնած է ուղիղ, հպարտ, հանգիստ ու կենտրոնացած և իր այս կեցմածքին նա տախիս է ճակատագրական դատապարտվածության հմաստ: Նա բարձրացել է այստեղ աստծո ու նրա մարզարեի կամքով, որպես հնարավոր զոհ, և ապաչորությունն այնպիսին է (ովմալներն են այց են ասում): Բնագամնակը բարեգանում է խաչելության ու հարության գաղափարները միասնալու: Ապա նա ծողափայտը մոտեցնում է շուրջերին, ինչպիս խան նա համբուրում, և հայցացը երկնքին, բարձրածայն արտասանում է.

—Եղու սուբիթան սարբ Կարապետ, մեռնեմ քո զորութենին, ես վերու կը թարապատ քու զորութենով ուժովցած, լինչի ամուլով շանհան^{185:}

104 Հայութ բանահացար Հովհաննես Մալխանյանի նկարը ըստ Բանեանի (մեջ Վ. Բանեան, Խոյ, աշխ., հ. 1, էջ 127):

185 Սրբովթյանը դիմելու այս բնդումված խոսքը, լսել եմ մի լաբա-
խաղացից Երևանում, 1953 թ. (Տերյան փոստոցի № 129 շենքի՝ Բժշկա-
կան ինստիտուտի հանրակացարանի բակում):

Եա նման է պատարագի սկզբում արտասանվող «ողջունի աղբթքին», որով քահանան իրավունք է աղերսում մոտենալու Տիրոջ սեղանին։ Լարախաղացը, որ գրված է հնարավոր զոհի վլաճակում, փրկություն է խնդրում իր սրբից։ Աչա նրա աղոթքի երկրորդ մի առարկերակը.

Ավ, տեր, բարեբար աւագած,
Գու պահես, պահպանի՞ս՝
Վաս լեզվից, չար մարդկէն,
Զար աշբից, ագատես
Փոքանութիւն...166

կարևուսաղացը կանգնած է երկնքի ու երկրի միջև, որպես միջնորդ, արդարության կշեռքի օպությամբ։ Աղոթքի մեջ հայտնի երրորդ աւարելիքական կա այդ վիճակի ակնարկը։

Եկ. 14 Հարսնացած և ծավածմա բառ Ա. Խոջոյիկյանի:


— Տեր տառակուն, կի՞ն ես արքայի հետ, թազ իմ ձեռքի թարապան գույն
Ես արքայի գալաքանական է եմ ու իմ ձեռք շահեալ լուսին:

186 G. A. NICHOLSON

Աղոթքից հետո լարախաղացը աշ ոտքը սեղմում է լարին, դանդաղ սահեցնելով առաջ հրում, ապա հենման կետից պոկում է ձախ ոտքը և թոփչքածկ վազքով անցնում լարի մյուս ծայրը ու պարելով ետ գալիս: Զուռնաշին ու դհուշին վլում են երածշտովթյունը, լարախաղացը պարում է պարզ պարաքայլերով, թեթև. նա զեռ բարդ «տրյուկներ» չի անում, մեաններն է տաքացնում և փոքր ինչ անց գարծյալ կայմի վրա է: Այստեղ հայտնվում է նրա «զինակիրը»՝ այժմորուս և ավելացրէ ծաղրածուն, կարճ ճիպոտը ձեռքին: Նա գալիս է սուարէլով, թվոտոք «թարագու» դարձրած: Ծաղրածուն երեմ: Հաշտնվում է անսպասելիորին, բարձրածայն սովորով, ճիշով.

— Գու էզ ո՞վ էլար, որ հելար փեղի դրոխ ու արխային արխային նստար, — զիմում է նա լարախաղացին:

— Ես քըս ջուխտ աշկեր խանող էզա, — պատասխանում է լարա-



Եկ. 15 Լարախաղը և ծաղրածուն ըստ Հ. Քաջակյանի:

խաղացը: — Ես սուրբ Կարապետի զորովենով ճիլա, որ ժողովուրդ ուրախցնեմ, տու ո՞վ ես:

— Ես քինէ մենձ մարթ եմ: Տու կանա՞ս իմ կյործ անի, կանաս ժողովորդ իմբնուցնեմ¹⁸⁸:

188 Նման խոսքեր բերված են Սրբուհի Իիսոյցանի «Старинные армянские пляски» (Ереван, 1983, с. 34) աշխատովթյունում սուսերեն

Լարախաղացը և ծաղրածուն ներկայանում են որպես հակոտնյա զիմակներ՝ մեկը իմաստուն, ամենակարող ու անձնուրաց¹⁸⁹, մյուսը հիմար, վախկոտ ու անհեթեթ (նկ. 14, 15): Լարախաղացը գործում է, եթե հիշենք վեհի ու ողբերգականի միջնադարյան ըմբոնումը, «ահաւորապէս, ըստ գործեցելոցն գերազանցութեամբ, ամենայնիւ դիցաղնաբար»¹⁹⁰, ծաղրածուն՝ համաձայն կատակերգականի՝ «կաղի կաղս ինչ և քամահելիս»¹⁹¹: Այդպիս էլ հորինված են նրանց երկխոսությունները: Զարմացած ու միամիտ ձևացող ծաղրածուն զիմում է հերոսին.

— Այ փաշէւան, ո՞վ է տվել քեզ էզ հունարը:

Հերոսը պատասխանում է:

— Այ մասիսարա, զու չոյտե՞ս, որ հունարն ինձ տվել է Մշուս սոլթան սուրբ Կարապետը:

— Ես էլ եմ զնում սուրբ Կարապետ, որ ես էլ ստանամ էզ հունարը, այ փաշէւան:

— Գու իմ հունարը չես ստանա, այ մասիսարա, զու կստանաս քո մեջքին երկրորդ սապատը¹⁹²:

Բարգմանովթյամբ: Պատմողը եղել է Վանի վիլայեթի Գավերան զյուղից գաղթած գհոյշի նշան Գևորգյանը: Պետք է նկատել, որ Լարախաղացության ամենահանգամանալից նկարագրությունները տրված են Սրբ. Լիսոյցյանի այս աշխատովթյունում, բայց սուսերեն թարգմանությունը, հայերեն տեքստի բացակալությամբ, իսկստ նվազեցնում է նյութի աղդաբրածան արժեքը:

¹⁸⁹ Մանկոթյունից հիշում եմ լարախաղացության խիստ յուրահատուկ ու բնութագրական մի պատկեր: 1946 թ. Խ. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտի շենքի մոտ (ներկայիս հանցան փողոցի մայթի տեղում) ոչ աշնեան բարձր կապված հաստ պարանի վրա անհամարձակ ու վախեցած պարում էր մի մանկահասակ՝ մոտ տաս-տասներկու տարեկան լարախաղաց: Ներքեւում կանգնած էր մայրը, ծափ էր զարկում ու երգում պարզունակ մի պարեղանակ: Կինը հետաքրքրվողներից լեկին ասաց, թե երազում ու կարապետը պատվիրել է իրեն որդուն լարախաղաց դարձնել, հավաքած զրամով մատադ անհի, այլապես տղայի կյանքը երար չի լինի:

¹⁹⁰ Հ. Ածոնց, Դիոնիսի Փրակնի և արմանական տոլկօթելի, ՊԵՐ, 1915, ս. 89.

¹⁹¹ Նոյն տեղում, էջ 129:

¹⁹² Գ. Լունյան, Թատրոնը Հին Հայուսանում, Երևան, 1941, էջ 135—136:

Այս պարզունակ խոսքերում հետևյալ իմաստը կատարենքին չի տրված աստվածությանը հաղորդակցվելու շնորհը. հավատ է պետք և հոգու պատրաստություն սրբի դուռը գնալու համար, քանզի սուրբը չի սրբում գետնաքարշ, անձիտ կատակարանին: Բայց ծաղրածուն էլ հիմար չէ: Միջնադրում նա իմացել է, որ ինքը հորով ազգատ է և, սթի միամիտ էլ է, երկնդի արքայության դոները բաց են իր համար¹⁹³: Բայց ծաղրածուն ուզում է այնուամենայնիվ իմանալ, թե որտեղ է լինելու ինքը մահվանից հետո:

- Դարդաշ փաջեան, ո՞ւմ տեղն է նող, իմո, թե ընկը:
- Իւարիկ իմք: Իմ տեղը դժվար է, — պատասխանում է լարախաղցր:

— Ըս մի, զու զս զսողությունից ուսել ես, փրփէլ ու մեծ-մեծ խոսում ես, թէ տեսիք, փաջեան նմ, քանդիրի վրա եմ կանցնել, խաղ եմ խաղում: Դու որ չո տեղից բնինս, ո՞ւր կընկնել:

Լարախաղցր պատասխանում է.

- Ո՞ւր սիտի բնինս, զետին:
- Լավ, զու որ գետին ընկար, և՞ս ուր բնինս:
- Ո՞ւր կընկնել: Դու էլ գետին կընկնել:

Լարախաղցր, թվում է, խուսափում է խսկական պատասխանից, թողնում է, որ ծաղրածուն ինքը որոշի իր տեղը հանդիրձալ կյանքում: Նա էլ ըրոշում է.

- Թէ որ ես ընկա, էղամ մինչեւ ու ջաննամը...¹⁹⁴

Հին և մոլովրակական կատակերգության մեջ ծաղրածուն ներկայանում է ծառալի դերով: Այս ծաղրածուն էլ լարախաղցի ծառան է և ունի ծառալի բոլոր գծերը, մի կողմից խորամանկ է ու սրամիտ, կատակարան, բարդ իրավիճակները պարզեցնող, մյուս կողմից՝ բութ, անհասկացող, պարզ իրավիճակները խճճող:

- Սինի յեր, — առան է նրան տերը:
- Ի՞նչ, ի՞նչ, չի՞ն: Չինին ի՞նչ առ:
- Այ ժարդ, ովել չե, ովի՞ն մարտ ցույց է առիօս ովո՞ւ զրում):
-
- Եմք զի՞ համ բանալու, — առան է տերը:
- Մոնիշ ու մաս ի՞նչ առ:

193 Տե՛ս Յ. Շահումյան աշխատքը էջ 307:

194 Ը. Խաչատրյան աշխատքը էջ 22:

- Կոիր, ա՛յ մարդ, մանշալ չե, խանչալ, խան... շա... ա... ար:
- Հա-ա-ա, հա-... խանչա-ր:
- Տո, հա էի, հա, խանշալ¹⁹⁵:

Գալիս է մի պահ, որ ծաղրածուն ուզում է լարախաղցր դառնալ: Մինչ տերը հանգում է կայմի ծայրին, նա վեցնում է ձողափայտը և նվազածուներին հրամացում նվագել.

— Դե՛, վիւ, շան տղա զունաշի:

Ծաղրածուի գերակատարը, պատահում է, որ լինում է իր «ուստից» ոչ պահապահաղցր: Բայց իրավրաբերումը պահանջում է, որ չնսիմայնի վարպետին: Նա վեցնում է ձողափայտը և բարձրանում մինչև կայմի ծայրը և որպես թի սարսափից ու ուրախությունից գոռում:

— Օխա՞յ, քամին մտակ շարքարա¹⁹⁶:

Նա սարք ունում է լարին և մինչեւ իր քայլ անում: Թվական է, քիչ է մնում, որ նա համարվի սուրբ Կարապետի ուխտավորին: Բայց դրանով կիմաստաղրկվի ներկայացումը, և հերոսը կնօեմանաւ: Ծաղրածուն չի անում այդ քայլը: Նա սարսափի է խաղում, ճշում, ավազակում և դեմքին կոմիկական տաղնապի ետ է վերապառում նկած ճանապարհով: Ներկայացման շարունակության մեջ ծաղրածուն դառնում է պատրաստակամ, համկացող ու հնազանդ ծառաւ նա ոգեպարփյուն է խաղում, հիանում իր վարպետի գործով, գետնի վրա կրկնում նրա շարժումները, զլուխկոնծինիր տալիս և դրամ է հավաքում որպես թիրու իր ամար: Հերոսի համար ստորացուցիչ է վարձատրություն խնդրելու նա զբաղված է լուրջ սրբով՝ ծառայում է իր սատվածությանը, իսկ զրամ համարելու դորձ թողել է իր ծառային սրբություն ու հերոսություն չնանալով, գետնաքարշ «փիլիսոփայությամբ» ապրող անձունի մարդուն, գործնական կյանքի ստրուկին¹⁹⁷:

Եվ աշա մի կետ, որտեղ լարախաղցը հիշեցնում է

195 Կոյշ անդում, էջ 40:

196 Էմած խոսք է (1956 թ.):

197 Հմմատ. «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 251—252:

պարծենկուտ անծանոթին՝ վանա Փաշալին ու Քաջ Նազարինտ կեղծ հերոսականության ակնարկը թուզ է, բայց որոշակի կարախաղացը չի իջում իր բարձունքից, բայց գուցե ակամա, հիշեցնում է, որ ինքն էլ է խաղում:

— Փաշեան ախարկ, — կանչում է ծաղրածուն
— Հրամի, ախարկ չան
— Տո՛, ձեզ կարի, — զանալով զուռաշիներին, առում է ծաղրածուն:

Գլխակոր զուռաշին անհմատ զեզրելունքներ է արձակում, որպես թե կարողանում լուել:

— Տո՛, դեզ եմ առում, շան թուլա, ձեզ կարի:

Զուռան լուսի՞ է:

— Գայգ ուստի՞ց, զնալո՞ւր, — զիմում է ծաղրածուն բարախաղաւին:

— Գայս զուռափից է, զնալու Մերքա, Զանգիւի ժամի զուռք մուրագ առնելու, Քաղցի առածուն կանչելու, որ ժողովրդին օգնի:

Թատերացնորեն նուրբ է այս կենտրո Լարախաղացը կարծես Հեղուում է մահմեղական սրբությունները և պարծենում ու իր, այլ ուն ինքնակուչի անունից «Օտարման էֆեկտ» առավածը, ինչպես տեսնում ենք, բանահյուսական հիմք ունի:

— Փաշեան ախարկ, — զարձակ կանչում է ծաղրածուն
— Հրամի, ախարկ չան
— Ես հոնարք, ես շնորհքը ո՞ւմ ըլի:
— Առածուն ըլի, — պատասխանում է լարախաղացը, — առաներկու առաքյալին ըլի, Հետուի շորս ավետարանիչին ըլի...

Եվ ավելացնում է.

— Շիրվանի շեշիերուն ըլի...
— Ե վալո՞ւ, վահիւան ախարկ, եզ հոնարք ո՞ւմ համար ես ծախում, գիտես
— Արագիս ազայի համար, — առում է լարախաղացը, ակնարկութել հանդիսատեսներից ամենահարուստ մեկնեն
— Տո՛, դեզ, շան այս զուռաշի, զուի 198:

198 Բայր Հ. Մալխանյանի (Ա. Բոլուն, նշվ. աշխ., Հ. 1, էջ 179—180):

Նազարածուն զնում կանգնում է Սարգիս ազայի առաջ, թե՝ վճարիր վճարը նա Հասարակությանը ներկայացնում է եղածից մի քանի անդամ ավել, որպեսով պատվախնդրություն արթացնի հանդիսականների մէջ¹⁹⁹:

Ներկայացնումը տեսամ է մոտ շրու-հինդ ժամ, փոքր ընդմիջումներով, որնց ընթացքում ծաղրածուն նոր ինսերմեղիաներ է հորինում, կամ լորախաղացն է նրան դրսուրովիլու առկանքը տաշի: Բայ Արշակ Սարգսյանի պատմածի²⁰⁰, լարախաղացը մի փաշտ է տնկել տալիս դեմքին, մայստի զըլ-խին զնում մի թասակ («արախչի») և ծաղրածուն առում, թե Պարտեաստանից քըլիշ («պուշչի») է եկիլ, զնա կամ Ցեմը է ուղիր, կամ «Խարշը» տար:

— Նայի՞ր, ահանո՞ւմ ես, քուովք զիսին, քանզիրի տակ նստած, ոպասում է:

Յաղցածուն մոտենում է վայշտին.

— Բարի Հաջողում զուռաշի, բարի Հաջողում Գուլա՞շ ես ուզում: Գուլաշ կկանչես հասող, բայց իմացիր լի պարմակ, մեշքիս շոնհես, ուղիցու չը ունիս, ձեռքից չը ունիս...

Զուռանակի կոփի եղանակ է վշտում, ծաղրածուն մի ահամբան է հորինում՝ կոփի է բանում փացտի համ, վերշը զետին փովում:

— Ասո կուրեց, ոտո... Մեզի՞ւ, մնայի ընկիր...

Ներկայացնան ընթացքում ծաղրածուի կորը զնալով փոքրանում է, լարախաղացինը մէծանուած: Հնարքները զնալով բարգանում են: Լարախաղացը կանգնում է սինիի վրա, սահում լարի վրայով, սուքիրը զնում է պղնձե կաթսայի մէջ, զնում փոքրը թուլքներով, սուքիրին զանակներ է կապում ու

199 1941 թվի գարնանը Երևանի Յոնշալը կոչված թաղում (ներկայիս «Հայրենիք» կինոթատրոնի բակի կողմում). Մեղրակ Սարգսյանի փուզոց ելալիթ էր ունենում մի լարախաղաց: Մաղրածուն զույնզգուցի խարութով, երկար բեղերով ու հակախական կարծիր բթով մի մարդ էր, աղմբեկու ու աշխույժ: Ես, որ, ձեզ տարեկան էի այդ ժամանակի, մնական նրանց է պարզեցի վիճակախաղի մի տուժ՝ կարմիրանահարինի պատկերութ: Տուժութիւնից ինչպես հատայացն էիցաց, ժամկետաց լր ու շաման: Մաղրածուն վերցնելով բեղանակի պատղակ բարձրացրց, «Արդիպացի», արդիպացի, արդիպացի:

200 Ը. Լուսաւան, նշվ. աշխ., էջ 40—41:

պարում, պարան է կապում ոտքերից՝ ճոճանակ սարքում, մի երեխայի նստեցնում ճոճանակին, ինքը պարում է վերեւում, երեխան ճռճվում է ոտքերից կախված։ Վերջապես, սա դարձյալ ծիսական գործողություն է, նստում է պարանին, ոտքը դնում ոտքին, ձեռքերն ազատ թողնում, «զոհի գոռը վեր է առնում, մորթում, բերթում, մի բույր կարում իրեն է պահում, մշուս մասը ցած տալիս»²⁰¹։

«Ասոծո զառ» զոհարերվում է երկնքի ու երկրի միջև։ Սա արել է Մուշից եկած լարախաղաց Հաջին։ Ավանդությունը, թվում է, պետք է հին լինի. այդ են ակնարկում արտաքին նշանները։

Լարախաղացները, ինչու հայտնի է, երույթ են ունեցել մեծ մասամբ կրոնական տոներին, վանքերի ու եկեղեցիների մոտ։ Խաչելության ու հարության դադարացները կերպավորող դէմքը կարծես հանդես է գալիս կիսաստվածության դերով, և պարանը, որ առաջխարանքի ու ինքնակեղեցմտն միջոց էր, ինչպես տեսանք Ասկերերանի վարքում, դաշնում է նաև զոհարան։ Ճակատագործ գատապարտված, քրիստոնեական սրբի հետ խոսող, իր անձը նրան նվիրաբերած հերոսը զոհարերության վաստով խորհրդանշում ու հաստատում է իր ու երկրային վիճակը։ Ուստավորի համար Եղիշ է մեծ շնորհ, երբ իր զոհարերությունն իրականացվել է նրա հրաշագործ ձեռքավ։ Բայց խաղի խորհրդապաշտական բարձրակությունը միախառնվել է վվարեւության ու ժամանցին (սա թիրիս հետմուսական հիշողություն համարենք), երբ լարախաղաց Հաջին՝ Քրիստոնի պերկազմնին ուխտ գնացողը, վեր է առել կրակարանը, ոչ որպես ատրուշան, ոչ էլ նույնիսկ բուրժառ կամ կերան, այլ խորովածի ռմանդար, միսր կտրատել, շարել շամփուրին, խորովել ներքեւում իանդնածների առջանար հայացքների առջև ու բաժանել ընկերներին²⁰²։ Սա լարախաղացի հմտության բարձրակետն է, որ տեսնում ենք նաև Կ. Պոլսի «Արամյան թատրոնում», անցյալ դարի 40-ական թվականներին²⁰³։

201 Վ. Բրյան, նշվ. աշխ., Յ. 1, էջ 183—184։

202 Նույն տեղում։

203 Վ. Աննայն, նշվ. աշխ., էջ 172, 173։

Խաղ կրակի հետ բավական տարածված է նոր և նորագույն կրկեսային արվեստում։ Պետք է կարծել, որ միջնադարում դա չեր կարող լինել ինքնանպատակ ու անխորհուրդ եղել են լարախաղացներ, թիրևս հաղվաղեալ, որ երբեմն վայր են գրել հավասարակշռության ձողը և պարել զույգ չափրով²⁰⁴։

Ապաշխարանքի ու զոհի զաղակարը նշմարվում է նաև չետեցալ փառաւում։ Ուխտավորներից մեկը երեխային դնում է լարախաղացի ուսերելին կամ կապում մեջքին, այսինքն՝ նվիրացերում է խաղին։ Դա առել են խորին երկուողով, խաչակինքնակամ ու լալով, հույսը սուրբ Կարապետի զորովիքան վրա երեմն այդ արել է ծաղրածուն, երեխային վկրցնելով անսպառելիութեն կամ բռնությամբ։ Լարախաղացը երեխային ուսերելին առած հասել է լարի կենարնել և աղոթք ուղղել իր սրբին։

— Մու ուղիղան սուրբ Կարապետ, պահական եղիք, ոք ևս էս երեխին առաջ սալամութ տամ իք մորը²⁰⁵։

Ճակատագործ դատապարտվածը սրբի ոտքերին է ձևացնում մանեղ մանեաներ, նրան էլ է բաժին հանում սրբի զորովիքունից, հաղորդակից դարձնում աստվածացին հրաշրին։

Աղուրդականի ակնարկները շնորհանում են, երբ ամեն ինչ վկրցնում է բարնհացաղ (որից կերպ չի եւ մինում), և ծաղրածուն Հորինում է մի նոր խաներմենիքան կարապացը նստում է Հանգստանալու, ծաղրածուն հրաժարում է երաժիշտներին նվազել քոչարի և զնում, կողշում է կանանցից, թե՛ եկեք պարենք։ Ոչ մեկը չի պարում ծաղրածուի հնու Շաղրածուն նստում է վեմնին ու ոկում օդրաւ։

— Փաճիանին սիրում են, ինձ չեն սիրում, նո կզնամ, չորս կենկնամ, գանակ աղիք, և՛ ինձ մորթին ևս նոսիք ինձ չեն սիրում...։

Եղ զիմում է լարախաղացին։

204 Այս գառափակ ակնարկները են ազետական տարբներին պրանելու մեջնությունը (1941 թ.)։

205 Ը. Անդրոնիկ, սրբ. աշխ., էջ 49։

— Փաջեւան ախպէր, ևս կնանիք ինձ չեն սիրում: Վաշ, զող ու մո-
խիքը զլիս... ես ի՞նչ անեմ, դու ասա, ես ի՞նչ անեմ, ես ո՞նց ապրեմ,
զնամ չո՞ւրն ընկնեմ, թէ՞ դանակն առնեմ, ինձ սպանեմ:

Լարախաղացը միսիթաբում է նրան.

— Չե՛, չե՛, ախպէր չան, մի խեղդի, քեղ համար կին կգտնենք, կա-
մունահաւ, Յալունչի ախպէր... Դու հունար ունեցիր, հունար, իմ հու-
նարը...

— Թողեք, ախպէ՛ր, թողեք, զնում եմ չուրն ընկնեմ:

Գնում է, չեն թողնում, բռնում են:

— Թողեք, զնում եմ...

Բաց են թողում, չի գնում:

— Փի՛, — դիմում է զուսնաշուն, — փի՛, ախպէ՛ր, ևս քնզ գինի և՛
խմացնելու, նկագիք, սիտի պարում: Փափուրի ևմ պարում, զրլի՛...²⁰⁵

Սաղբածուն պարում է իր «գարգը», իսկ լարախաղացը
բարձրանում է հսկա ոտնացուպերի վրա ու «երկնքից» նա-
յում իր գետնաքարը ծառային:

Ասպետի ու ծառայի փոխհարաբերությունները ծանոթ
են զբականությունից ու թատրոնից. տիպաբանական զու-
գացները բավական շատ են, և ակունքը, ինչպես տեսնում
ենք, խաղային-բանահյուսական է:

Լարախաղացությունը, որպես միջնադարյան ժողովր-
դական միբակլ, չունի ֆարուշ՝ զրությունների պատճառա-
հետեւնքային ընթացք: Դա անկախ էպիզոդների շղթա է,
որի սկիզբն ու ավարտը տեսնում ենք հնարների աստիճա-
նական բարդացման մեջ, որ նշանակում է հերոսականի վե-
հացում, ասուվածայինի ու հրաշալիի հաստատում, և ծաղ-
րածուի զերի նսեմացման մեջ, որ նշանակում է առօրեակա-
նի պարաւթյուն: Սա, իհարկե, պայմանական վիճակ է: Երկ-
նայինը հաստատվում է վեհացումով, երկրայինը մաքրվում
է ծիծաղով: Երկու արխետիպէրով մարմնավորված աշխար-
հը միասնական է ժողովրդի գեղարվեստական գիտակցու-
թյան մեջ: Ասպետի ու ծառայի երկխոսությունը երկու խու-
լերի վեց շէ, այլ կենսականորեն պատճառաբանված սկըզ-

²⁰⁵ Նույն տեղում:

բումքների ներքին կապ, մեկի առկայությունը մյուսի մեջ:
Պարզ երկում է Դոն Կիխոտ և Սանչո Պանսա հարաբերու-
թյան բանահյուսական-խաղային մողելը, որպես ի սկզբանե
տրված բնական վիճակ: Կարգալով Սերվանտեսի վիպը,
տեսնում ենք, որ գեպի երկնայինը ձգտող ասպետն աստի-
ճանաբար մտածենում է երկրային ողջախոհությանը, իսկ նրա՝
հողին կառչած ծառան բարձրանում է առօրեականից, ըմ-
բրունում անձնապո՞ւթյան, որպես բարձրագույն առաջինու-
թյան, իմաստը, թեպետ այս հավասարակշռության մեջ
նրանցից ոչ մեկը չի զոհում իր էությունը: Կյանքը, ըստ միջ-
նադարյան պաշտոնական հայացքի երկրեսո է, բայց ոչ
միասնական. մի կողմից՝ ներդաշնակություն ու կարգ և վե-
րին իրավունք, մյուս կողմից՝ խախտվածություն, աբուրդ,
ծաղը ու կատակ: Սա նաև, ինչպես նկատել ենք, Բախտինի
պատկերացրած ամբիվալենտ վիճակն է: Միջնադարի ժո-
ղովրդական արվեստում կյանքը պատկերանում է որպես
հակադրամիասնական, անխօնի վիճակ: Լարախաղացու-
թյունը դրա ենթագիտակցական խաղային մողելն է, նախա-
խորհրդանիշը Դոն Կիխոտ և Սանչո Պանսա, իիր և Ծաղրա-
ծու, Դոն Շուտան և Սգանարել, նեշշաստիլվցե և Սշաստիիվ-
ցե դիմակայված զույգերի:

Միջնադարի մարդկային իդեալը ասկետն է՝ իր անձը
աստծուն կամ սրբությանը նվիրաբերած անձը: Լարախա-
ղացությունն այդ իդեալի ժողովրդական մեկնությունն է.
Խաչի զաղափար և երկրային լավատեսություն, զոհի զաղա-
փար առանց զոհաբերության, ապաշխարանքի զաղափար
խաղային տարեքքի մեջ: «Կարեկցանքը խաչ չէ՝ արդյոք, —
ասում է նիցշեի «Զրադաշտը», — որին բնեովում է ամեն ոք,
ով սիրում է մարդկանց: Բայց իմ կարեկցանքը խաչելություն
չէ»²⁰⁷: Այս հայացքին է կարծես համերաշխվում հրաշագոր-
ծության ժողովրդական ասպետը:

²⁰⁷ Փք. Հակոե, Տակ գործա Յարաւետրա, ԾՊԵ., 1913, էջ 28:
Համ նիցշեի մեկնության, լարախաղացն այն մարդն է, որ վտանգավոր
վիճակից ստիգմում է իր ասարինությունը, բայց նա տապալվում է ու
չափավագում, եթե լարի վրա է կինում ծաղրածուն, որպես անհերթեթ-
յան ու անհերթաշնակության մարմնացում: Նիցշեի Զրադաշտը թաղում է
«գերշին մարդուն», որն ուզում էր հաղթահարել կենդանականից դեպի

Մարդու մեխանիկական հավասարակշռությունը գետնից վեր, հենման ամենահաստատ կետում թվում է սոսկ խաղ ու զվարժալիք, կարծես պարզունակ խարեւություն։ Հսահեւթյան, դա խաղային իմաստավորումն է և սիմվոլացումը տիեզերքի, ամենամեծ ամենաանտարակուսելի ճշմարտության։ Ըստ ժողովրդական կրոնաբրության, դա ճանապարհ է ղեպի հայերժական վիճակի, նշանակում է համամասնությունների ճշգրիտ բաժանում, արդար դատ, տարածեալ վիճակների ու զգացումների համառելում, որը միջնադարյան մարդու հայացքում հանդում է աստվածային ճշմարտության՝ բարոյապես արդար վիճակի։ Դրա երկրաշահական գետերմինանտներն են խաչը, որպես չորեքկողմյան աշխարհի նշան, և շրջանազիծը (ըստ Պլատոնի՝ տիեզերքի զընդաձէ ոլորտը), որպես աշխարհի չորս կողմերը կատող և նույն կետին վերադարձող անվերջանալի ուղի։ Երկրաշափական երեք ձեւերը՝ խաչը, շրջանազիծն ու քառակուսին, որ զրված են ճարտարապետական ստատիկայի հիմքում և հայ միջնադարյան ճարտարապետության մեջ առավելագույնս ակներկ են, ինքնին մզում են հավասարակշռության ու հավերժականության գաղափարներին։ Կարախաղացությունը դրա մարդկային-հոգեբանական և բարոյագեղարվեստական կերպավորումն է, չշշենք նաև, որ հրաշագործության ասպետը ողջույնի աղոթքից առաջ չորս անգամ խաչակնքում է, ուղղվելով նախ ղեպի արևելք, ապա՝ արևմուտք, հյուսիս և հարավ։ Խաղի ամբողջական պատկերում կա նաև այն ակներկ իմաստը, որ մարդը վտանգի եղրին, անհաստատ բարձրության վրա (ինչպիսին է կյանքն առհասարակ), իր բանական վարքագծով կարող է ափելի կայուն վիճակում լինել, եթե չասենք՝ ավելի գեղեցիկ ու վեճ, եթե համերաշխ է տիեզերական հավասարակշռության օրենքին (թեպես դա կոչվում է «սուրբ Կարապետի ղորութեն») և չգտնել հենման կետ հաս-

մարդկայինը ձգլող կամուքը։ Այստեղ այլաբանական ձևով մերժվում է խաչաձի բարոյական անմահությունը, նիշշեի մեկնությունը քիչ նյութ է տալիւ լարախաղացության, որպես ժողովրդական միքակի, մեր բմբռնչանը։ Քրիստոնեական խորհրդանիշերի ժողովրդական իմաստավորումը, կարծում ենք, ավելի խորն ու բազմաշերտ է։

տատուն ու անվտանգ տեղում՝ ամուր հողի վրա, եթե բանական ու արդար չէ, չի նայում երկնքին։

Ճեծության ու սրբության գիտակցությունը կրելով, հրաշագործության ասպետը ձգտում է վեր և սեփական կամքով կանգնում ֆիզիկական կործանման եզրին, հաստատում անմահության գաղափարը, ինչպես բոլոր ողբերգական հերոսները։ Իսկ նրա «զինակիրն» ու բարեկամը (ոչ թե թշնամին, ինչպես ասում է նիշշեի «Զրադաշտը»), իր արտաքուստ հակոտնյա վարքագծով, խորհրդանշում է երկրի ուժն ու ձողողականությունը և երկինք նայող հերոսի նյութական հենակետն է, առօրյա բանականության թատերականացված նշանը։ Գաղափարի աշխարհը վեճ է, ահավոր, ազատագրրված ու ողբերգական, իրերի աշխարհը՝ կաշկանդված, գիտնաքարշ, անխորհուրդ ու կատակերգական, և երկուսն էլ, ըստ ժողովրդական դիալեկտիկայի՝ հակադրամիասնության տարերային գիտակցության, անխպելի են ու միասնական։ Դաղափարը լուսավոր է և անյութ, հողը ամուր, նյութեղեն ու խավար, գաղափարի գլուխը երկնքում է, ոտքերը հողին։

Ուժի է ողու կաշկանդվածության դրաման տեսանք Շիդուրի առևտսպելում, ազատագրման գաղափարը՝ կուսավորչի հաստատած «սուրբ Կարապետի տոնում»։ Այս անտինոմիայում Հրաշագործության ասպետը, որպես քրիստոնեության պատգամախոսի ուխտավոր և նրանից մկրտված, ներկայանում է որպես ազատագրված ողու խորհրդանիշ։ Եթե Խորհրդապատճենը ենող ջահակրի պատկերում խոսում է կամքի ու ողու քրիստոնեական աղատագրման գաղափարը և իր թիկունքում ունի պրոմեթեսյան խորհրդանիշի Տերտուփիանոսի մեկնությունը²⁰⁸, ապա այստեղ գործում է ժողովրդական ինտուիտիվ հայացքը, և դրանով էլ լարախաղացությունը դառնում է մի նոր «առասպել տօն», և հրաշագործության ասպետի արխետիպը՝ շղթայված ուժի հակոտնյան։ Ազա-

208 Հմմտ. Ա. Լոսեվ, նշվ. աշխ., էջ 246։

տագրվածն այլիս ոչ Շիդար է, ոչ էլ Պրոմեթես: Պարող ասուզը (Նիցշեի համեմատությունն է) արդեն ուրիշ խորհրդանիշ է, ուրիշ հուզական պատկեր: Դա հեթանոսական միստերիայի ավարտն է՝ ժողովրդական լավատեսությամբ ու կենսասիրությամբ, մարդկային կյանքի հաղթանակը բնության ուժերի հանդեպ:

Ե Զ Բ Ա Փ Ա Կ Ա Ւ

Հայ հին և ժողովրդական դրամայի տարրեր ժամանակներում վկայված, հավանական և ակներեւ տվյալները փորձեցինք համեմատել բայտ պատմատիպաբանական գծերի, թեմատիկ և ձեռական հատկանիշների: Հաջողվեց արդյոք շոշափել հին դրամայի երակը, տեսնել նրա փոխակերպումները, թե՞ մնացինք կամացական դիտումների և սուրյեկտիվ ենթադրությունների ոլորտում:

Ծիսական ավանդներում և խաղային բանահյուսության մեջ գժվար է ցույց տալ մինչև վերջ գիտակցված միտումներ: Բանահյուսական դիտակցությունը մեկ անհատի չի պատկանում, այլ սերունդներին: Այդպես է նաև ժողովրդական դրամայում, որն ամրակայված ու անփոփոխ արժեք չի եղել, այլ ընթացք, խաղային-ծիսական սովորութների կենդանի շարժում: Այսուեղ կան խաշաճնումներ, իմաստափոխված նշաններ, մոռացված խորհրդանիշեր և մյուս կողմից անկախ երևակայություն, ուղիղ և ծուռ հայելիներ՝ մեկը մյուսում արտացոլվող: Սա ի վերջո մի լարիինթոս է՝ անտեսանելի անցումներով, անհուսալի փակուղիներով, բազմահարկ, արտաքուստ խառը և ներքուստ կարգավորված, բայց մեզ համար շատ կետերում անբացարելի աշխարհ:

Կրկնվող ու փոփոխվող ծեսերի, տարերային խաղի և նրանց օբյեկտիվ բովանդակության միջև հնարավոր չէ ու շպհտք է որոնել ուղղակիորեն գիտակցված կապեր: Ստեղծագործողը մի տեղում աղատ է, մի տեղում ավանդապահ և անգիտակ այն իմաստաբանությանը, որ մենք ենք փնտրում կամ վերստեղծում: Խորհրդապաշտական նշանների կողքին առկա են նաև պատահական գծեր, որոնք փոխանցվել են

սերնդից սերունդ պարզ կրկնությամբ, որպես սովորույթ, առանց հոգեոր բովանդակության լիակատար գիտակցման: Ավանդությունը բոլոր դեպքերում մեղ համար թանկ է և ունի դեռևս անժանոթ, անմեկնելի շերտեր՝ մեր աշքին ու հոգուն անտեսանելի:

Մնկնությունները, որոնց դիմեցինք, կապերը, որ փորձեցին տեսնել, կարող են վիճելի լինել: Ավանդողներից ոչ մեկը չի նախատեսել ուսումնասիրութիւն խնդիրները: Դրանք առաջացել են ինքնին՝ նյութի քննության ընթացքում: Հետազոտվող երեսութիւն էին է, խորն ու հարուստ և կարող է հետազայտում մղել նոր մեկնությունների:

Ուսումնասիրության եղանակը մեղ թելադրել է հեռանալ ժամանակային կապերից, հետեւ նշանների ու սիմվոլների տրամարանությանը: «Տիպաբանությունը չեղոքացնում է ժամանակը» (Կ. Լիփ-Ստրոսս), հնագարյան նշանը հայտնվում է նաև իր ժամանակից դուրս, և նոր թվացող երեսութիւնաստավորվում է անսպասելիորեն հին լույսի տակ: Սա իրողություն է, երբեմն բավական տեսանելի: Հին խորհապահական դրաման, քրիստոնեական ծիսակարգը, ժողովրդական դատական խաղերը, իրենց համանման ու տարրեր պայմանաձևերով հնարավոր է, որ սերում են տարրեր ակունքներից, բայց, ինչպես տեսանք, գտնում են ընդհանուր հենակետեր, միավորվում ծիսական ընդհանուր աղերսներով, և բոլոր դեպքերում գործում է ժողովրդական աշխարհայացքը: Մի տեղում կաշկանդված ուժի և սպասման գաղափարն է դրամայի բուն հիմքը, մյուս տեղում՝ ազատազրվածության, մի տեղում՝ դատ մյուս տեղում՝ դատապարտվածության: և բոլոր դեպքերում՝ անձի ու միջավայրի, մարդու և աշխարհի, անհատական կամքի և օբյեկտիվ վիճակների փոխհարաբերություն: Այս ամբողջը, ինչպիսի մեկնությունների էլ դիմենք, կազմում է դրամայի բանահյուսական-խաղային արմարտը, նրա գոյաբանությունը և մեկնահիմքը:

Չունենալով՝ որևէ կանխակալ դրույթ, ինչ-որ բաներ ամեն գնով ապացուցելու տրամադրվածություն, ունենք, այնուամենայնիվ, մտահայեցողական մի պատկեր, որ հենվում

է արտաքին շերտում պարերգական դրամայի հայտնի պայմանաձևի, ներքին շերտում՝ խաղային գիտակցության, որպես թատերական արվեստի նախատարրի վրա: Իսկ երեսութիւնը ընդհանուր պատմական իմաստը ոչ այնքան առանձնահատուիլ ու անկրկնելի, որքան օրինաշափական և ունիվերսալ նշաններում է: Ազգայինը մնում է ազգային, ու տեսանելի է որպես գույն, խոսք, բնավորություն, վարքագծի երանգ, հույզի դրսնորման կերպ: Թեմաները սակայն մնում են համամարդկային ու ընդհանրական, որպես առասպելաբանական տրիած պայմանաձևեր:

Փորձել ենք առանձնահատուկը մեկնել օրինաշափականի լույսով: Այս է եղել մեր քննախոսության և՛ ելակետը, և՛ նպատակը:

Զծավալվենք նոր փաստարկումներում: Դրանց հնարավորությունը բացառված չէ: Բայց համոզվելու համար թերթենք համաշխարհային զրամայիք պատմությունը հնադարից միջնադար և նոր ժամանակներ:

ԱՌԱՍՏԵՎԱԲԱՆԱԿԱՆՆ, ՎԻՊԱԿԱՆ ԵՎ ԽԱԶԱՐԻԱՅԻՆ ԱՆԱՒՆՆԸ

Արուկիլ — 37
 Աբբահամ — 186, 187
 Ագավե — 108
 Ակամ — 199
 Աղողիք — 209, 210
 Աղնիսիս — 52, 54, 55
 Աղաղել — 186
 Աժդահակ — 24, 34, 36, 43, 45, 48, 49, 65, 66
 Աշապեր — 71
 Ահմատ խան — 215
 Աղա Խաղար — 232, 239, 244
 Աղեքսանդր (վիպական Մակեդոնացին). — 236
 Ամիրանի — 37, 38, 58, 69
 Ամէնդուս — 49—52, 64
 Ամրան — 37
 Անահիտ — 60, 72, 79, 80, 86, 89, 96
 Ապոլոն — 124
 Աստված (վիպական դեմք) — 38, 58, 186
 Ատափս — 140
 Արա — 52, 55, 92
 Արամադդ — 45, 79, 96
 Արգավան (Հմմատ, Արգամ) — 47, 49, 55, 64, 65
 Արդիսուուրա — 86
 Արիս — 138, 139

Արշաթոթոշ — 244
 Արտաշես — 42, 43, 48, 55, 81, 257
 Արտավազզ (Հմմատ, Եիդար) — 25, 26, 32, 37, 39—43, 45, 47—51, 57, 59, 60, 66—70, 72, 74, 78, 79, 81—83, 86, 95, 100, 172
 Բաթրազ — 30, 31
 Բաքոս (տես Գիոնիսոս)
 Բել — 184, 185, 228
 Բյուրասպի Աժդահակ — 25, 33—36, 66
 Գայա — 139
 Գայանե — 139
 Գիրուտա — 49, 63
 Գլուխամել — 150
 Գիսանե — 92
 Դանզիդ — 244
 Դավիթ (Քիւլը) — 71
 Դավիթ (Սասոնցի Դավիթ) — 246—248, 256
 Դիկո — 232—237, 248
 Դինիսոս (Բաքոս) — 125, 127—129, 158, 164, 179, 181
 Գոն Ժուան — 281

Գոն Քիշոս — 236, 281
 Եսավ — 199
 Զոհակ-Դահակ — 34
 Զևս — 30—32, 38, 58, 105, 128, 187
 Էնիլ — 185
 Իսահակ — 186
 Լիր — 186
 Խեշան — 219
 Խեստակով — 174, 243
 Խոզենի — 244
 Խոլբաշի (տես Կողբաղի)
 Կայեն — 199
 Կենոսոռոս Պյուրիդա — 25, 31, 33, 66, 67
 Կողբաղի (Խոլբաշի) — 247—252
 Կուրդակոն — 30
 Կրելինսկի — 243
 Համես — 29, 58, 94, 157, 258
 Հալիկ — 228
 Հելիոս — 54, 55, 66
 Հերմես — 29, 31, 184
 Հեփեսոռոս — 30, 32, 34, 35, 38, 67, 87, 124
 Հորացիոս — 157
 Հուզա — 199
 Հրուդեն (Ֆերիդոն, Ֆրիդոն) — 33—35, 44
 Հազարոս — 172, 173
 Հռոմեուզա — 244
 Հորոնթի — 244
 Հուզզոն — 244
 Մամբրին — 236

Մարկոս Կոալեհիլ — 37, 40
 Մաքսիմիլիան արքա — 209, 210
 Միթրա (տես Միհր)

Միհր — 26, 30, 33—35, 37—39, 60, 67, 83
 Մհեր — 26, 31, 32, 37—40, 58, 59, 94, 137
 Մարա Մելիք — 246, 247, 249

Նեսլուստիկցի — 171
 Նոյ — 150, 165

Շահ Թահմազ — 236
 Շահ Խամայիլ — 236
 Շիդար (Հմմատ, Արտավազ, Արտավազզ) — 26, 37, 41, 42, 45, 51—54, 59, 62, 64—73, 75—77, 83—86, 89, 91, 92, 94, 96, 97, 113, 133, 135, 138, 141, 145, 171, 172, 188, 196, 258, 261, 283, 284
 Շիդար — 71

Ողիսկա — 150

Ուստիան — 244

Զախ-Ղախ Թագավոր — 243
 Զացկի — 50

Պան — 181
 Պենեոպե — 150
 Պենթես — 108
 Պրոմեթես — 27, 28, 30, 31, 33, 35, 38, 46, 57, 65, 67, 82, 83, 86—88, 129, 237, 284

Ոուանդ — 65
 Ոոկապ — 37

Սաղայել — 171
 Սաթենիկ — 47—49, 65
 Սալոմե — 127, 132, 133
 Սանասար — 58

* Ցանկում ներակայացված են նաև վիպականորեն ավանդված որոշ պատմական անուններ

Սանը Պահսա — 281
Ազանարել — 281
Այլվանուս — 181
Սուրբ Կարապետ (հմտ. Գի-
սանե և Հովհաննես Մկրտիչ՝
Սուրբ Սարգիս — 92
(նաև անձնանունների ցանկում)
Աշաստիվցել — 281
Ապանդիար (Բոխանդիար) — 25,
35

Աշճազն — 30, 32, 54, 58

Քամ — 199.

Քաջ նազար (հմտ. Աղա նա-

զար, Դժիկո) — 232, 233, 238,
240, 276
Քարոն — 151
Քյոռոզի — 238
Քրիստոս (տես Հիսուս Քրիստոս՝
անձնանունների ցանկում, պատ-
մա-ավանդաբանական և այլ ա-
ռումներով)

Օտա — 142, 172

Յավն — 181

Յենդոն — 49, 65

Յերիդոն, Յրիդոն (տես Հրու-
դեն)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Արգար Ե. — 14
Արգարյան Գ. — 228
Արելյան Մ. — 21, 43, 46, 49,
53, 57—59, 67, 68, 112, 193,
251, 252
Արիլի Հ. — 69
Արովյան Խ. — 52—54, 69, 135,
207, 225
Արահամյան Ա. — 198
Արթանգեղոս — 6, 98, 99, 134,
139, 240, 142—144, 180, 183,
185
Արոնց Ն. — 99, 134, 136, 138,
140, 141, 180, 191—193, 273
Արանագինես Էպիւկոսո (Ա.
Արանագինես) — 100, 269
Արեքսել Միխայլովիլ — 209
Արիշան Գ. — 64, 79, 171, 168,
181, 200
Ակինյան Ն. — 34, 162
Աճառյան Հ. — 13, 57—60, 63, 65,
66, 74, 75, 81, 96, 144, 161,
188, 189, 197, 226, 261
Արկազովսկի Հ. — 152
Անակ — 137

Անանիա Շիրակացի — 180
Անանուն (մեկնիլ) — 192
Անանուն (պատմիլ) — 228
Անաբսագորա — 150
Անդրսին Հ. — 243
Անդրիկյան Ն. — 64, 65, 67
Անիկոս Ա. — 20
Անտոնիոս — 57, 110—113
Աշխագար թագավոր — 65
Ապոլինար Լաոդիկեցի — 149
Ապոլոն Հոռոպասիցի — 184
Ապոլոնակայա-Ստրավինսկայա
Ի. — 22
Առաքել Սյունեցի — 192
Ասսավազոր քուրմ — 60, 86,
95, 101
Ավոտափին (Ա. Օգոստինոս) —
150, 196
Ավդալբեզյան Թ. — 26, 28, 31,
32, 37, 54, 59, 60, 65, 70
Ավդալբեզյան Մայիս — 40, 122,
123
Ավերինց Ա. — 195
Արանգսկայա Օ. — 187
Արգամ — 55, 47, 48

Արդարուն կառակերգակ (Ա. Ար-
դարուն) — 120—124, 133
Արիստոտել — 10, 22, 23, 72,
102, 110
Արիստոֆան — 204
Արոակ Բ — 182, 183
Արշակունի Ա. — 18, 20, 161,
162
Արտաշես Ա. — 55, 96
Արտավազդ Ա. — 55
Արտավազդ Բ. — 55, 56, 59,
66, 98, 110—113, 140
Արշատյան Ս. 267
Աֆրահատ — 168

Բաղալյան Հ. — 96
Բախտին Մ. — 220
Բարդածան — 95, 96
Բարդուղիմես առաքյալ — 89
Բարսեղ Կեսարացի — 149, 152
Բարբոռ Փ. — 13, 31
Բողոքն Վ. — 10, 14, 18, 20,
26, 161—166, 168, 170—172,
177, 182, 184, 205, 207, 225—
229, 231, 233, 234, 236, 246, 257,
259, 262, 265, 266, 270, 276,
278
Բերկով Պ. — 209
Բհարաթ — 14
Բողորի Մ. — 31, 38
Բունիժ Մ. — 131
Բունին Ի. — 29
Բուլակ Ֆ. — 49
Բյութանացի — 194

Գաթրձյան Հ. — 145, 150, 193
Գահվեճյան Պ. — 261
Գայլ Վահան — 228
Գայոս Պակիանոս — 107—109,
230, 349
Գեղեր Հ. — 228
Գնիլ. — 21
Գսով Ն. — 174, 234, 235
Գոյան Գ. — 21, 92, 108

Գոլոսովկեր Յ. — 36
Գուրկիլ Ա. — 125, 226, 267,
274
Գրաբար-Պասեհկ Մ. — 107
Գրիգորենով Ա. — 50
Գրիգոր Անավարդեցի — 44
Գրիգորիս Քորեպիսկոսու — 183
Գրիգոր Լուսավորիլ — 25, 30,
35, 41, 42, 71, 73, 75, 96—100,
134—139, 141—146, 158, 183,
185, 266, 268, 283
Գրիգոր Խլաթեցի (Սերենց) —
25, 41, 44, 45, 72, 85, 86,
Գրիգոր Մագիստրոս (Պահաւ-
ումի) — 25, 27, 33, 44, 61—
63, 66, 71, 81, 98, 171, 172,
189, 192, 193, 200, 228, 247
Գրիգորյան Գր. — 44
Գրիգոր Տղա — 76
Գրիլարաբյր Ֆր. — 20
Գևորգյան Ն. — 273

Գանդաման Մ. — 37
Գանեմ Բ. — 29
Գանտե Ալիքիկրի — 142, 152,
157, 159, 185, 186, 196, 206
Գավիթ Անհաղթ — 267
Գավիթ Զելթունցի — 192, 200,
201
Գավիթ քերական — 192
Գեմիրձյան Գ. — 232, 235, 238,
239, 241, 243—245
Գիոլեստիանոս — 126, 128
Գիոնիսիոս Թարկացի — 80,
187, 190, 198, 201
Գիոն Կասիոս — 110, 111
Գյումեզիլ Ժ. — 30, 31
Գորի Գ. — 81
Գվորեցի Ի. — 112
Գրուժինինա Ա. — 126

Եղիկյար (Ճողովրդական Խաղար-
կու) — 214, 220
Եղնիկ Կողբաչի — 44, 45, 70,

71, 78, 171, 181
 եղբ կաթողիկոս — 101
 հասլիք մարգարե — 127
 հասախ Նշեցի — 192
 հվարիենով Ն. — 179, 186, 187
 հվարիպես — 28, 72, 98, 108
 հվարիփոս Կեսարացի — 74, 126
 հրեմայան Ռ. — 61
 հիփեն Ասորի — 179

 Զաքարիա Քանաքեռցի — 202,
 203, 205, 206, 208
 Զենոն Գլակ — 269
 Զեթունյան Ա. — 186

 Էլիաս Արիստիդիս — 125
 Էլիոս Ռ. — 104
 Էլին Մ. — 34, 193—195
 Էնգելս Ֆր. — 27, 148
 Էսիլին Մ. — 7
 Էսքիլս — 27, 28, 31, 89, 186
 Էրման Վ. — 13, 16
 Էֆրիկյան Մ. — 61

 Թելլը Է. — 83
 Թիգղին Ջ. — 84, 85
 Թոմանան Ե. — 107
 Թոմոսն Ջ. — 84, 87
 Թոմոսն Ռ. — 144
 Թորոյան Մ. — 147
 Թուլիք Կրպո — 259
 Թումանյան Հովհ. — 232, 233
 235, 240, 241, 243, 244

 Ժուանվիլ ասպետ — 117, 132

 Ինգրդեն Ռ. — 22, 23
 Իսահակյան Ա. — 69, 232, 235,
 239
 Իվանովա Յու. — 54

 Լալայան Ե. — 18, 20, 66, 207,
 259, 260
 Լանգ Ֆր. — 11
 Լարինա Ն. — 11

Լաֆարգ Պ. — 31
 Լինչ Հ. — 152
 Լիսիցյան Ստ. — 207
 Լիսիցյան Արքունիք — 18, 184,
 207, 274, 277, 279
 Լիսիաս — 31
 Լիտվինսկի Բ. — 91
 Լոսկ Ա. — 28, 30, 283
 Լուիալ Յո. — 94
 Լուկիանոս — 31, 35, 36
 Լուկմենկի Գ. — 109, 120
 Լուկոնին Վ. — 37
 Լեբ-Մարոսս Կ. — 27, 286
 Լեռնյան Գ. — 21, 153, 198,
 201, 273, 278

 Խալաթյանց Գ. — 25, 42, 45,
 60, 72, 78, 86, 93, 94
 Խախանով Ա. — 37
 Խաշատրյան Պ. — 118
 Խաչերյան Լ. — 192
 Խաչիկյան Լ. — 91
 Խոշարեկյան Վ. — 178, 232, 271

 Կալիգուլա — 127
 Կանալյան Ստ. — 143
 Կանտ Է. — 36
 Կավաղ Ա. — 34
 Կավե — 32
 Կիրիանոս — 125, 126
 Կիսլյակով Ն. — 34
 Կիրակոս Արևելցի — 44, 79
 Կլավդիոս — 127
 Կլեոպատրա — 111, 112
 Կլուտեր Ալեքսանդրացի — 78
 Կորիլինա Մ. — 126
 Կոզլով Ա. — 93
 Կորդ Վ. — 106
 Կունոս Ի. — 227
 Կրասոս Սարկո — 106, 107,
 109, 203, 230, 249
 Կրիմիկի Վ. — 118, 125
 Կրկյաշարյան Մ. — 111, 229
 Կրպո (Տարոնցի Կրպո) — 247,
 251

Հակոբ Մժբնացի — 52, 268
 Հակոբ սարկավագ — 143
 Համամ Արևելցի — 192
 Համբարձումյան Հ. — 88
 Հայկունի Մ. — 18, 207
 Հայուշ-Ղասիմ — 202
 Հաշի (լարախաղաց) — 278
 Հարությունյան Ա. Բ. — 38, 53,
 251
 Հարությունյան Անթ — 21
 Հեգել Գ.-Ֆր. — 9, 16, 224,
 255
 Հեսիոդոս — 27
 Հետմոն Բ. — 12
 Հերովդես — 127
 Հերովդիադա (տես Սալոմե' ա-
 ռասպելա-վիպական անունների
 ցանկում)
 Հիգարդ Ա. — 192
 Հիսուս Քրիստոս — 38, 40, 44,
 45, 115—118, 121, 122, 124,
 125, 127, 131—133, 143, 144,
 147, 149, 154—157, 164, 183,
 196, 199, 176, 178
 Հյուսիսյան Գ. — 227
 Հովհաննես (Մոկացի Հովհանն) —
 248, 253
 Հովհաննես ալեստարանիչ — 116,
 186
 Հովհաննես Դրասիանակերտցի
 130, 183
 Հովհաննես Երզնկացի (Մործո-
 րեցի) — 191—193
 Հովհաննես Երզնկացի (Պլուդ) —
 192, 193
 Հովհաննես Մկրտչ (Ա. Կարա-
 պետ) — 42, 98—100, 113, 127,
 133, 145, 266—270, 273, 275,
 279, 283
 Հովհաննիսյան Ա. — 135
 Հովհաննիսյան Հ. (Հեղինակը) —
 73—75, 87, 108, 110, 117, 119,
 169, 229, 254, 256, 267
 Հովհաննիսյան Հովհ. — 70

 Հովհաննեսիկոնյան — 198,
 199, 228, 248, 269
 Հովհանն Մայրավանեցի (Մայ-
 րագոմեցի) — 204
 Հովհանն Մանդակոնի — 70, 77,
 155, 164, 204
 Հովհանն Ոսկեբերան — 266, 278
 Հովհանյան Ք. — 122, 155
 Հովհանն Փլավիս — 111
 Հովհանյան Գ. — 248
 Հովհանն Կեսար — 203, 230

 Զեմիդոկ Բ. — 104

 Զաղարյան Ջ. — 126
 Զաղարյան Վ. — 117, 118, 131,
 146
 Զաղար Փարացիցի — 181
 Զաղինյան Ա. — 117
 Զանալանյան Ա. — 82, 143,
 181, 185, 254, 269
 Զափանցյան Գ. — 52—54, 56,
 58, 59, 65, 91, 92, 185
 Զլտճան Ա. — 162
 Զուկո (Ճողովրազան խաղար-
 կու) — 231

 Ճանիկյան Կ. — 262
 Ճեմճեմյան Մ. — 90

 Մաղդակ — 34
 Մածան քրմապետ — 95—97
 Մալխասյան Հովհ. — 20, 204,
 207, 276, 279
 Մալխասյանց Ստ. — 63
 Մայրով Գ. — 196
 Մանուչարյան Ա. — 147
 Մառ Ա. — 28, 85, 195
 Մառ Ն. — 36, 193
 Մասեհյան Հ. — 29
 Մատթեոս ավետարանիչ — 116,
 118, 127, 134, 160
 Մարտինոս Կ. — 122, 155
 Մարկիշ Ս. — 107

Մարքս Կ. — 27, 148
Մաքսիմիանոս — 120, 126, 128
Մելիտինսկի Յ. — 84
Մելիքսեթյան Վ. — 15
Մելիք-Օհանջանյան Կ. — 241
Մելքոնյան Հ. — 95
Մելիք Ա. — 62
Մելոպա Մաշտոց — 151
Միլեր Վա. — 37, 88, 129
Միխայլովսկի Կ. — 130
Մինա Դակիր Թոխաթյի — 162, 173
Միքելանջելո Բ. — 143
Միքայէ Նաղաշ — 165
Մնացականյան Ա. — 132, 146, 147
Մոյրիչ Զ. — 84
Մովսիսկի Ս. — 119, 133
Մովսիս Խորենացի — 21, 25, 33, 34, 45, 53—56, 7, 79, 81, 89, 95—97, 190, 183, 195, 197
Մովսիս Քերդդ — 191, 192, 200
Մորոզով Պ. — 20

Յակոբոս Թ. — 195
Յասն Տրալիմոս — 98, 108
Յարիս Վ. — 70
Յոհանսոն Է. — 7, 48, 117
Յունգ Բ. — 83
Յուսիփ Ֆ. — 60

Նազարեթյան Ա. — 39
Նալբանդյան Մ. — 135
Նախո Քեռի — 253
Նաղաշ Հովհաննեան — 164
Ներսն — 126, 127
Նըսրը — 130
Նիշշե Ֆ. — 181—184

Շահովարյան Ա. — 34, 35
Շարդին Ժ. — 34
Շապուհ Բ. — 140, 182
Շիրազիր Վ. — 11, 29, 52, 58, 157, 205

Շմիդտ Վ. — 28, 85, 195
Շոպեն Ի. — 54
Շուշանիկ (մարտրոսովի) — 114

Ոլիմպիադոս — 193, 193
Ուկան Սա. — 135
196
Որոգինես (Օրիգեն) — 126, 150, 106

Ուելլ Հ. — 27
Ուիլսոն Ջ. — 195

Զամշյանց Մ. — 14
Զեմքերս Է. — 83, 85, 195
Զիկովանի Մ. — 37
Զուզառազյան Բ. — 34

Պանսո Վ. — 11
Պանչենկո Ա. — 133
Պետրոս առաջին — 209
Պետրոսյան Էմմա — 19, 117, 132, 147, 226
Պետրոսյան Տ. — 14
Պիշտասս — 115, 116, 118
Պլատն — 30—32, 150, 195, 166
Պլինիոս Կրտսեր — 126
Պուտարքոս — 106—110, 128
Պոկրովսկի Մ. — 106
Պողարյան Ն. — 63, 171
Պոմաքսաթրես — 109
Պորտեր Բ. — 93
Պորիյուրոս գուսան (Ա. Պորիյուրոս) — 120, 132
Պուշկին Ա. — 144, 235
Պոռշյան Պ. — 20, 161, 207, 264, 265

Զալոյան Բ. — 53
Զահովյան Գ. — 77
Զանելիձե Պ. — 231
Զավախիչիլի Ի. — 37

Ջայթ Վ. — 189
Ջեղեր Գ. — 180, 185
Ջեղին Պ. — 104
Ջետրի Է.—Ս. — 104, 105
Ջորեասոն-Սմիթ Ու. — 84
Ջոժանսկի Ի. — 196
Ջուտար Ը. — 81, 92

Մահակյան Արուսյակ — 53, 252
Մահակ Պարթե — 161, 162, 173
Մայաթ-Նովա — 269
Մարգիսյան Բ. — 144
Մարգիս Վարդապետ — 63
Մարտյան Ա. — 277
Մարտոն Քերական (Գրամատիկոս) — 49—51, 58, 64
Մենկել Հ. — 126
Մերեսու — 228
Մերգանտես — 281
Միմեռն եպիսկոպոս — 90, 125, 133
Միլլակիս — 108
Մոկրատ — 71, 115, 204
Մոֆոկիս — 15, 127, 153
Մորեն — 106
Մվետոնիոս — 106
Մտանիսլավսկի Կ. — 122
Մտեփանյան Գ. — 227
Մտեփանոս Մյունիցի — 192
Մորավերդ Լ. — 12
Մրգանձայան Գ. — 18, 20, 48, 49, 65, 207, 232—234, 236, 241, 251, 252, 256, 257

Վաղարշ Ա. — 21, 95—97
Վաղարշ Բ. — 98
Վայղինգեր Հ. — 93
Վայման Բ. — 84, 87
Վանական Վարդապետ — 4, 45, 52, 57, 66, 91, 172
Վասակ Մամիկոնյան — 182, 183
Վասիլե Վ. — 15

Քառանձեմ թագուհի — 21
Քալսոս Բուզանդ — 21, 182
Քափաղյան Վահրամ — 94, 258
Քալանթար Լ. — 122

Քացական Հ. — 178, 237, 272
 Քլանդե Դ. — 130
 Քսենֆոն — 31, 229
 Օգոստոս Օկտավիանոս — 127
 Օհան Վարդապետ — 251
 Թբիլի Հ. — 101

Ֆիրդոսի — 34
 Ֆրանկֆորտ Գ. — 195
 Ֆրանկֆորտ Ա. — 195
 Ֆրեզեր Ջ.—Ջ. — 50, 55, 83,
 91, 111, 128, 129, 140, 242,
 243, 257, 262, 263
 Ֆրեյթենբերգ Օ. — 195

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5

ՆԵՐԱՃՈՒՐՅԱՆ

Գլուխ առաջին

| | |
|--|----|
| ԾՂԹԱՅՎԱԾԻ ԱՌԱՄՊԵԼԸ ԿԱՄ ՀՆԱԳՈՒՅՆ ԿՈՐՀՐԴԱՎԱԾԱԿԱՆ | |
| ԴՐԱՄԱՆ | 25 |
| Միթուղիական պայմանաձևը | 27 |
| Խենթ արքայապնի դրույցը | 41 |
| Աբտավագդ և Ծի՞դար, թե՞ շղթայված փախստական | 59 |
| Նավասարդյան խորհուրդ | 73 |
| Երբ է ստեղծվել Շիգարի «առասպել տօնը» | 94 |

Գլուխ երկրորդ

| | |
|---|-----|
| ԾԻՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ ԵՎ ՆՐԱ ՄԻջնԱԴԱՐՅԱՆ ՓՈԽԱԿԵՐ- | |
| ՊՈՒՄԸ | 102 |
| Carmina triumphalia | 103 |
| ԱՄՅԱՆ-ՀԱՆԴԻՇԱԲԱՆ և misterium magnum | 114 |
| Լուսավորչի միստերիան | 134 |
| Միւտի կական ողբերգություն | 146 |
| Կատակերգական միստերիա | 160 |

Գլուխ երրորդ

| | |
|--|-----|
| ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ԵՎ ԿԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԵՐԸ | |
| «Քավության նոխագ» | 176 |
| Պարերգական դրաման միջնադարյան հիշատակումներում | 177 |
| «Դամ բեղադ» և «խաղք և խայտառակ» | 188 |
| Վանա Փաշան և Քաջ նազարը | 206 |
| Վիպական անդրադապուներ | 232 |
| Դրամայի խաղային մողելը | 245 |
| Սուրբ Կարապետի ուխտավորը | 256 |
| Նզրափակում | 266 |
| Առասպելաբանական, վիպական և խաղարկային անուններ | 285 |
| Անձնանուններ | 288 |

ՀԵՆԹԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅ ՀԵՆ ԴՐԱՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԵԲԸ

Հրատ. Խմբագիր Ա. Հ. Շալգամյան
Նկարչական ձևավորումը Կ. Կ. Ղաֆաղյանի
Տեխ. խմբագիր Հ. Գ. Հմայակյան
Սրբագրիչ Մ. Գ. Բլեյյան

ԱԲ № 1467

Հանձնված է շարժածքի 7. 06. 1989 թ., Սառագրության
28. 09. 1990 թ.: Զափ 84×103^{1/32} թուղթ № 1: Տառափակակ «դրի
սովորական» բարձր տպագրություն: Պայմ. 16,28 մմ., տպագր.
18,63+2 թ. գոնավոր+4 թ. սև նկար. մամուլ ներկ. Ժամուլ
16,28 Հրատ.-հազվարկ 14,5 մամուլ: Տպագրանակ 1250: Հրատ.
№ 7312: Պատվեր №388: Գինը 3 ո. 25 կ.:

Հ9Ա Հրատարակություն, 375019 Երևան Մարշալ Բաղրամյան պող. 24 դ.
Հ9Ա Հրատարակության տպարան, 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24: